741
L. I. 5

# ՕՐԱԳԻՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

*Այսուհետև ոչինչ Եգիպտական խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութենից:*

Ս. Նազարեանց:

**ԱՌԱՋԻ՛Ն ՏԱՐԵԳՆԱՑԻ.**

ՅՈՒՆՎԱՐ **1858** ԹՈՒԱԿԱՆԻ.

**ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 1.**

ՄՈՍԿՎԱ,
Imprimerie d'Ernest Barfknecht.
1858.

1893

La science doit être utile.
Arago.

Գիտութիւնը պիտոյ է լինի պտղաբեր·
Արագօ:

## ՄԵՐ ԲԱՐԻՄԻՏ ՄՕՏԱՒՈՐ ՈՒ ՀԵՌԱՒՈՐ ԵՂԲԱՅՐԱԿԻՑՆԵՐԻՆ

# ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ,

## ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԼԻ ՕՐԵՐ:

Նոր տարին մի բարի ազգասիրական ձեռնարկութեամբ սկսանելով մեր սիրելի Հայազնեայ եղբայրակիցների հետ, և յանձնելով նոցա իմ առ ի սրտէ ջերմ բարեմաղթութիւնքը գալոց տարու համար, կամէի թէև մարմնով հեռի, բայց մտքով ու սրտով շատ մօտ, այս խորհրդաւոր օրս մի քանի մտածութիւնք առնել մեր ծանօթ ու անծանօթ սիրելիների հետ: Սովորութիւն կայ լուսաւոր ազգերի մէջ, տարեմուտքի երեկոյին իրեանց բարեկամների հետ ընտանեբար հաւաքվիլ միասին և պատշաճաւոր խորհրդածութեններով հանդէպ գնալ նոր տարու առաւօտին: Մի այսպիսի ժողովի մէջ սովոր էին բարեկամները իւրեանց մէջ հաշիւու համար տեսանել իւրեանց արած ու թողած գործերի, իւրեանց յառաջադիմութեան և զանցառութեան վերայ թէ մարմնաւոր և թէ հոգւոր բաների մէջ: Այսպէս կամէին նոքա քննութեան տակ ձգել իւրեանց անցած գնացած կեանքը, ճանաչել իւրեանց որպիսութիւնը, անցած օրերից խրատ ու օգուտ ստանալ իւրեանց գալոց օրերի

համար, ուղղել իւրեանց բարք ու վարքը և որպէս բանական էակներ օր աւուր կատարեալ շինել իւրեանց անձը։ Մի այդպիսի քննողութիւն շատ անգամ՝ լինում էր մեծ մխիթարութեան պատճառ, եթէ այնքան բաղդաւոր էր մարդ, որ աչքը դարձուցանելով իւր անցած օրերի վերայ, կարող էր հանդիպել այն տեղ մի քանի կանաչ ու դալար բոյսերի, անուշահոտ ծաղիկների և գեղեցիկ պտուղներով զարդարած ծառերի. և ինչ քաղցր զգացողութիւն նորա սրտի համար, եթէ նա կարող էր խոստովանել, թէ զուր ու անօգուտ չէր եղած նորա կեանքը աշխարհի վերայ։

Հայազնեայ մարդիկ, մեր պատուելի եղբարք ու ընկերք, եկէք և մեք, յառաջ քան թէ մեր ոտքը դնելու էինք նոր տարու շեմքի վերայ, վճարենք մեր բանականութեան հարկը, մի քանի րոպէ նուիրենք մտածութեան մեր անցած ու գնացածի վերայ, մի քանի րոպէ եղբայրաբար հաշիւ ու համար տեսանենք միմեանց հետ, և հասկանանք թէ ինչպէս պիտոյ էր մեզ մեր ապագայ օրերը աւելի լաւ, աւելի խելացի կերպով հոգալ ու տնտեսել։ Ճշմարիտ, մի փոքր ծանր բան է անձնաքննութիւնը և շատերի համար մի սարսափելի գործ, ըստ որում մի քանի մարդիկ իւրեանց քաղցր քնի մէջ մի կոշտ ձեռքի զարթեցողութենից, պիտոյ է զայրացած վեր թռչէին, միւսերի վերայ օձեր ու կարիճներ պիտոյ է թափվէին և ցաւեցուցիչ խայթոցները նորա բերէին։ Այս առանց անձնաքննութեան և ինքնաճանաչութեան անկարելի է ուղղել կամ բարւոքել իւր անձը թէ մասնաւոր մարդու և թէ մի ամբողջ ազգի համար։ Մեր խորհուրդը բարի է, և բարի խորհրդից ով կարող է երկիւղ ունենալ, բաց ի մի քանի ամբարիշտ մարդերից որոնցից Աստուած թող հեռի պահէ ձեզ ու մեզ։

Եկէ՛ք ուրեմն, աւարտենք մեր հաշիւը հին տարու հետ, առաջարկելով մեզ այս մի փոքր ծանր հարցուածները։ Ինչպէս է եղած մեր անցած ու գնացած կեանքը մինչև այսօր. ոչ թէ մեր մասնաւոր տնային կեանքը, մեր կերած ու խմածը, մեր նիւթական շատ կամ փոքր շահաստացութիւնը. չէ, այդ մասնաւոր պիտոյքների վերայ է այս տեղ մեր խօսքը. այլ թէ մեք որպէս ազգի անդամք, որպէս ազգի տղամարդեր, որպէս հասարակաց ազգի պաշտօնեայք, որպէս բանական և բարոյական էակներ ինչպէս ենք լցուցել մեր պարտականութիւնքը, ինչ ազգասիրական գործ ենք կատարել, ինչ ճշմարտութիւն յառաջ ենք տարել և ինչ մոլորութիւն անհետացուցել ենք ազգի մէջ, ինչ կատարելութիւնք ստացել ենք մեք և որ պակասութիւններից հրաժարվել ենք, և արդեօք ազգի իմացական ու բարոյական դրութիւնը փոքր ի շատէ բարւոքացե՞լ է մեր յատուկ խնամատարութեամբ։ Այսօր

Հայրենիքը բարձրացնելով իւր ձայնը, հարցնում է իւր մեծատուն ղաւակից· ինչ յարժանաւոր տուրք ես ձգել դու ազգային շինութեան գանձանակի մէջ· ինչ նուէրք ես արել դու, քո Հայազգի մարդկութեան թէ մարմնաւոր և թէ հոգևոր կարիքը լցուցանելու համար· դու իմ անդրանիկ որդի, ունիս դու և մի անդրանիկ պարծանք քո ազգի մէջ, բայց ի քո հարստութենից, քո բարեկեցութենից, քո փառահեղ սարք ու կարգերից: Այսօր Հայրենիքը դարձուցանելով երեսը դէպ ի իւր գիտնական որդիքը, ծանրութեամբ հարցնում է նոցանից· ինչ է ձեր գիտութեան և ուսումնականութեան պտղաբերութիւնը ազգի համար· արդեօք յայտնագործե՞լ էք դուք մի հանրաշահ ճշմարտութիւն և նորան պիտանի էք կացուցել ազգի ներկայ կեանքին· արդեօք հասկացե՞լ էք դուք մեր ժամանակի և ձեր ազգի հոգեղէն պիտոյքը և ձեր սուրբ պարտականութիւնքը դէպ ի ձեր անձը և դէպ ի ընկերը, այսինքն յաղթել ձեր մարմնաւոր դիւրասիրութեանը և ձեր հոգու դանդաղկոտութեանը, մերկացնել ձեր գրչի սուրը ընդդէմ ստութեան և խաբեբայութեան, անվեհեր քարոզել ճշմարտութիւնը և լուսաւոր գաղափարներ տարածել ձեր, խաւարում նստած եղբայրակիցների մէջ· արդեօք ձեր ուսումնական վաստակներովը փոքր ի շատէ բարւոքացուցե՞լ էք ժողովրդի ընկերական կեանքը կամ թէ դաստիարակել էք ձեր ազգի մարդերի հոգին ու սիրտը: Հայրենիքը լեզու առած, հարցնում է այսօր ժողովրդի բոլոր անդամներից, թէ հարստականից, թէ ունևորից, և թէ չունևորից, թէ հոգևորից և թէ աշխարհականից, որովհետև ամենեքեան ազգի որդիք են և ունին իւրեանց առանձին պարտականութիւնքը դէպ ի նա· ինչ բարի գործերով կամ խօսքերով յառաջադէմ էք կացուցել ձեր ազգը, ձեր եկեղեցին, ձեր սիրելի ղաւակները· ինչ հոգաբարձութեամբ կատարելագործել էք ձեր յատուկ անձը, ձեր հասկացողութիւնը, ձեր բանական հոգին, ձեր զգացող սիրտը· արդեօք մի քանի քայլ յառաջ էք գնացել դուք առաքինութեան ասպարիզումը ազնիւ անձնասիրութեամբ, ազգաշէն եղբայրսիրութեամբ, կենդանի հաւատի կենդանի պտուղներով: Այս նոր տարու խորհրդաւոր երեկոյիս թող ամենայն բանական Հայ ձեռքը դնէ իւր սրտի վերայ և արդար խղճմտանքով պատասխան տայ նորա հետ խօսող Հայրենիքին: Գիտեմ, Հայ մարդերի կեանքը, ինչքան և չքաւոր լինէր առաքինի գործերով, այնու ամենայնիւ բոլորովին զուրկ չէ դոցանից: Հայոց մէջ կը գտնվին մի քանի անձինք, որ մի քանի լումայ ձգած էին ազգասիրութեան գանձանակի մէջ, մի քանի օգտակար գործերի ձեռնտու և օգնական էին գտնվել, մի քանի դաստիարակիչ մատենագրութիւնք մասնաւոր ազգասէրների արծաթով ոչ թէ պսակվել էին, այլ միայն անձնազոհ հեղինակի աշխատու-

թեամբ կարողացել էին հրապարակ դուրս գալ և դառնալ ազգի սեփականութիւն և կամեցողներին պիտանի։ Բայց ինչ էին դոքա, քննելով մեր ազգի բազմամանեայ կարօտութիւնքը․ ինչ էին դոքա, համեմատելով մեր ժամանակի հազար տեսակ հարկաւոր պիտոյքներին․ ուր են մեր հայրենասիրական ընկերութիւնքը, Հայկական ուսումնարանները տղաների և աղջիկների կրթութեան համար, ուստի կարող էին յառաջանալ ազգի մէջ խելացի հայրեր և դաստիարակիչ մայրեր․ ուր են ազգային լուսաւորութեան գործիքը, բարեկարգ տպարաններ, գրատունք, պատշաճաւոր մատենագրութիւն ազգի և նորա զաւակների համար։ Բոլորը բարձի թողի արած, անհոգ և անտես մնացած թէ հոգևորի և թէ աշխարհականի կողմից, ասես թէ ոչինչ վերաբերութիւն չունէին դէպ ի Հայկական ազգը։ Եւ ինչ որ մինչև այժմ կամայ և ակամայ արած են Հայոց ազգասէրքը, հազիւ թէ մի կաթիլ ջուր է ահագին ովկիանոսի մէջ, մի հատ ծաղիկ Հայոց կեանքի լայնատարած չոր ու ցամաք, անմխիթար անապատի մէջ։ Թէպէտ այդ մի կաթիլ ջուրը, այդ մի հատ վարդը և ս շատերի աչքին խոցոտիչ փշեր էին․ դոքա կը ցանկանային, որ ոչինչ կենդանութեան նշոյլ չերևէր ազգի մէջ, այլ լինէր միշտ մեռելութիւն, միշտ գիշեր, մշտնջենաւոր խաւար ու աղջամուղջ․ բայց թող հանդարտեն այդ թշնամիքը մարդկութեան և նորա յառաջխաղացութեան․ դոցա գաղանաբար, անկիւններումը նստած կատաղելով ու փրփրելով չէ դադարելու յառաջաշարժ ժամանակը․ շատ շատ, մի փոքր ծանրանալու է նորա ընթացքը, և բարեմիտ ազգասէր Հայը պիտոյ է մի փոքր աւելի զօրութիւն գործ դնէր, խաւար տգիտութեան վիշապի գլուխը ջախջախելու համար․ բայց այդ ջանադրութիւնը անխորհուրդ չէ․ դա աւելի կ՚ամրացնէ ու կը հաստատէ պատերազմողի ջլերը։

Ասացինք վերևումը, թէ ազգասէր Հայերի գործակատարութիւնքը մինչև այժմ հատ ու կտոր, աննշան բաներ էին, և ցոյց տուեցինք թէ ինչքան հոգալի պիտոյքներ, ինչքան ծանր ծանր խնդիրներ մնումեն դեռ ևս լուծանելու, ինչքան արգելք ու խափաններ պիտոյ է հեռացնել, եթէ հարկաւոր էր մի հաստատ ազգային լուսաւորութեան հիմք ձգել և այդ հիմքի վերայ յառաջ գնալ։ Գիտեմ, անբանների համար ոչ ազգ կայ, ոչ ազգային լուսաւորութիւն, ոչ հոգալի պիտոյք ազգի, ոչ հարց ու խնդիր մարդկութեան խորհրդի մասին։ Այսպիսիներին աւելորդ են ի հարկէ և մեր ասացուածքը, որովհետև անըմբռնելի ու անհասկանալի են։

Ուրեմն մեր քննութիւնը այս տեղ մեր մտածող և բանական եղբայրակիցների հետ է, և այն խնդրի վերայ, թէ ինչպէս էր մեր առաջև

*դրած ճանապարհը․ ինչ հնարներ մեր ձեռքումը կային, մեր անապատ աշխարհի շինութեան համար։ Բացայայտ է, որ մի ազգի իմացական ու բարոյական նորոգութիւնը միշտ եղած է խելացի մարդերի միաբան աշխատութեամբ և հոգաբարձութեամբ․ բայց մի ազգ ամենևին բարձի թողի արած, չէ կարող բարեկարգվիլ ինքն ըստ ինքեան, այլ պիտոյ է օր ըստ օրէ վայրենանայ, վատթարանայ և գաղանանայ։ Ամենայն աշխարհաշինութիւն գին է անթիւ ու անհամար աշխատանքների։ Հայոց աբեղայքը և նոցա հետ միասին աբեղայամիտ մարդիկ շատ, կամենալով ծածկել և որպէս թէ արդարացնել իւրեանց դատապարտելի անհոգութիւնը և անմտութիւնը, սովոր են միշտ կրել իւրեանց բերանում՝ այս բառերս․ «եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա»։ Բայց մի՞թէ Տէրը շինելով մեր տունը, մեզ պիտոյ էր ձեռքերը դնել գոգումը և անգործ մնալ և սպասել, որ տունը ինքն ըստ ինքեան, մի աստուածային հրաշքով գլուխ գայ։ Մեր ասիացի Հայ եղբայրը որ կարծումէ թէ իւր հոգևոր տան շինութիւնը լինելու է առանց իւր յատուկ ձեռքի աշխատութեան, առանց որ և իցէ գլխացաւութեան նորա կողմից, դա ամեն օր տեղեկանումէ իւր ականատես փորձովը, որ նա, եթէ իւր մահկանացու մարմնի համար կամէր մի օթևան պատրաստել, պարտական է նորա նիւթական պիտոյքը հոգալ, քար ու փայտ, կիր, երկաթ, մշակ, ճարտարապետ և այլն․ այդ բաւական չէ․ նա պարտական է կամ ինքնին, կամ թէ սրտացաւ գործակատարների ձեռքով վերահասութիւն գործել այն շինութեանը, որ պիտոյ է լինէր նորա հողեղէն բնակարանը։ Նիւթական գործի մէջ այդպէս խելօք է Հայը, բայց հոգևորի մէջ կամի անգործ մնալ և բոլոր հոգաբարձութիւնը Աստուծոյ հրաշքին թողուլ։ Բայց Աստուած պարգևել է մարդուս բանականութիւն և ազատ կամք, որ նա գործ դնելով իւր հանճարը և իւր բարոյական ազատութիւնը, բարեկարգէ իւր թէ նիւթական և թէ իմացական դրութիւնը, աշխատի և քրտնէ շինելով իւր տունը․ այնուհետև տարակոյս չը կայ, որ և մարդասէր Աստուածը օգնելու էր մեզ, օրհնելու էր մեր գործը, շինելու էր մեր տունը, տեսանելով մեր կենդանի հաւատը։*

*Հայոց ազգի տունը պիտոյ է և կարող է միայն շինվիլ նորա լեզուի շինութեամբը։ Լեզուն է, որ անապատները շինել է բարեկարգ քաղաքներ, և կազմել է մարդկային ընկերութիւններ և այդպէս յառաջացուցել է կարգ և օրէնք, աշխարհաշինութիւն, արուեստ և գիտութիւն, հազարաւոր գիւտեր ու հնարներ, մարդուս կեանքը թէ պահպանելու և թէ զարդարելու համար։ Առանց լեզուի չէին կարող հաստատվիլ ոչինչ խելացի քաղաքական կարգեր և թագաւորութիւնք։*

առանց լեզուի չէր կարող մարդը քաղաքացի դառնալ, չէր կարող երկրագործութիւն լինել, առուտուրք յառաջանալ. կարճ ասեմ, չէր կարող մի հացատու բոյս բուսանել, մի կտոր հաց գոյանալ մարդու համար։ Լեզուն է եղել այդ բոլոր բարութիւնների սկզբնապատճառը, լեզուն եմ ասում, որ միտք է, բանականութիւն է, գիտութիւն է, և բոլոր հմտութիւնների մայր ու դայեակ։ Ինչ խորհուրդ ունի լեզուն համօրէն մարդկութեան համար առ հասարակ, նոյն խորհուրդը ունի նա մասնաւորապէս ամեն մի ջոկ ազգի համար. ուրեմն Հայի համար իւր լեզուն, որ արդարև ամեն մինը մեզանից, որի խելքն տեղումն էր, պարտական է համարել իւր ամենասուրբ բանը, իւր աչքի լոյսը, իւր սրտի արիւնը, իւր կենդանութեան հիմքը, իւր պատիւ ու պարծանքը։ Լեզուի ու ազգի նուազումը մին բան է, որպէս և դոցա ծաղկելը և բարգաւաճելը այնպէս մօտ լծակից ու եղբայրակից միմեանց հետ, որ մինը առանց միւսին անիմանալի է, ոչինչ է։ Այս խօսքերի ապացոյցը կարող է ամենայն բանագէտ Հայ գտանել թէ հին և թէ նոր ազգերի պատմագրութեան մէջ. բայց Հայոց հասարակ մարդը առանց հեռի գնալու, ունի այդ ապացոյցը իւր յատուկ ազգի ու լեզուի այժմեան դրութեան մէջ։

Հայոց ազգի տունը, կրկնումենք խիստ շեշտելով, պիտոյ է շինվի նորա լեզուի շինութեամբը։ Հայոց լեզու ասելով, այս տեղ հասկանումենք մեր Հայ ժողովրդի կենդանի բարբառը, նորա բերանի խօսքը, այն լեզուն և ձևերը, որով մեր ժամանակի Հայերը լաւ ու վատ հասկացնումեն միմեանց իւրեանց միտքը, դատողութիւնը և զգացողութիւնքը։ Հայոց լեզու ասելով իմանումենք միայն աշխարհաբառ լեզուն որ կեանք ունի մեր ժամանակումը, և ոչ թէ ուսումնական, գրոց ասած լեզուն որ այժմ մեռած է և կարող է միայն պիտանի լինել գիտնական Հային, լեզուի նորաշինութեան համար, աշխարհաբառ լեզուի թերութիւնքը լցուցանելու մայրենի աղբիւրներից։ Բայց որովհետև մեր այժմեան Հայոց լեզուն և մեր նախահարց բարբառը ամենևին նոյն հիմքերի վերայ է հաստատած էապէս, և ամենայն յետ ու յառաջ նայեցող գիտնաւորի աններելի էր քննել մի ծառի աճեցողութիւն, առանց ուշադիր լինելու նորա արմատին և սնուցիչ հողին, այս պատճառով անպատշաճ չենք համարում մեր ժողովրդին քանի մի համառօտ տեղեկութիւնք աւանդել հին լեզուի մասին, այլև քննել դորա ընթացքը և փոփոխութիւնքը ժամանակի ազդեցութեան և այլ հանգամանքների տակ, որով յառաջացել է մեր աշխարհաբառ ասած լեզուն, մեր այժմեան կեանքի հոգեղէն կերպարանքը։

Հայոց լեզուն ընդհանրապէս, եթէ քննենք նորան այժմուս Եւրոպէական լեզուագիտութեան լուսի տակ, է մի ճիւղը այն մեծ և լայնատարած Հնդկա-Եւրոպական Սանսկրիտ լեզուների և պատկանում մանաւանդ թէ նոցա գերդաստանին արևմտեան Ասիայի մէջ, այսինքն է Իրանեանը որին պատկանումեն նոյնպէս հին Զենդ և Պարսիկ լեզուքը: Եւ արդարև Հայոց լեզուի յարակցութիւնը Սանսկրիտեան արմատի հետ, ինչպէս երևումէ, Զենդի միջնորդութեամբն է. գտնեայ այն բառերը որ հասարակաց էին Հային և Սանսկրիտին, աւելի մօտ են Զենդական ձևերին, քան թէ Սանսկրիտին: Բայց եթէ մտ դնենք մեր ազգի պատմիչներին և դոցա գրուածներով ազգի մէջ տարածւած կարծիքներին, այնուհետև պիտոյ է մեզ Հայոց լեզուն շինել նոյն իսկ Նոյ նահապետի լեզուն. պատճառ, Հայոց ազգապետ Հայկը, Յաբեթի թոռը, իջանելով Արարատի աշխարհից դէպ ի Բաբելոն, աշտարակաշինութեան միջոցին, լեզուների խառնակութենից յետոյ կրկին յետ է գալիս իւր հայրենիքը և տիրապետումէ Հարք գաւառին Տուրուբերանի, և իւր հալածող բռնակալ Բէլին սպանելով [1]), հաստատումէ իւր իշխանութիւնը Հայաստան աշխարհի վերայ, և իւր բոլոր զաւակներովը խօսումէ հին Նոյեան լեզուն: Այս զրոյցը, որ շատ առասպելական բան է երևում, թէպէտ արդարև շատ հաճելի էր մեր Հայի անձնասիրութեանը, մաշած ու կտրատած ուսումնականութեամբ աշխատելով հաստատել Հայր Ինճիճեանը, Չամչեանը և Աւգերեանը, կամեցած են մեր Հայոց ազգին սեփականել մարդկային ազգի ամենահին, սկզբնական լեզուի պարծանքը: Շնորհակալ ենք այդ գիտուն Վենետիկեան վարդապետների ազգասի-

---

[1]) Վէպք հնոյն Հայաստանի. քննութիւն Մկրտչի Էմին. Մոսկվա, 1850, եր. 14. ասումէ մեր գիտնական բարեկամը թէ Հայկի անհնազանդութիւնը Բէլին, Հայոց ազգի արմատական ախտերից մինն էր: Ցաւումեմ, որ չեմ կարող մասնակից լինել իմ բարեկամի կարծիքին: Մի՞ թէ Հայկի չհնազանդվիլը մի օտար բռնակալի, յանցանք է եղած, և ոչ թէ մի փոքրանի օրինապաշտած ազատասիրութիւն և անձնապահպանութիւն. և ինչ իրաւունք ունէր Բէլը տիրապետել Հայաստանին. մի՞թէ նորա համար, որովհետև իւր անձը աւելի ուժեղ էր կարծում: Չէ. Հայոց ազգը ոչ թէ անհնազանդ ազգ չէ, այլ թէ մանաւանդ իւր չափազանց հնազանդութեամբը դարձել է միշտ օտար ազգերի ծառայ և ստրուկ, ինչպէս ահա բացայայտ է ազգային պատմութենից: Բայց եթէ Հայ մարդերի մէջ եղած է և կայ մի անհնազանդութիւն, մի կամակորութիւն իւր չար և կործանական մոլորութեան վերայ. այդ, ոչ թէ ազգի արմատական հովին է, այլ նորա անդաստիարակ, անուսումն, կոպիտ և տգէտ մնալու հետևանքը: Այդ բանը տեսանվումէ և ուրիշ ազգերում, նոյն որպիսութեան մէջ: Այն վկայութիւնը որ մեր պատուելի բարեկամը բերումէ Գրիգոր Մագիստրոսի Նամակից պետրոս Կաթողիկոսի վերայ, ունի մի ամենևին այլ հայեացք, այսինքն դէպ ի իմաստութեան անսիրելութիւնը Հայոց ազգի մէջ:

րութենից, միայն թէ ունենար դա աւելի հաստատուն հիմքեր և կարողանար դիմանալ հրափորձութեանը, գիտութեան անողոքելի դատաստանի առաջև։ Ոչ մի ազգ Եւրոպայումը չէ համարձակվել մինչև այժմ ասել, թէ իւր լեզուն մարդկութեան առաջին լեզուն էր, որովհետև դորա համար հարկաւոր էին այնպիսի զօրաւոր ապացոյցներ, որ ոչ մի ազգ չէ կարող յառաջ բերել․ և Հայոց պատմագրութիւնը լինելով աւելի մանուկ ժամանակների որդի, ունէր և շատ թոյլ պատճառներ ապացուցանելու իւր լեզուի այդքան խորին հնութիւնը, թող թէ առաջնութիւնը։ Այսպիսի թոյլ պատճառներ են արդարև այն մի քանի զրոյցքը և ստուգաբանութիւնքը որ վերաբերումեն մի քանի տեղերի Արարատին կից և նորա մօտակայքումը․ զօր օրինակ »Առնոյոտն« Մասիս սարի արևելեան ոտքումը, որպէս թէ Նոյ նահապետը այս տեղ է դուրս եկած ջրհեղեղից յետոյ․ »Ակոռի կամ »Արկոռի« Մասիսի հիւսիսայեայ ոտքումը, որպէս թէ Նոյ տնկել էր այս տեղի խաղողի ծառը․ »Մարանդ« որ ստացել էր այս անունը որպէս թէ Նոյի կնոջից, որ մեռած էր այս տեղ։ Դիցուք թէ այս Մարանդը Քրիստոնէութենից յառաջ Պտղեմէոսի աշխարհագրութեան մէջ յիշվումէ Մարունդա անունով, և Նախիջևան քաղաքը Մասիսի արևելեան կողմումը, Արաղ գետի հիւսիսային եզերքի վերայ դրած, մի և նոյն տեղն է, որ Փլավիոս Յովսեփոս Հրէան իւր հնախօսութեան մէջ յատկացնումէ որպէս իջևանի տեղ, Հայոց զրոյցների վերայ հիմնվելով ('Αποβατήριον μέντοι τὸν τόπον τοῦτον 'Αρμένιοι καλοῦσιν, Antiq. 1. 35). Դիցուք թէ Նախիջևանը յայտնի է Պտղեմէոսյու Յոյն աշխարհագրին Ναξούανα անունով, որպէս քաղաք մեծ Հայքի մէջ, ուրեմն Քրիստոնէութեան ժամանակից յառաջ․ բայց այն զրոյցները որպէս թէ այդ տեղերը Նոյի և նորա գերդաստանի բնակարանն էին, հաւանական է երևում թէ յառաջացած են Հրէայ գաղթականներից որ շատ վաղուց եկած էին Հայաստան և տուն ու տեղ էին հաստատել Արաղի մօտ, որ և չորրորդ դարու սկզբումը Քրիստոսից յետոյ, արդարև շատ բազմաթիւ էին, գոնեայ Նախիջևանի սահմանումը։

Եթէ անպայման հաւատ ընծայենք Հայոց ազգային զրոյցներին և ընդունենք թէ Հայք մի ժամանակ խօսել են Նոյ նահապետի լեզուն, ըստ որում Հայկը Յաբեթի թոռն էր, այնուհետև պիտոյ էր վերջացնել ամենայն լեզուաբանական հարց ու խնդիր․ պատճառ, Նոյեան լեզուից ոչինչ գրաւոր յիշատակարան չը մնալով մեզ, կարող չենք և բան հասկանալ համեմատութեան ճանապարհով։ Եթէ Հայք միայն կամին Յաբեթեան լինելով ժառանգած լինել Նոյեան լեզուն, ապա Եւրոպացիք մր ազգապետի զաւակներ են․ յայտնի է

ահա, որ դոքա ոչ Քամի և ոչ Սեմի ցեղից են. ապա ուրեմն և Եւրոպայիք իրաւունք ունին մի փոքր մասն պահանջել այն Նոյեան լեզուի պարծանքից, որ Հայերը սեփականումեն իւրեանց. բայց ոչ մի Եւրոպայի չէ մտածում այդպէս: Քաւ. ինչպէս Եւրոպայիք, նոյնպէս և Հայերը Յաբեթեան են և պատկանումեն մի և նոյն Հնդկա-Եւրոպական գերդաստանին, և այդպէս Հայոց լեզուն, երկար ժամանակ, ուսումնական քննութիւն չը լինելով դորա վերայ, թողած ու ձգած էր մի անապատ անկիւնի մէջ, որպէս մի ջոկ ու առանձնացած լեզու, ոչինչ ծանօթ լեզուների կարգի չը պատկանելով [1]). բայց այժմ, Եւրոպական լեզուագէտների քննելով հայկական լեզուի քերականական կազմութիւնը ամբողջապէս, ընդունված է որպէս մի լեզու որ ունէր ներքին ազգակցութիւնք Հնդկա-Եւրոպական լեզուների արմատի հետ. այդ հետաքննութեան պարծանքը վայելումէ մանաւանդ թէ Պետերման Գերմանացին, և Հայկազեան լեզուի տոհմակցութիւնը Սանսկրիտի հետ հաստատված է մեծ եւրոպական լեզուագէտ Պօտտի խոստովանութեամբ:

Հայոց լեզուի տառերը աւելի բազմաթիւ են քան թէ մեզ ծանօթ եղած լեզուներից շատերի մէջ. ինչպէս Սեմիտեան ասած բարբառների մէջ, նոյնպէս հայերէնումը առատ են կոկորդային և շչողական ձայները. բայց պիտոյ է ասել, որ այժմեան Հայերը, մանաւանդ թէ Տաճկաստանի մէջ, շատ տառեր այլապէս են արտասանում քան թէ նոցա նախահարքը. անձայն տառերի մէջ (որ են բ, գ, դ, պ, կ, տ.) յառաջացել է մի կատարեալ յեղափոխութիւն, ըստ որում այն տառերը որ սկզբնաբար լերկ կամ նուրբ էին, զոր օրինակ պ, կ, տ, արտասանվումեն այժմ որպէս միջակ, այսինքն որպէս բ, գ, դ. և դորա հակառակ, այն տառերը որ սկզբումը եղած էին միջակ, արտասանվումեն այժմ որպէս լերկ կամ նուրբ: Բայց դուցէ թէ այս զանազանութիւնը արտասանութեան մէջ յառաջացել է մի այլ աղբիւրից, այսինքն լեզուի զանազան բարբառներից զանազան գաւառներում, ուր մի և նոյն տառը կարող էր մի տեղ, փափուկ, միւս տեղ կոշտ արտասանվիլ, և այս պատճառով մի հեղինակ գրել է խունկ, միւսը խունգ, մինը թագչել, միւսը թաքչել և յետոյ անխտիր թոյլ են տուած գրել և այսպէս և այնպէս. թէպէտ պիտոյ է ասել, որ երկու նշանագիր մի ձայնի համար ընդդէմ է բանա-

---

[1]) Այդպէս ահա տեսանումենք Ֆրանսիացի աշխարհագիր Բալբիու գրուածումը Introduction à l'atlas étnographique du globe, Paris, 1826. երես 110, ուր յիշեալ աշխարհագիրը տալիս է Հայոց լեզուին լոկ աշխարհագրական անունս Կովկասեան:

կանութեան, որովհետև ամենայն նշանագիր կարող է ձևացնել մի ձայն միայն, ապա թէ ոչ, անխորհուրդ է նշանագիրների այլաձեւութիւնը միմեանցից: Թէ Հայոց բաղաձայն տառերը երբեմն փոխանակվումեն մինը միւսի տեղ, դորա պատճառը, բաց ի վերոյիշածից, է մի մասնով և այն, որ ժողովուրդը, ինչպէս սովոր է ամենայն տեղ պատահել, արագ արտասանելով մի բառ, այս կամ՝այն բաղաձայնը խառնել է միւս մօտահնչիւն բաղաձայնի հետ. Թող այն փոփոխութիւնքը որ բարեհնչութեան աղագաւ, ինչպէս այլ լեզուների մէջ, նոյնպէս և Հայումս պատահած են, զոր օրինակ ն ի փոխվիլը դէպ ի մ, այնպիսի բառերի մէջ, ուր ն ից յետոյ գալիս է բ. զոր օրինակ ամբիծ փոխանակ անբիծ, բամբասանք փոխանակ բանբասանք. կամ թէ մ ի փոխվիլը դէպ ի ն, երբ որ մ ից յետոյ գալիս է դ, զոր օրինակ հանդիպել փոխանակ համդիպել:

Կարծիք կայ, որպէս թէ Հայոց այբուբենքի մէջ, ինչպէս Զենդական լեզվումը չէ եղած տառս լ, և թէ այս պատճառով Հայերը այն բառերի մէջ, որ առած էին օտար ազգերից, սոյն լ ձայնը բացայայտումեն կոկորդային ղ տառովը. զոր օրինակ Պերիկղէս փոխանակ Պերիկլէս, Աղէքսանդր փոխանակ Ալէքսանդր, Ջուղա փոխանակ Ջուլֆա և այլն: Եթէ ընդունենք թէ այդ ղ նշանագիրը արտասանվել է հնումը որպէս լ, այնուհետև պիտոյ էր մեզ արտաքսել ղ ձայնը Հայոց լեզուից և փոխանակ ղենջակ, ղօղանջիւն, աղաղակ, ղամբար, կարդալ լենջակ, լօլանջիւն, ալալակ (յուն. ἀλαλαγή), լամբար (λαμπάς): Դժուար թէ ուղիղ էր այդ ենթադրութիւնը. պատճառ, դուրս հանելով յունարմատ բառերը, ամենևին չէ կարելի ընդունել, որ ղ տառը բուն Հայկական բառերի մէջ արտասանվումէր ազգի բերանում որպէս լ: Արիստակէս Քերականը որոշումէ մի տեսակ ղ մի փշիկ դնելով ղ ի գլխին (ղ́) և ասումէ թէ պիտոյ է արտասանել նորան ղ և լ տառերի միջասահմանումը, այսինքն ոչ ամենևին ղ և ոչ ամենևին լ, այլ միջակապէս, դուցէ որպէս Պոլոնական ł: Իցէ թէ և Յոյնքը իւրեանց λ տառը որ այժմ Եւրոպայիք առ հասարակ արտասանումեն որպէս ł լ, հնումը արտասանումէին մի փոքր այլապէս, քան թէ այժմեանքը, և այդ պատճառով Հայերը Յունաց λ տառը բացայայտել են ղ́ ով, որ գնալով գնալով կորուսել՝է իւր փշիկը և այժմ հնչումէ որպէս կատարեալ ղ:

Յիշատակութեան արժանի են մի քանի առանձին յատկութիւնք Հայոց լեզուի: Սորա մէջ երկու ձայնաւորք միմեանց քամակից չեն կարող հետևել, և այս պատճառով գրվումէ Աբրահամ և ոչ Աբրաամ. Իսրայէլ և ոչ Իսրաէլ: Հայոց լեզուն թէպէտ և ունի մի կըր-

կնակ ր. բայց ոչ մի բուն հայկական բառ չէ սկսանվում ր ով և այս մասին նմանակից է Թուրքական լեզուներին։ Ձայնաւորների մասին շատ զուգակցութիւն ունի Սեմիտեան լեզուների հետ, այնպէս որ սակաւ բառեր միայն սկսանում են ձայնաւոր տառերով։ Բայց Հայոց լեզուն իւր միավանկ արմատներովը ճշդապէս որոշվում է Սեմիտեան լեզուներից, որոնց մէջ ծանօթ են համարեա թէ երկվանկ արմատներ միայն. այս բանով ահա մեր հայկական լեզուն կցորդվում է Հնդկա-Եւրոպական լեզուների ցեղին։ Որոշելի գերմանունական և բայական արմատները չեն ոչ այնպէս կարծրացած ու առանձնացած ինչպէս Թուրքերէնումը, և ոչ այնպէս կակուղ ու թեքելի որպէս Սեմիտեան բարբառների մէջ։ Հայոց լեզուն չունի քերականական սեռեր. ասել է թէ Հայոց բառերը չունին սովորաբար առանձին վերջաւորութիւնք, սեռերը ցուցանելու համար. բայց եթէ հարկաւոր էր որոշել սեռը, ապա, ինչպէս Պարսկերէնումը և Թուրքերէնումը, յաւելացնում են բառերս այր և կին, զոր օրինակ այր մարդ, կին մարդ. և անբան շնչաւորների համար, բառերս որձ և մատակ, արու և էգ. վերջինքս գործ են ածվում և մարդու համար. որպէս, արու և էգ զաւակ։ Մի հատ իգականացուցիչ վերջաւորութիւն ունի Հայոց լեզուն իւր ուհի մասնկի մէջ։ Ցոյնակին կազմվում է եղականից, յաւելացնելով տառերս ք, ս, ց. բայերի մէջ և տառս ն. մի յատկութիւն որ նոյնպէս բաւական շատ մօտեցնում է Հայերէնը Հնդկա-Եւրոպականին։ Քանակական թուանունները ինչ ինչ առանձնութեամբ, բայց յայտնապէս արդէն, աղգակից են Հնդկա-Եւրոպականին. զոր օրինակ եզ, մի, մէն, մու, որոնց պատասխանում են յունականքը εἷς, μία, μί = էյս, միա, մի։ Երեք, երի, լատիներէն ter, տեր։ Չորք, չորս, լատիներէն quatuor, սանսկրիտերէն չատուր, ռուսերէն четыре, պարսկերէն չհար։ Հինգ, լատիներէն quinque, պարսկերէն փանջ. Ֆրանսիարէն cinq։ Եօթն, պարսկերէն հաֆթ, լատիներէն septem։ Ութ, լատիներէն octo, Ֆրանսիարէն huit։ Ինն, յունարէն ἐννέα, (էննէա), գերմաներէն neun։ Տասն, սանսկրիտերէն տասան. Բիւր, 10000, պահլաւերէն փիւր, ինչպէս բիւրասպ բառի մէջ, որ զենդերէն ասվում է փիւրասպ, 10000 ձի ունեցող, որ Ֆերդաուսի բանաստեղծը տալիս է Զոհակ բռնակալին որին յաղթեց Ֆերիդուն քաջազը Պարսկաստանի։ Դերանունները հաստատում են վերոյիշեալ գլխաւոր աղգակցութիւնը, որպէս բայերի ժամանակը և եղանակը ցուցանում են շատ մեծ նմանակցութիւն Սանսկրիտի հետ։

Թէև Հայոց սկզբնական լեզուն որ մերաղնեայ, Նոր ժամանակի հեղինակները շատ ցանկութիւն ունին Ադամի լեզուն շինել և մի

այնպիսի լեզու որ իսկոյն ստացել էր մի ճոխ, զանազան, իմաստալից արուեստով ու խորհրդով յօրինած կազմակերպութիւն, ինչպէս է եղել սկզբումը և ստուգապէս, այլև թէ ինչքան երկար միջոց մնացել է անխառն ու պնարատ և մի ընդհանուր լեզու, այդ խնդիրը չէ կարող լուծանել ոչ մի լեզուագէտ· բայց ինչ որ խելքի մօտ բան է և ունի համեմատութիւն այլ լեզուների հետ, այս է ահա։ Ինչքան որ Հայոց լեզուն խօսվումէր միայն մի սակաւաթիւ բազմութեան մէջ, դիցուք, Հայկի և նորա մերձաւոր սերունդների մէջ (որ են Արմենակ, Մանաւազ, Խոռ, Արմայիս, Շարայ, Գեղամ, Սիսակ) և մի սահմանափակ աշխարհում, ի հարկէ պիտոյ է լինէր դա մի ընդհանուր լեզու· բայց երբ որ փոքր ի շատէ բազմացաւ ազգը և պիտոյ է տարածվէր դէպ ի զանազան աշխարհներ, այնուհետև անպատճառ պէտք է յառաջանային զանազան բարբառներ, թէ շատ և թէ փոքր հեռանալով մայր բարբառի յատկութիւններից։ Եւ արդարև չէ գտանված մինչև այժմ մի փոքր ի շատէ տարածված ժողովուրդ որ, թէև նորա կրթութեան չափ ու սահմանը շատ նեղ էր, այնու ամենայնիւ խօսէր մին լեզու, բարբառական զանազանութենից բոլորովին ազատ· և անհնարին բան է մի այդպիսի ազգ, վասն զի աշխարհի հողը, սնունդը, պարապմունքը, նոյն իսկ եղանակը լինելով այլևայլ; պիտոյ է աննկատելի կերպով ներգործէին լեզուի գործարանների, ուրեմն և նոյն իսկ լեզուի վերայ։ Այդպէս, Հայերի սկզբնական լեզուն, երբ որ աշխատասէր ու հայրենասէր Արամը և մանաւանդ թէ Տիգրան մեծը շատ աշխարհների տիրապետեց փոքր Ասիայի մէջ, ազգի հետ միասին տարածվեցաւ օտար սահմաններում և այդպէս պատճառ տուեց յառաջանալու այլևայլ Հայկական բարբառների, որ ասվումեն Եզերականք։ Ցատկ և մաքուր բարբառը մնաց մայր և միջերկրեայ աշխարհի մէջ, որ Հայոց հեղինակները դնումեն Չորրորդ Հայքի մէջ և մանաւանդ թէ Տուրուբերան, Արարատ և Սիւնիք գաւառներումը, ուր և եղած են միշտ Հայկազունների թագաւորութեան և լուսաւորութեան կենտրոնքը։ Սկզբնական լեզուի փոփոխութեան վերայ խօսելով չէ պիտոյ մոռանալ և ժամանակի ազդեցութիւնը, մանաւանդ, որ մի լեզու դեռ ևս չփակված գրաւոր ձևերի տակ, այլև հետևելով միայն իւր անդադար շարժուն և կենդանի բնութեանը, շատ հեշտ կարող է այլայլվիլ· սորա վերայ յաւելացրու և այն բանը, որ Հայոց գաղթականքը զանազան սահմաններում խառնվելով այլախօսնիկ ազգերի հետ, պիտոյ է և սոցա լեզուներից ինչ ինչ ձևեր ընդունէին, որ օտար էին Հայոց մայր լեզուին, որպէս դարձեալ Հրէական, Չինէական և Հնդկական գաղթականներ եկաւորելով դէպ ի

Հայաստան և խառնվելով Հայերի հետ, պիտոյ է զանազան այլայլութիւնք յառաջացնէին նոցա լեզուի մէջ։

Հայոց լեզուի բարբառների թիւը եօթն է դնում Յոհան Երզնկացին Հին քերականութեան մեկնութենի մէջ, որ սոքա են. Կորճայք, Տայեցի, Խութային, Չորրորդ Հայեցի, Սպերացի, Սիւնի, Արցախային։ Այժմ խնդիր կայ մէջ տեղումը, թէ այս զանազան Հայկական բարբառները ինչ յարաբերութիւն ունէին թէ միմեանց հետ և թէ մայր յստակ բարբառի հետ, որ մնացած է միջերկրեայ ասած գաւառներումը. բայց այդ խնդիրը պիտոյ է մնայ միշտ անլուծանելի, որովհետև չունինք մեք ոչինչ գրաւոր յիշատակարաններ որոնցից կարող էինք իմաստասիրել այդ առանձին իրողութիւնքը։ Բայց յետին ժամանակներից եզրակացութիւնք գործել դէպ ի վաղեմին, շատ համարձակ բան է երևում։ Այսպէս մութն ու անորոշ չէ հին յունական լեզուի բարբառների պատմութիւնը. այս տեղ ամենայն բարբառ գտել է իւր մատենագրութեան հանդէսը. և ինչ բարբառով առաջին անգամը շարադրած էին այս կամ այն տեսակի ականաւոր գրուածներ, նոյն իսկ բարբառը մնացած է միշտ և այս տեսակ գրուածների համար։ Զոր օրինակ, յոնական բարբառին պատկանումեն առաւել հին բանաստեղծները, այսինքն Հոմերոս, Հեզիոդոս, Թէոգնիս և այլք, որոնց լեզուն էր այն խառն երևած, նախնական լեզուին առաւել մօտաւորը, որ յետոյ մնաց բանաստեղծական լեզու առհասարակ. բայց իսկական, առաւել մանուկ յոնական բարբառը երևումէ արձակագիր հեղինակների մէջ, որոնց գլխաւորքը են Հերոդոտոս և Հիպպոկրատէս։ Քնարերգու բանաստեղծների մասին պիտոյ է ասել, որ նոքա վարժ էին ամենայն բարբառների մէջ. բայց առաւել հին և հռչակաւոր քնարերգուքը էին Էոլացիք, և դոցա պարագլուխքը, Սափֆօ և Ալկէյոս. Անաքրէոնը ասած է իւր տաղերը յոնական բարբառով, միւսերի մեծ մասը դորական բարբառով։ Հարկաւոր է այս տեղ ծանօթաբանել, թէ, ինչպէս երևումէ, մի առանձին բարբառով մատենագրող հեղինակները ոչ միշտ ընդունել են իւրեանց գրուածների մէջ իւրեանց ժողովրդի լեզուն նորա բոլոր առանձին յատկութեններով միասին, այլ թէ շատ կամ փոքր ընտրել են այն բառերը և ձևերը որ չը լինելով միայն առանձին ազգային ցեղերի սեփականութիւնք, հասարակաց էին բոլոր ազգի լեզուին։ Եթէ Սոփրոնը գրել է իւր բանաստեղծութիւնը Սիրակուսացոց ժողովրդական բարբառովը, և Կորիննա Թեբայցոց բարբառովը, դորա հակառակ Պինդարը և Թէոկրիտը ընտրել են իւրեանց գրուածների համար այն ձևերը որ ոչ թէ միայն գտանվումէին մի առանձին ժո-

գաւառի տեղական լեզուի մէջ, այլ որ իւրեանց ժամանակի ընդհանուր դրական բարբառի մէջ գտանուումէին առհասարակ։ Ամենայն մատենագիր ձեւակերպել է իւր լեզուն ինքը, միտ դնելով հասարակութեանը որի համար գրումէր նա, կամ թէ նիւթին, որի վերայ խօսումէր, կամ թէ իւր յատուկ ճաշակին և սովորութեանը։ Արդարև նոյն իսկ բանաստեղծը է լեզուի արարիչը, այլև նորանով միայն կարող է մի լեզու մշակագործվիլ ու կրթեալ լինել, այսինքն մի բարեհնչիւն, ճշդապէս միտք բացայայտող և ճոխապարունակ ամբողջ լեզու դառնալ· բայց և բանաստեղծը այն նորաշինութիւնքը որ համարումէր հարկաւոր, չէ առած իւրեանից միայն, այլ հանելով միշտ ազգի լեզուի ընդհանուր գանձարանից· թէպէտև ինչ ինչ բառեր ու ձևեր հնացած ու անհետացած էին հասարակ գործածութեան մէջ, բայց ապագայ բանաստեղծը իւր աչքի առաջև ունենալով իւր նախնիքը, չը կամէր թոյլ տալ, որ կորչի հին լեզուի ճոխութիւնը· ուրեմն կարելի է ասել, որ ամեն մի բարբառ որով մատենագրումէր մի հեղինակ, ոչ թէ եղած է ժողովրդական լեզուի հարազատ օրինակը, այլ մի տեսակ գրաւոր լեզու։ Բայց նիւթը, որ նա գործ է դրել, այլև որին հետևելով կերպաւորել է մի հեղինակ իւր մտածութիւնքը, չէր կարող նա առնուլ իւր գլխից, այլ միայն լեզուի շտեմարանից և անալօգիայից (նմանակից ձևերից)։ Յունական բարբառների հանդէսը գնալով գնալով նեղանումէ, մինչև վերջումը անհետանումէ ի սպառ, մի ընդհանուր ազգային մատենագրական լեզուի մէջ։ Ինչպէս եղաւ այս բանը· քննենք հարևանցի։

Յունաստանը իւր ականաւոր հայրենասէր մարդերի ձեռքով հալածելով այն մեծահաս վտանգը որ Ասիայի կողմից յարձակվելով պիտոյ է ջնջէր երկրի երեսից Յունաց ազգը, Յունաստանը իւր ազատութիւնը, սուրը ձեռքին պաշտպանելով ու փրկելով Ասիական բարբարոսների երեսից, ասես թէ մի նոր հոգի ստացաւ և սկսեց գիտութեան և ճարտարութեան հանդիսումը սխրագործութիւնք անել, որ մնալու են մշտնջենաւոր զարմանքի ու մեծարանքի արժանի մինչև ժամանակների կատարածը։ Բայց այս պարծանքը պատկանումէ առաւելապէս Աթենացոց ազգին, որ Պարսից պատերազմերի միջոցին ճարեց իւր համար այնպիսի քաղաքական գերապատւութիւն, որ մի քանի ժամանակ բարձագլուխ տէրութիւնն էր Յունաստանի մէջ։ Այնպէս Աթէնքը դարձաւ այժմ բոլոր գիտութիւնների կենտրոն։ Հասարակապետական կառավարութիւնը որ ոչինչ տեղ այնքան անխառն չէր, ինչպէս Աթէնքումը, յառաջացրեց Ատտիկական ճարտարախօսութեան և թէատրոնական բեմի համար մի այնպիսի ազատութիւն,

որ լինելով կցորդ այլ պատուականութեանների հետ, կարող էր լրութեան ծայրին հասուցանել ոչ թէ միայն ճարտարախօսութիւնը և գրամատիկական բանաստեղծութիւնը, այլև դոցա հետ կից պատմագրութիւնը և փիլիսոփայութիւնը, նոյն և Ատտիկական լեզուին տալ մի այնպիսի կատարելութիւն և ընդարձակութիւն որին չէր կարող հասանել որ և իցէ մի այլ բարբառ:

Այնուհետև Յունաց ազգի բոլոր ցեղերը դիմումէին դէպ ի Աթէնք, իւրեանց անձը կրթելու համար, և յունական դպրութեան լայն ու արձակ բաժիններումը օրինակ ու գաղափար դարձան Ատտիկեցոց ականաւոր գրուածները: Սորա հետևանքը այն եղաւ, որ ատտիկական բարբառը ստանալով մի նախակարգ աստիճան միւսերի մէջ, փոքր մի յետոյ, մակեդոնական թագաւորութենից ծնած պետութեանների մէջ դարձաւ մի արքունի լեզու և ընդհանուր գրոց բարբառ: Այնուհետև բոլոր յունական ցեղերը և աշխարհները սկսեցին համարեա թէ ատտիկերէն միայն շարադրել իւրեանց գրուածքը: Այս ժամանակից ահա սկսեցին այդ լեզուն ուսուցանել դպրոցների մէջ և քերականութեան դասատուքը միտ դնելով այն ատտիկական գաղափարներին, վճռումէին թէ ինչ խօսք բուն ատտիկական և ոչ բուն ատտիկական էր: Բայց այս աւելի յետոյ ժամանակի յունական դպրութեան կենտրոնը յառաջացաւ Պտղոմէոսեանց թագաւորութեան օրերումը, Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքի մէջ[1]:

---

[1]) Եւ յատկապէս այս ժամանակամիջոցին, որ ասվումէ Աղէքսանդրեան դար, պատահումէ նոյնպէս մի յունական քերականութեան հիմնարկութիւն իբրև յունական լեզուի կանոնների համակարգութիւն: Թէպէտ արդարև յառաջուց ահա երևումեն լեզուի բաղկացական մասների վերայ քննութեան հետքեր, զոր օրինակ Պլատոնի ,,Կրատիւլոս,, անունով գրքի մէջ, բայց դոքա ըստ մեծի մասին շատ երեւակայական, ստուգաբանական մեկնութիւնք են, որ շատ նման էին մի ծաղրաբանութեան Սոփեստների, այսինքն իմաստակների վերայ, որ պարապումէին այդպիսի քննութեանների: Արժանի ուշադրութեան է արդիւնաբերութիւնը Արիստոտէլեսի որ համարվումէր Յունաց մէջ Կրիտիկայի և քերականութեան հիմնադիր, որպէս առհասարակ պիտոյ է ասել, թէ Արիստոտէլեսի համակարգող հանճարը գրեթէ բոլոր գիտութեանների հիմնադիրն է: Բայց այն ծանօթութիւնքը լեզուի վերայ, որ հանդիպումեն մեզ նորա բոլոր գրուածների մէջ, մանաւանդ նորա περὶ ἑρμηνείας գործի և նորա Պոյետիկայի 20, 21 և 22 գլուխներումը, պատկանումեն աւելի իմաստասիրական քերականութեանը, որպէս և ծանօթութիւնքը Ստոյիկեան փիլիսոփաների որ բաց ի Արիստոտէլից և Պերիպատետիկեան փիլիսոփաներից շատ առաւել ժրագլխութեամբ պարապել են այս գիտութեանը: Առաջին Յոյնը որ հանդէս բերեց մի պատշաճապէս կարգաւոր քերականութիւն, թէպէտ Ստուգաբանական մասի համար միայն, էր Դիոնեսիոս Թրակացին որ ասվումէ և Հռոդացի, Պոմպէոսի և Կեսարի օրերումը: Նորա քերականութիւնը τέχνη γραμματική անունով որ հնումը համարվումէր մի գլխաւոր գործ, թերի է եւրոպական ձեռագիրների մէջ, բայց աւելի լիակատար պահվել է հայ թարգմանութեան մէջ 4 կամ 5 դարուց: Եւրոպական օրինակը բաղկանումէ 21 գլխից,

Ատտիկական բարբառը դառնալով ընդհանուր, պէտք է նոյն ժամանակին սկսանէր նա, առ փոքր փոքր այլանդակվիլ, ըստ որում հեղինակները կէս մի ներս էին խառնում իւրեանց տեղայի բարբառներից քանի մի բան, և կէս մի փոխանակ ինչ ինչ անկանոնութիւնների և անսովոր երևած խօսքերի որ սեփական էին ատտիկական բարբառին, սկսեցին ներս բերել բնական և կանոնաւոր ձևակերպութիւնը, կամ թէ փոխանակ մի պարզ բառի, որ սովորական կեցութեան մէջ շատ կամ փոքր մի անգործածական էր, սկսեցին գործածել աւելի կիրառական ածանցեալ ձևը։ Այս մասին այնուհետև աշխատումէին քերականները (որ յայտնի են անունով Ատտիկիստոսք) շատ անգամ խմաստակութեամբ և չափազանցութեամբ խափանել իւրեանց չհաւանած կամ թէ ոչ այնքան գեղեցիկ խօսքերը, և ընդդիմադրել նոցա այլ խօսքեր հին ատտիկական բարբառից։ Այսպէս յառաջացաւ լեզուի մէջ այն սովորութիւնը, Ատտիկական ասելով հասկանալ այն միայն, ինչ որ կարելի էր հաստատել հին ականաւոր հեղինակների վկայութեամբ, և ինչ որ աւելի սահմանափակ մտքով սեփական էր նոցա։ Բայց ատտիկական լեզուից գոյացած սովորական լեզուն կրթեալ մարդու ասվումէր այնուհետև ը ն դ հ ա ն ո ւ ր, κοινή կամ թէ Հ ե լ լ ե ն ա կ ա ն, Ἑλληνική (յունական, այսինքն սովորական յունական)։ Այս և ապագայ ժամանակների մատենագիրքը ասվեցան այնուհետև հ ա ս ա ր ա կ ա խ օ ս ք οἱ κοινοί կամ թէ Հելլենք οἱ Ἕλληνες, ընդդիմադրվելով բուն Ատտիկախօսներին· բայց այս տեղ չէ պէտք երբէք մտածել մի առանձին բարբառ, որովհետև այս հասարակ բարբառը κοινὴ διάλεκτος գլխաւորապէս մնաց միշտ Ատտիկականը, և այս պատճառով ամենայն սովորական քերականութիւն Յունաց լեզուի ընտրումէ որպէս իւր գլխաւոր քննելի նիւթ, Ատտիկական բարբառը։

Այն տեղական լեզուներին, որ բազմատեսակ կերպով ներս խառնվեցան աւելի յետոյ ժամանակի յունական լեզուի մէջ, պատկանումէ մանաւանդ թէ Մակեդոնականը։ Մակեդոնացիք Յունաց ազգի հետ տոհմակից էին, որ համարումէին իւրեանց անձը Դորացոց կարգումը, որ և, ինչպէս աշխարհակալ մարդիկ, Յունաց կրթութիւնը տարան և տարածեցին իւրեանց ձեռքով տիրապետած բարբարոս աշխարհների մէջ։ Եւ Մակեդոնիայի մէջ խօսումէին և գրումէին յունա-

---

Հայկականը 26էջ։ Հայ ընագիրը ֆրանսիական թարգմանութեամբ և յունական օրինակը մօտին մինչև 21 գլուխը, հրատարակվեցաւ Ցակոբ Շահանեան Ջրպետի ձեռքով, երկու ձեռագիրների համեմատութեան հիման վերայ, այն յիշատակարանի մէջ, որ ասվումէ Mémoires et dissertations sur les antiquités nationales et étrangères par la Société royale des antiquaires de France, հատոր 6, Փարիզ, 1824, ութածալ, եր. 1—93։

րէն, բայց ոչ առանց ներս խառնելու ինչ ինչ առանձնութիւնք, որ և քերականները սովոր են որոշել որպէս Մակեդոնական ձևեր· որովհետև այս, աւելի յետոյ ժամանակի յունական կրթութեան գլխաւոր օթևանը էր Եգիպտոսի մէջ և նորա Աղէքսանդրիա մայրաքաղաքումը· այս պատճառով ասվում է դա և Աղէքսանդրիական բարբառ: Բայց և այսպիսի աշխարհների հայոյն բնակիչքը սկսեցին խօսել յունարէն (ἑλληνίζειν) և մի այդպիսի յունախօս Ասիայի, Հրեայ, Ասորի և այլն, ասվումէր այնուհետև Հելլենիստ ἑλληνιστής): Սորանից յառաջացել է այն սովորութիւնը Հելլենիստեան լեզու ասել այդպիսի յունախօս հեղինակների մատենագրութեան ոճը, որ խառն էր յունական լեզուի ընդդէմ շատ ձևերով և ասիական դարձուածներով: Այս լեզուն, ինչպէս բացայայտ է, ունի իւր հանդէսը յունարէն թարգմանած հրէական և քրիստոնէական յիշատակարանների մէջ, այսինքն Հին կտակարանի թարգմանութեան մէջ Եօթանասուն թարգմանիչների ձեռքով, և Նոր կտակարանի մէջ: Սորա վերայ յաւելացան նորանոր այլանդակութիւնք միջին դարերումը, երբ որ Կոստանդնուպօլիսը, հին Բիւզանդիոնը, դարձաւ յունական կայսերութեան թագաւորանիստ և այն ժամանակի մատենագրութեան կենտրոն, ուստի յառաջացան Բիւզանդեան հեղինակների մատենագրութիւնքը և վերջումը այժմուս գործածական նոր յունական բարբառը (Ռոմայիկէ): Սա, ինչպէս երևում է, ըստ մեծի մասին յառաջացել է Բոյոթեան բարբառից որ պահպանած էր իւր մէջ առաւելապէս Էոլեան-դոռական բարբառի հետքերը: Այս խնդրի վերայ արժանի է ընթերցանութեան այս գիրքը· Observations sur l'opinion de quelques Hellenistes touchant le Grec moderne par P. Codrica Athénien, à Paris, an XII.

Եթէ այժմ եզրակացութիւնք առնենք մեր մինչև այժմ ասածներից յունական լեզուի ընթացքի մասին, բացայայտ է արդէն, որ դորա մէջ տեսանվում է մի առանձին բան: Ամենայն կրթեալ ազգերի մէջ, սովորաբար մինը նոցա բարբառներից լինում է հիմք ընդհանուր գրաւոր լեզուի և ազնիւ խօսակցութեան: Յունաց մէջ այսպէս չեղաւ իսկոյն· լուսաւորութիւնը հասաւ նոցա մի այնպիսի միջոցում, երբ նոքա դեռ ևս բաժան բաժան, միմեանցից թէ իւրեանց աշխարհի դրութեամբ և թէ քաղաքական կարգերով անջատած տէրութիւնք էին: Եւ այս պատճառով ահա բանաստեղծ ու արձակագիր հեղինակ շարադրել է իւր գործը մինչև մօտ Աղէքսանդր Մակեդոնացու օրերը, ամեն մինը այն բարբառով, որի մէջ դաստիարակված էր նա, որ կամ թէ նախապատիւ էր համարել· և այսպէս յառաջացան Յոնիեան, Էոլեան, Դոռեան և Ատտիկական բանաստեղծներ ու արձակա-

գիր մատենագիրք, որոնց գրուածքը շատ կամ փոքր մնացել են մինչև այժմ։ Ոչինչ ազգի մէջ, ոչ հին և ոչ նոր ժամանակներում չէ եղած մի այսպիսի օրինակ։

Եւրոպական լեզուներից շատերի մէջ կան բարբառներ որ յառաջ ունէին իւրեանց յատուկ մատենագրութիւնքը (որպէս Շվաբիայի բարբառը Գերմանիայի մէջ 32 դարումը, Պրօվանսալների Դ՚օք անուանով լեզուն), բայց յետոյ դարձան ռամիկ ժողովրդի սեփականութիւն։ Այս փոփոխութիւնը յառաջացաւ, երբ որ այն ցեղերը, որ խօսումէին այդ բարբառներով, բարձրացան դէպ ի մի այնպիսի իմացական կրթութեան աստիճան, որ կարող էին ստեղծել մի ընդհանուր դպրութիւն (մատենագրութիւն)։ Եւ մի այսպիսի ժամանակ պատահեցաւ այն միջոցին, երբ ըստ մեծի մասին դիպուածական հանգամանքներով լուսաւորութիւնը ասես թէ հաւաքվեցաւ մի վառվողական կենտրոնում, և այդպէս այդ բարբառներից մինը մշակվելով ու կրթվելով միայն ուսումնականների գրչի տակ, դարձաւ բոլոր ժողովրդի բարբառ։ Զոր օրինակ Ֆրանսիայումը Օյլ ասաց բարբառը յաղթող հանդիսացաւ Օք ասած բարբառի վերայ, թէպէտ սա իւր կրթութիւնը ստացել էր աւելի յառաջ, քան թէ նա։ Այդպէս Մեյսէնեան բարբառը Գերմանիայի, 16 դարու կրօնի բարեկարգիչների և այլ հեղինակների աշխատութեամբ մաքրվելով, հալածեց Ստորին և Վերին Գերմանիայի բարբառները, շինելով նորանց ռամիկ ժողովրդի լեզու։ Այդպէս Կաստիլիայի բարբառը դարձաւ Սպանիական դպրութեան լեզու, որպէս Տոսկանեան բարբառը իտալական մատենագրութեան լեզու։ Նոյն բանը պիտոյ է հասկանալ և Հայոց մասին, ուր, ինչպէս բաւական զօրաւոր պատճառներից երևումէ, Չորրորդ հայեցի բարբառը որպէս կենտրոնական լեզու ազգի դարձել է նախապատիւ գործածականը թէ Հայոց վիպասանների տաղերգութեան մէջ և թէ յետոյ որպէս մատենագրական լեզու Հայոց հեղինակների գրչի տակ։ Հայոց վիպասանների երգերից մի քանի հատուկտոր բան հասել են մեզ Մովսէս Խորենացու պատմութեան մէջ, ուր լսումենք թէ այդ երգերը հինգերորդ դարումը Վասպուրական աշխարհի Գողթն գաւառումը երգումէին բնակիչքը. բայց լեզուն շատ յետոյ է սկսել մատենագրութեան տակ ընկնել։ Ինչպէս երևումէ, Հայոց ազգի կեանքը Ասիայի մէջ այն վաղաժամանակեայ դարերի մէջ չէ ունեցել այնքան ազատութիւն, որ կարողանար հոգի ստանալ և իւր ներքին իմացական ու բարոյական աշխարհը դուրս թափել և հաստատել գրաւոր յիշատակարաններով։ Հայոց ազգը ըստ մեծի մասին օտար թագաւորութենների լծի տակ, ուրեմն ստրուկ և ծառայ, ի հար-

կէ պիտոյ է անմասն մնար այն պարծանքից որ ճարել է իւր համար Ցունաց ազգը աւելի յաջող հանգամանքների տակ· և առանց ազատութեան անկարելի է մատենագրութիւն, անկարելի է գիտութեան յառաջադիմութիւն և բարգաւաճութիւն։ Եթէ Հայկազանց թագաւորութիւնը մեր նահապետ Հայկից մինչև Վահէ համարենք ոչ թէ առասպելական ժամանակ, այլ ստոյգ պատմութիւն, այնուհետև զարմանալի է մեզ, թէ ինչպէս մի ազգ այդքան հարիւրաւոր տարիներ, երբեմն տիրակալ և հրամայող, երբեմն ծառայ օտար ազգերի, չէ կարողացել մինչև այն աստիճան հասկանալ իւր անձը, որ իւր պատմական գործերը, իւր Արամների, իւր Տիգրանների աշխարհակալութիւնքը Հայաստանից դուրս, գրաւոր յիշատակով թողուր իւր գալոց զաւակներին որպէս դաստիարակութիւն։ Ցաւելի է ասել, որ այս պատմական անցքերի յիշատակութիւնը նոյն իսկ Հայերի հոգու մէջ կենդանացնելու համար, հարկաւոր է եղել, որ մի օտար իշխան, մի պարթևացի Վաղարշակ իւր եղբայր Արշակ մեծիցը թագաւոր կարգվելով Հայաստանի վերայ (150 տարի Քրիստոսից յառաջ), առաջին անգամը հարց ու խնդիր գործէր Հայոց ազգի պատմութեան մասին, և այս բանի մէջ ոչ թէ Հայոց ազգային պատմագրութիւնքը, այլ մի Ասորի մար Աբաս Կատինա ձեռնտու լինէր օտարազնեայ թագաւորի հարցասիրութիւնը լցուցանելու համար։ Խոստովանումենք, քաղցր չէ մեզ լսել այն խօսքերը Վաղարշակ թագաւորի բերանից մեր նախահարց վերայ, որ Մովսէս Խորենացին բերումէ իւր պատմութեան մէջ գլ. 1. եր. 8. »Զի ոչ կարգ ինչ լեալ աստ յայտնի, և ոչ մեհենից պաշտամունք, և ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն և վայրենի«։ Սորանից երեւումէ ահա, որ Հայոց ազգի կեանքը այն հեռաւոր դարերումը պիտոյ է թանձր անմտութեան քնի մէջ անցած լինի· այս մասին, նոյն իսկ Մովսէս Խորենացին շատ դառն բառերով գանգատաւոր է իւր պատմութեան մէջ, և նորա բարկ ու կծու նախատինքների ծանրութիւնը ընկնումէ իշխանների վզին, որ ինչպէս լսումենք Խորենացու բերանից, չէին հոգացել իւրեանց գործերը աւանդել յետոյ գալոց ազգերին· և այդպիսիներին որ իւրեանց համար բարի կամեցած չէին, ինչպէս կարող էր, ասումէ մեր Քերթողահայրը, պատկանաւոր լինել մեր յանդիմանութիւնը, կամ թէ տեղիք ունենալ մեր աւելի մեծ պահանջողութիւնը, որ դոքա փոյթ ունեցած լինէին ազգային բերանացի երգերը և աւանդութիւնքը հաւաքելու և կարգի դնելու։

Բայց և Հայք, մեր սիրելի ազգը, պիտոյ է միանգամ զարթնուին իւրեանց քնից և հասկանային թէ իւրեանց լեզուի մէջ դրած էր մի մեծ

գանձ, մի մեծ լուսաւորութեան ասպարէզ: Միայն թէ պիտոյ էր նոցա մօտաւորվիլ եւրոպական հոգուն: Հայոց ազգը սկսեալ Աղէքսանդր Մակեդոնացու աշխարհակալութիւններից Ասիայի հողի վերայ, խլրտվում իւր հոգեղէն քնից, և զարկուած ստանալով հելլենական ազգի լուսաւորութենից, փոխում իւր կեանքի ընթացքը. և Հայոց համար բացվում ճանապարհը դէպ ի հռչակաւոր Յունական դպրոցները Կեսարիայի, Կոստանդնուպօլսի, Աղէքսանդրիայի և Աթէնքի: Բայց ազգը դեռ ևս չունի գիր, և ունեցածը Պարսից և յունական գիր է, որ ի հարկէ պիտոյ է շատ անյարմար լինէր Հայոց բուն ձայներին: Ազգի հոգին ու իմացականութիւնը օր աւուր զօրանալով, ահա ներս է մտանում մի այլ հոգեպէս դղրդեցուցիչ ու զարթուցիչ իրողութիւն, այսինքն Աւետարանի քարոզութիւնը Հայաստանի հողի վերայ, մեր խնկելի մեծ Հայր Գրիգորիոս լուսաւորչի բերանով: Այժմ հարկաւոր էր ուսումն, դաստիարակութիւն, դպրոց, որ անկարելի է առանց մատենագրութեան: Ազգի հոյակապ մարդիկը Սահակ պարթևացի և Մեսրոպ Մաշտոց, իմաստուն Վռամշապուհ թագաւորի գործակցութեամբ վերահասու լինելով թէ առանց հնարաւորելու բուն հայկական գրութիւն, առանց օրինաւոր համակարգութեան մի ազգային այբուբենքի չէ կարելի մատենագրութիւն և ազգային կրթութիւն, ամենայն ջանք ու փոյթ մէջ են բերում, այդ մեծ ազգասիրական խորհուրդը իրագործելու համար: Մեսրոպը և Սահակը նախ և յառաջ փորձելով Դանիէլեան ասած տառերը որ կային ազգի մէջ և տեսանելով որ դոքա և պակասաւոր և անյարմար էին վերածելու Հայոց ձայները, այնուհետև Մեսրոպը մի քանի աշակերտներով ճանապարհորդում դէպ ի Մեսոպոտամիա, և այս տեղ Եդեսիա (այժմ Ամիդ) քաղաքում ծանօթանում մի հեթանոս հռետորի Պլատոն անունով, և սորա հետ փորձ փորձելով, մի լիակատար Հայոց այբուբենք կարգադրելու, բայց փորձը անյաջող գտանելով, Մեսրոպը դիմում մի այլ յոյն գիտնաւոր Ռուփանոսի մօտ և սորա գործակցութեամբ, Սամոս կղզում գլուխ է բերում Հայոց նշանագրերի յարմարաւոր ձևաւորութիւնը, առաջնորդ ընտրելով իւր համար Յունաց այբուբենքը:

Այնուհետև կարող էին Հայք մի ազատ մատենագրութեան հանդէս բանալ. ազգի հոգին զօրացել էր, նիւթական պայմանքը տուած էին, իմացական շարժառիթքը գոյացած էին քրիստոնէութեան սերմերից, որ ազգի մէջ արմատանալու համար, կարօտ էր դպրոցների և դաստիարակութեան, ուրեմն և մատենագրութեան: Այժմ ահա մեր Հայոց հին լեզուն, որ մինչև այն դարը եղել էր միայն ժողովրդի բերանացի խօսք կամ թէ, շատ շատ, հեթանոս քրմերի ձեռքով մանաւորա-

պէս մշակված լեզու, այժմ Հայոց լեզուն սկսեց բազմօրինակաբար գրաւոր մշակութեան տակ ընկնիլ և բանալ ազգի առաջև իւր հրաշալի ճոխութիւնքը, իւր պատուական գանձերը որ այնքան երկար ու ձիգ դարեր մնացել էին թաղած ազգային հոգու խորքի մէջ և սպասումէին մի ելեքտրական կայծի, որ բորբոքէ իմացականութեան կրակը։ Միտ դնելով Հայոց ազգի քաղաքական ու իմացական կեանքի կենտրոններին (գլխաւոր տեղերին) պիտոյ է, ինչպէս ասվեցաւ վերևումը, եզրափակել, որ հիմքը այն գրաւոր լեզուի, որ յառաջացաւ Հայոց հեղինակների գրչի տակ շատ կամ փոքր կատարելութեամբ, նայելով հեղինակների զանազան կրթութեանը և ճաշակին, եղել է Չորրորդ Հայոց կենդանի ժողովրդական բարբառը, մանաւանդ թէ Արարատեան աշխարհի լեզուն։ Եւ մեր հեղինակները գրելով կենդանի ժողովրդի դաստիարակութեան համար, չէին կարող այլ հիմք առնուլ իւրեանց գրուածների համար, եթէ ոչ նոյն իսկ ազգի և նորա փոքր ի շատէ լուսաւորեալ կարգերի խօսակցութեան ոճը։ Այո՛ չէին խօսել նոքա ամենևին այնպէս, ինչպէս ժողովուրդը· այդ ո՛չ մի ազգի մէջ և ո՛չ մի ժամանակ եղած չէ· պատճառ, գրաւոր ու բանաւոր լեզուի պայմանքը այլ են և ունին իւրեանց առանձին իրաւունքները։ Բայց սակայն հեղինակները մշակելով, կանոնի տակ ձգելով, գեղեցկացնելով լեզուն և շինելով նորան բազմօրինակ գաղափարների և մտաւորական նկարագիրների անօթ, չէին կարող հեռանալ ժողովրդի բուն լեզուից· ոչ· այդ կը լինէր կամապաշտութիւն, մի հեշտ հնար իւրեանց գրուածքը անհասկանալի ու անպէտ կացուցանելու ժողովրդին։ Թո՛ղ այդ լեզուի վերայ ազդեցութիւն ունեցած լինին և ազգի զանազան բարբառները որ լինելով մայր լեզուի ճիւղերը, կարող էին շրջանկատ հեղինակին օգտել իւրեանց ընտիր և պիտանի նիւթերով։ Մի ազգի լեզու ստանալով գրաւոր կերպարանք, այսինքն մատենագիրների աշխատութեամբ կրթվելով և կանոնաւորվելով, այնուհետև դառնումէ դա ընդհանուր գրաւոր լեզու· և ամենայն ոք պարտական է ուսանել այդ լեզուն, եթէ կամենումէ մասնակից լինել այն լուսաւորութեանը, որ դրած է գրաւոր լեզուի մէջ։ Ոչ թէ մի ազգ ուսանումէ մի այդպիսի լեզու, որովհետև դա չէր ժողովրդի բուն լեզուն, կամ թէ մեռած լեզու էր, այլ որովհետև դա էր դաստիարակութեան և կրթութեան ճանապարհ։ Անտեղի տարակուսանք է, որ մեք կարդումենք պատուելի Գէորգ Ախվերդեանի յառաջաբանութեան մէջ, եր. 20. (Սայաթ-Նովայ, լոյս գցած աշխատասիրութենով Գէորգեայ Ախվերդեան, Մոսկվա 1853) »իբր թէ բոլոր Հայաստանի Հայերն մէկ ժամանակ խօսում ըլին էլել մեր հինգերորդ դարու թարգմանիչներու ու սրանց թարգմանած աստուածա-

շունչ գրքի լեզուով։ Կարելի է հինգերորդ դարու Հայերին մեղանից հարիւրապատիկ աւելի հեշտութենով էին հասկանում էն լեզուն, բայց խօսելով չէին խօսել, էնդուր որ, ինչպէս հիմի, նոյնպէս և ամէն ժամանակ ու ամէն ազգի մէջ սովորելու է էլել գրաւոր կամ գրականական լեզուն«։ Այդպէս· չէ, տարակոյս չը կայ, այլ ամենևին բացայայտ է, որ ոչ Յունաց ազգը խօսել է երբէք ամենևին այնպէս, որպէս երգել է Հոմերոսը, գրել է Հերոդոտոսը, Թուկիդիդէսը, Պլատոնը և միւսեր, այլև ոչ հռոմէական ժողովուրդը խօսել է երբէք Կիկերոնի ճարտարահիւս տրամաբանական ոճով, բայց նոքա խօսել են բուն յունարէն ու լատիներէն, մի փոքր բան ևս մէջ խառնելով գաւառական լեզուից· բայց մի՞ թէ իւր ազգային լեզուն դպրոցների մէջ ուսանելուց պիտոյ է մակաբերել, թէ ազգը ուսել է կամ ուսանումէ միայն գրաւոր լեզուն, որովհետև չէր դա ժողովրդի բարբառը։ Ոչ· այդպէս չէ· գրաւոր լեզուն միայն կարելի է ուսանել յատկապէս, որովհետև դա կանոնների տակ փակած, մշակած ու կատարելացրած լեզու է և զանազան տեսակ լուսաւորութեան աղբիւր։ Այս է ահա գրաւոր լեզուի ուսումնասիրութեան խորհուրդը, և ոչ թէ որ ժողովուրդը չէր խօսում այդպիսի վայելուչ, մշակած ձևերով իւր հասարակ կենցաղավարութեան մէջ։ Ամենայն մարդ գիտէ, որ Ռուսաց այժմեան լեզուն, թէ գրաւորը և թէ գործածականը ժողովրդի մէջ մի և նոյն է էապէս· այնու ամենայնիւ Ռուսաց մանուկը պիտոյ է ուսանի դորան դպրոցների մէջ կանոնաւոր կերպով, և ինչ որ իւր ծնողից լսելով ուսած ու իւրացուցած էր բնական ազդեցութեամբ, պիտոյ է կրկնէ միւսանգամ, տեսական կերպով, քերականութեան կանոնների հիման վերայ, որ թէև չէ հեղինակների մտքի գիւտ և հնարաստեղծութիւն, բայց նոցա ձեռքով ժողովրդի լեզուից մտածութեամբ ու քննութեամբ շինած կանոնների գիտնական համակարգութիւն։ Թող Հայոց ժողովուրդը իւր հինգերորդ դարու թարգմանիչների լեզուն այլ տեսանէր քան թէ իւր խօսեցածը, թող այդ թարգմանիչները իբրև հեղինակք այլապէս գրած լինէին քան թէ յատկապէս խօսումէր ժողովուրդը, այնու ամենայնիւ այդ, ազգի լեզուն էր էապէս, Հայոց ազգի լեզուն էր ընդհանրապէս, միայն թէ ժողովրդի բերանում, պարզ ու անմշակ, բայց հեղինակների գրչի տակ կոկած ու մշակված։ Եւ Հայոց այն ժամանակի ուսանելը իւրեանց գրաւոր լեզուն ոչինչ յարակցութիւն չունի մեր այժմեան ուսանելուն գրոց հին լեզուն, որ մեռած է մեր համար, բայց այն ժամանակը բղխումէր կենդանի աղբիւրից և նոյն ժամանակի ու կեանքի պատշաճ գրաւոր լեզու էր։

Երբ որ մի ազգ ժամանակի հետ յառաջ խաղալով, փոխումէ իւր

կեանքի պայմանները, այնուհետեւ այդ նոր կեանքի համար պիտոյ է նա ծնուցանէ եւ նոր ձեւեր, նոր կերպարանքներ· պատճառ, նոր հոգին կամի եւ նոր ձեւ։ Հեթանոսական դարերի ասպարէզը աւարտուել էր եւ Հայաստանի հողի վերայ ընկել էին Քրիստոնէութեան սերմերը· նոր հայեցուածքը եւ նոր ըմբռնողութիւնքը պիտոյ է ցոլանալով պատկերանային եւ լեզուի մէջ։ Հայերը մի երկարատեւ խաւար գիշերից յետոյ, հանդիպելով այսպիսի լուսաւոր օրի, իսկոյն բացվեցան նոցա աչքերը եւ նոքա պայծառապէս հասկացան թէ արդարեւ կարելի է լեզուն բաց ի նորա մասնաւոր եւ արտաքին գործադրութեննից վեր քարշել դէպ ի մի այլ աստիճան, շինելով նորան մի ամբողջ յարմարաւոր կազմած մտածութենների եւ զգայողութենների։

Այս մեծ առաքինական վաստակը վաստակել են Հայոց ազգի համար Հայկական եկեղեցու առաջին ուսուցիչքը, մեր երանելի սուրբ Թարգմանիչքը· փառք եւ պարծանք նոցա, եւ մեծ շնորհակալութիւն մեր կողմից։ Բայց զարմանալով ու գովելով, չէ կարելի ոչինչ առաքինական վաստակ արժանապէս գնահատել։ Ուրեմն եկէ՛ք քննենք ու հասկանանք եւ սրտի մտքով ճանաչենք թէ մեր հայախօս հեղինակները չորրորդ եւ հինգերորդ դարու մէջ ինչպէս են մշակել ազգային լեզուի նիւթը, ինչպէս են յառաջացուցել այն մատենագրութիւնը որ դարձել է կանոն եւ գաղափար ապագայի համար մինչեւ 13 դարը։ Հայոց իմացական կրթութեան, այլ եւ քրիստոնէական լուսաւորութեան աղբիւրը լինելով Յունաստան, շատ բնական է, որ Յունաց, մանաւանդ թէ վերջին Յունաց լուսաւորութիւնը պիտոյ է մեծ ազդեցութիւն ունենար Հայոց լեզուի կրթութեան վերայ։ Մեր հեղինակները սկսել են իւրեանց գրաւոր վաստակքը ըստ մեծի մասին թարգմանութեններով յունական լեզուից, որ նայելով ժամանակի պիտոյքին, պիտոյ է լինէին եկեղեցական հարց գրուածք։ Մի փոքր խորին քննութեան տակ ձգելով Հայոց աստուածաշունչ գիրքը որ դարձել է մեր հին հայկաբանութեան աղբիւր, կը տեսանենք որ Հայք համարեա թէ բառ առ բառ թարգմանել են հելլենական բնագիրը եւ ամենայն հաւատարմութեամբ հետեւելով հելլենական ոճին, տուել են Հայոց լեզուին մի այնպիսի կանոնաւորութիւն, այնպիսի ճիշդ քերականական ձեւեր, այնպէս գեղեցիկ նրբութիւնք, որ կարող էին միայն գոյանալ այնպիսի չքնաղ օրինակից, ինչպէս Հելլենական կոկած ու սրբած լեզուն էր։ Մովսէս Խորենացու լեզուն իւր »Հայոց պատմութեան« մէջ եւ »Պիտոյից գրքումը« ցուցանումէ նոյնպէս մի շատ հելլենական կրթութիւն։ Դաւիթ անյաղթը, պիտոյ է ասել, երեւումէ աւելի հելլենախօս քան թէ հայախօս· մի ցաւելի բան արդարեւ, բայց արժա-

նի ուշադրութեան, որ այդ հեղինակը իւր լեզուի մէջ առաջին փիլիսոփան է եղել և այլապէս չէր կարող զգեստաւորել իւր մտածութիւնքը քան թէ հելլենական ոճով, պատճառ որ Հայոց լեզուն դեռ ևս անպատրաստ էր այդպիսի նիւթի համար։ Ագաթանգեղոսը, Ղազար Փարպեցին, Եղիշէն և միւսերը աւելի պարզախօս և քաղցր են, թէպէտ նայելով լեզուի կերպարանքին և մտքերի տրամաբանական ձեւաւորութեանը, անուրանալի է մնում հելլենական հոգու ներկայութիւնը այդ գրուածների մէջ։ Թէ բուն հայախօսութիւնը ինչպէս է եղած, դժուար է այժմ վճռել, որովհետև դորա համար պիտոյ էր մեզ ունենալ մեր աչքի առաջև այնպիսի ժամանակների գրաւոր յիշատակարանք, երբ որ Հայերը դեռ ևս կապակցութիւն չունէին Յունաց հետ։ Քրիստոնէութենից յառաջ եղած հեղինակները, այսինքն Լերուբնաս եդեսացի, Ուլիպ հեթանոսական քուրմ Անիու կռքատնումը, Արդիթէոս յայտնի են մեզ իւրեանց անուններով միայն։ Վերջինս ընդունելով քրիստոնէութիւնը, ստորագրել է Լուսաւորչի և նորա Արիստակէս ու Վրթանէս որդիների վարքը. այս գրուածից Մովսէս Խորենացին մի քանի հատուկտոր բան պահել է իւր պատմութեան մէջ, գիրք 2, եր. 80։ Եւ այս հեղինակների գրուածքը, եթէ պահած լինէին, չէին կարող տալ մեզ ճիշդ տեղեկութիւն Հայոց անխառն և բուն Հայախօսութեան վերայ, որովհետև ինչպէս Հայոց քրիստոնէութիւնը նոյնպէս և հեթանոսութիւնը շատ մօտ կապակցութիւն ունի Յունաստանի հետ։

Բայց չէ պիտոյ միշտ դէպ ի մին կողմ խօսել։ Հայոց լեզուն ասիական հոգու ծնունդ լինելով, պիտոյ է ունենար և իւր առանձին քերականական ձևերը, դիցուք շատ բանով մօտաւոր էր հելլենականին, ինչպէս պարսիկ լեզուն զարմանալի յարակցութիւններ ցուցանումէ յունականի հետ խօսելու ոճի մասին։ Այս բանը հեշտ է բացայայտել պատմաբանական ճանապարհով, ըստ որում Յունաց ու Պարսից և Յունաց ու Հայոց մօտաւորութիւնը միմեանց հետ շատ հին է, մանաւանդ թէ Յունաց ու Պարսից մասին։ Բայց մի այնպիսի սաստիկ ազդեցութիւն որ եղել է հելլենական լեզուի կողմից մեր Հայոց լեզուի վերայ, անօրինակ բան է։ Յունական բառերը որ ներս են մտել հայերէն գրուածների մէջ, շատ սակաւաթիւ են. բայց այն ուսումնական և գիտնական ոճը որ ստացել է Հայոց լեզուն թարգմանելով յունաց լեզուի գրուածքը, այդ է մեծ ուշադրութեան խնդիրը։ Արդարև, դորանով ստացել է մեր լեզուն օտարաձևութիւն, հեռացել է ազգի բուն լեզուախօսութեան ոճից, բայց մեր կարծիքով, Հայոց ազգի շահաստացութիւնը ընդհանրապէս աւելի մեծ է քան թէ իւրային սեփակա-

նութեան կորուստը։ Եւ գիտութիւնը յառաջ տանելու համար, ամենայն ազգերի մէջ եղած են այդպիսի փոխառութիւնք աւելի կիրթ և ծաղկեալ օտար լեզուներից։ Նայեցէք Լատինականի վերայ, նայեցէք Գերմանականի, և այժմուս Ռուսաց լեզուի վերայ, որ իւր մտածութեան ասպարէզը լայնացնելու համար ընդունել է այնքան ֆրանսիական և գերմանական ձևեր, որ առ փոքր փոքր մարսում է և հասարակ ժողովրդի ստամոքը։ Բայց ուրիշ հայեացքով, մեծապէս կը սխալվէինք, եթէ ասէինք թէ Հայոց լեզուի այդպիսի կերպարանագործութիւնը հնարաւոր էր միայն Յունաց լեզուի ազդեցութեան տակ․ ոչ, այդ կերպարանագործութեան սերմերը, վերածաղկելը դէպ ի մի առաւել բարձր հոգեղէն ներգործականութիւն պիտոյ է հետևեցուցանել մի սկզբնական աղբիւրից, ուր նոքա որպէս քնած կամ թէ յառաջագոյն ձևաւորած կային ազգի թէ իմացական ընդունակութենների և թէ լեզուի մէջ։ Մեր թարգմանիչքը չեն եղած մեր լեզուի սկզբնական ճարտարապետքը, այլ միայն կատարելագործել են իւրեանց ազգից ժառանգած լեզուն․ նոքա գործ են կատարել, ինչպէս պիտոյ էր ամենայն հեղինակի գործ կատարել․ այսինքն լեզուի սեփական նիւթը առել են ժողովրդից և զուգած ու զարդարած յետ են տուել նորան ժողովրդին։ Այսպէս ենք հասկանում մեք մեր թարգմանիչների վաստակը։

Հայոց յստակ գրաւոր լեզուն գնալով գնալով, ժամանակի կերպ կերպ ազդեցութենների տակ, իմացիր դու այն անդադար քաղաքական փոփոխութիւնքը ազգի դրութեան մէջ, Պարսիկների, Արաբացոց, Սելջուկեան Թաթարների և Մօնղօլների ծառայութեան լծի տակ, այն դառն հալածանքները այլազգիների ձեռքի տակ, որոնցից ջարդուփշուր լինելով ազգը, ցան ու ցիր է եղել դէպ ի աշխարհի չորս կողմը — Հայոց գրաւոր լեզուն անպատճառ պիտոյ է այլանդակվէր և կերպարանափոխ լինէր, ինչպէս եղել է նոյն իսկ ազգը․ և գրաւոր մաքուր լեզուն նուազելով կամ վերջանալով, պիտոյ է ժողովրդական բարբառքը զօրանային և հաստատէին իւրեանց թագաւորութիւնը հին լեզուի աւերակների վերայ։ Հայոց գրաւոր լեզուն սկսանում է խանգարվիլ 11 երորդ դարուց և գնալով գնալով հասանում է այն դրութեանը որի մէջ կայ այժմուս։ Յոհաննէս Երզնկացի Պլուզը 13 դարու հեղինակ, վերջին մատենագիրն է, որի գրուածքը արժանի են Հայկաբանութեան ընտիր ժամանակներին։ Եթէ համեմատենք Հայոց լեզուի կերպարանափոխութիւնքը այն յեղափոխութենների հետ, որոնց ենթարկվել է լատինական լեզուն, պիտոյ է ասել թէ այն վեր ի վայր կործանութիւնքը և օտարաձայն յաւելուածքը որ տեսանումենք իտալական լեզուի մէջ, չեն այնքան սաստիկ Հայոց ժողովրդական լեզուի մէջ։ Այն

տեղ չքանումն լատինականի հոլովք ու հոլովմունք, բայերի լծորդութիւնքը կորուսանումն իւրեանց պարզ կանոնաւորութիւնքը, կամ կրճատվումն կամ թէ ստանումն օտար յաւելուածք· բայց արմատը ուստի յառաջացաւ նոր լեզուի քերականութիւնը, մնում է էապէս և գլխաւորապէս, նոյն իսկ ջարդած ու փշրած լեզուի արմատը: Եւ օտար գերմանական ազգերը ներս մտանելով հռոմէական թագաւորութեան զանազան գաւառների մէջ և կործանելով Հռոմայեցոց իշխանութիւնը, արդարև նոր հռոմէական լեզուաշինութեանը տուել են բազմաթիւ բառեր, բայց քերականական ձևերի մէջ դժուար էր գտանել այդ օտար ազգերի բարբառներից նշանաւոր հետքեր: Այսպէս չէ երևում բանը Հայոց լեզուի յեղափոխութեան մէջ· օտար նիւթը շատ սաստիկ ներգործել է այս տեղ խօսելու ոճի վերայ: Հայոց ազգը երկար ժամանակ Պարսից, Արաբացոց և Տաճիկների իշխանութեան տակ մնալով, ոչ թէ ներս է առել իւր մէջ բազմաթիւ այլազգի բառեր այնպիսի ըմբռնողութենների համար, որոնց համար ունէր նա իւր սեփական ազգային բառերը, այլև Տաճկի խօսակցութեան ձև, տաճկային դասաւորութիւն բառերի, այնպէս որ մեր ժամանակի Հայը, մանաւանդ թէ Օսմանեան տէրութեան մէջ, ոչ թէ միայն Տաճկի բառեր շատ գործ է ածում իւր խօսակցութեան մէջ, այլև իւր մտածութիւնքը բացայայտում է Տաճկի քերականութեան ձևերով, ուրեմն և մտածում է տաճկերէն: Եւ նոր լեզուի հեղինակքը եւրոպական Տաճկաստանի մէջ թէպէտ գրումէին հայերէն առանց ներս խառնելու օտար բառեր, բայց մի և նոյն տաճկական լեզուի հոգով: Թէպէտ Վիլհելմ ֆոն Հումբոլդ մեծ լեզուագէտը իւր ականաւոր շարադրութեան մէջ [1]) ասում է, թէ ազգերը չեն այնպէս հեշտ թոյլ տալիս յեղափոխել այն ձևը որով նոքա սովոր էին զգեստաւորել իւրեանց մտածութիւնքը· բայց կարծեմ, այս տեղ պիտոյ էր ուշադիր լինել այն ազգի որպիսութեանը որի վերայ ներգործումէր մի օտար ազգի լեզու· պատճառ, եթէ մի թոյլ ազգ, առանց մի դերաղանց լուսաւորութեան ընկնում է մի օտար իշխանութեան տակ, երբէք կարող չէ պահպանել իւր լեզուի ազատութիւնը և անարատութիւնը: Պարսիկը և Արաբացին յաղթելով Հային, տուել են նորան անհամար բառեր ու խօսքեր· բայց Տաճիկը իշխելով քրիստոնեայ Հայի վերայ խախտել է միանգամայն և նորա լեզուի հիմքերը, քերականական ձևերը և բառերի դասաւորութիւնը:

Հայոց նոր լեզուի բարբառները շատ կամ փոքր զանազան են մի-

---

[1]) Ueber die Verschiedenheit des menschlichen Sprachbaues und ihren Einfluss auf die geistige Entwickelung des Menschengeschlechts. Berlin, 1836. եր. 286—287.

մեանցից, միտ դնելով զանազան գաւառներին ուր բնակումէին Հայք[1]։ Բայց պիտոյ է առհասարակ ասել այս տեղ, որ փոքր ի շատէ կըրթեալ մարդիկ կարող էին հեշտութեամբ հասկանալ միմեանց, ինչ գաւառից ևս լինէին։ Աւելի խանգարված բարբառքը էին Ագուլիսեցոց և բուն Թիֆլիզեցոց. սոցա լեզուի վերայ, ինչպէս երևումէ, շատ ներգործել է մանաւանդ թէ Վրաց լեզուն։ Պարոն Ախվերդեանը վերոյիշեալ յառաջաբանի մէջ, երես 19–20, կարծումէ որպէս թէ Թիֆլիզի բարբառը եղերական բարբառներից մինն է և ունի իւր «ինքնակայ» յատկութիւնքը, և ոչ թէ աղճատվելով գոյացած էր հին գրաւոր լեզուից։ Այդ կարծիքը կամենումէ հաստատել Պարոն Ախվերդեանը այսպիսի ապացոյցներով. թէ Թիֆլիզի բնիկ ժողովուրդը Հայոց բաղաձայն տառերը շատ կամ փոքր հնչումէ հին սովորական ձևով։ Արդարև Թիֆլիզեցին տառս բ արտասանումէ միշտ աւելի սաստիկ քան թէ Հայաստանի, Հաշտարխանի, Ղզլարի, Մոսկվայի և Պետերբուրգի Հայը, բայց և սոքա արտասանութեան մէջ փոքր ի շատէ զանազանումեն բ տառը պ ից։ Թիֆլիզեցոց արտասանութիւնը դ տառի շատ անհաստատ է, երբեմն որպէս բուն դ լսվելով և երբեմն ամենևին թ. ինչպէս ինքը Ախվերդեանը գրումէ միշտ մարթ փոխանակ մարդ. Նոյնպէս տ տառը երբեմն որպէս դ հնչելով (որպէս գիդիմ, դիդիս, գիդի, փոխանակ գիտեմ և այլն), իսկ երբեմն որպէս բուն տ, զոր օրինակ կարօտ, կտրել և այլն։ Միւս բաղաձայների արտասանութիւնը ընդհանրապէս հաւասար է Թիֆլիզեցոց և վերոյիշեալ քաղաքների մէջ։ Տաճկաստանի, Ղռիմի և Նոր Նախիջևանու Հայքը արտասանումեն բ տառը որպէս պ և պ, որպէս բ. գ, որպէս կ. կ, որպէս գ, այսինքն ամենևին զանազան Հայաստանցի, Թիֆլիզեցի, Հաշտարխանցի, Ղզլարցի և միւս Հայերից. բայց ընդհանրապէս պիտոյ է ասել թէ երկու կողմից ևս արտասանութիւնը հեռի է երևում հին նախնական արտասանութենից, որովհետև չունի կանոնաւոր միութիւն։ Երկրորդ ապացոյցը Ախվերդեանի այն է, որ Թիֆլիզի բնիկ ժողովուրդը խառնվելով ևս զանազան գաւառներից եկած Հայերի հետ, պահպանել է բառերի արտաքերութեան ձևը, և այսօր ևս խօսումէ Սայաթ-Նովու տաղերի լեզ-

---

1) Կարելի է ընդունել երկու գլխաւոր ժողովրդական բարբառներ Հայերի մէջ. մինը Արարատեան, միւսը Տաճկական հայեցի. առաջինին պատկանումեն Երեվանի և հին Նախիջևանի, Հաշտարխանի և Ղզլարի, Ղարաբաղի, Նուխու և Շամախու բարբառները. երկրորդին, Տաճկաստանի, Ղռիմի և Նոր Նախիջևանցոց բարբառը։ Միւս բարբառները, զոր օրինակ Թիֆլիզեցոց և Ագուլիսեցոց ունին այնպիսի յատկութիւնք, որոնցից պիտոյ էր իմաստաւորել, որ տեղական պայմանների տակ բաւական աղաւաղվել էին, կորուսանելով ամենայն գեղեցկութիւն։

ուով. ինչով է ապացուցանում պարոն Ախվերդեանը թէ Թիֆլիզեցիք պահպանել են բառերի արտաբերութեան հին ձևը. մի՞ թէ այն բանով, որ խօսումեն Սայաթ-Նովու տաղերի տգեղ ու անճոռնի լեզուով, կամ թէ ինքը Սայաթ-Նովան խօսել է Թիֆլիզեցոց աւելի տաճկերէն քան թէ հայերէն խօսքերով: Եւ Սայաթ-Նովու ժամանակի և մեր եզերական բարբառների մէջ սար ու ձորեր և հազարաւոր տարիներ կան, որ չը գիտեմ թէ ինչպէս կարողացել է պարոն Հախվերդեանը աչքի վերայից թռցնել: Չէ. մեր բանագէտ ժամանակումը այդպիսի թոյլ, անզօր ապացոյցներով չէ կարելի է հաստատել Թիֆլիզեցոց լեզուի հին եզերական, մի ազատ և ինքնիշխան բարբառ լինելու իրաւունքը. այդպիսի իրաւունք կարող է սեփականել իւրեան ամենայն միւս բարբառ: Այլև Թիֆլիզցոց ե և ո տառերի արտասանելը որպէս ի, ու և վու, համարումէ Ախվերդեանը հիմք ասելու թէ Թիֆլիզի այժմեան բարբառը հին եզերականներից մինն է. իւր խօսքին հաստատութիւն տալու համար, բերումէ նա Ղռիմյոց և Նոր Նախիջևանցոց օրինակը, ըստ որում և դոքա ե տառը արտասանումեն որպէս ի: Բայց սխալվումէ Ախվերդեանը. Ղրիմցոց և Նախիջևանցոց մէջ ե ի արտասանութիւնը որպէս ի, մի մասնաւոր բան է և հանդիպումէ բայերի վերջաւորութեան մէջ, զո՛ր օրինակ հրամայիլ է (հրամայել է) արգիլիլ է (արգելել է). երբեմն և այսպիսի ձևերի մէջ. չը գիտիմ, չը գիտիս, չը գիտի, բայց ոչ այնպէս անխտիր, ինչպէս Թիֆլիզցոց մէջ. զոր օրինակ իս (ես). քիզ (քեզ), իրկիր (երկիր), իփ (երբ), իղ (եղ), և այլն: Բայց ո տառը իբրև ու կամ վու արտասանել, ամենևին անսովոր բան է Ղրիմցոց կամ Նախիջևանցոց մէջ, որպէս և Հայաստանի կողմերումը: Պարոն Ախվերդեանը իւր կարծիքը ապացուցանելու համար ունէր մին հաւանական պատճառ, այսինքն եթէ նա կարողանար հաստատել գիտութեան դատաստանի առաջև թէ Թիֆլիզեան ժողովուրդը եկել է Վրաստան մի եզերական գաւառից, բերելով իւր հետ և իւր եզերական լեզուն կամ դորա մնացորդքը. բայց այդպիսի ապացոյց չունի պարոն Ախվերդեանը իւր ասածի համար. բայց մեք ունինք նորա ընդդէմ մի զօրաւոր ապացոյց. այսինքն Հայոց ժողովուրդը, որ տեղափոխվել է դէպ Վըրաստան, մի մասն է այն Անեցի գաղթականներից, որ, Անի քաղաքը Բագրատունեաց ձեռքից անցանելով Յունաց ձեռք և յետոյ Սելջուքեան Թուրք Ալպասլանի իշխանութեան տակ, 11 երորդ դարումը ցան ու ցիր են եղել դէպ ի զանազան օտար սահմաններ: Եւ եթէ Թիֆլիզցիք եկել էին Անի քաղաքից, ապա նոցա բարբառը երբէք չէ կարելի ասել Եզերական, որովհետև Անի մայրաքաղաքը Բագրատունեաց թագաւորութեան Հայաստանի ծոցումն է, այսինքն Արարա-

տեան աշխարհի Շիրակ գաւառումը։ Ուրեմն Թիֆլիզեցոց լեզուն կարող էր միայն իւր այժմեան կերպարանքը ստացած լինել աղաւաղութեամբ Հայաստանի ընտիր լեզուին կամ բարբառին։ Գուցէ Թիֆլիզեցիք յետոյ խառնվելով այլ եզերական գաղթականների հետ, ևս առաւել տգեղացուցել են իւրեանց բարբառը. բայց Թիֆլիզցիք գոնեայ սկըզբնաբար եզերական ժողովուրդ չեն, ուրեմն և ոչ նոցա լեզուն մի »ինքնակայ եզերական հին բարբառ« ինչպէս կամենումէ Պարոն Ախվերդեանը, գուցէ թէ մի փոքր կողմնապահութեամբ դէպ ի իւր սիրելի քաղաքակիցքը։ Բայց, ափսոս, գիտութեան դատաստանի առաջև հաւասարապատիւ են քաղաքակիցք ու չքաղաքակիցք։

Հայաստանի, Հաշտարխանի, Ղզլարի, մի մասնով և Ղարաբաղցոց լեզուն բաւական յստակ է. բայց ամենից պատուականը է Արարատեան և յետոյ Հաշտարխանի բարբառը, թէ արտասանութեան և թէ բառերի անարատութեան մասին. բայց ի հարկէ, մնալով մինչև այժմ տգէտ ժողովրդի կամքին, առանց գրաւոր մշակութեան, չունին դոքա այն գեղեցկութիւնը, որ կարող էին ստանալ մի յաջողակ և ճաշակաւոր գրչի տակ։ Տաճկաստանի Հայոց բարբառը բաւական տգեղ է և իւր փոքր ի շատէ մշակված գրութեան մէջ. բառերը շատ ջարդուփշուր և մասերի բացայայտութիւնը ամենևին տաճկական ձևով։ Ես ոչինչ չունիմ ասելու ընդդէմ այդ բարբառի հոլովելու և լծորդելու կերպին որ բաւական անկանոն էր, բայց գուցէ թէ յարմար այն տեղական պայմաններին որոնց մէջ կային մեր պատուելի Հայերը Տաճկաստանի մէջ. միայն թէ զարմացած եմ, թէ ինչ յանձնապաստանութեամբ դոքա իւրեանց Օրագրերի մէջ այս կողմի Հայերիս հոլովելու և լծորդելու կերպը (ումեմ, ումես, ումէ բայական վերջաւորութիւնքը և ից, ուց, ներից, ներով հոլովավերջքը) բամբասումեն որպէս անպիտան, առանց մտադիր լինելու այն տեղական պատճառներին որ հարկ էին դնում հեղինակի վերայ. և մի՛ թէ մի քանի այդպիսի վերջաւորութիւնք բաւական էին տգեղացնելու մի լեզու, եթէ դա ունէր միւս էական պատուականութիւնք շատ։ Ես զարմանումեմ, որ Տաճկաստանի Հայերը աշխատումեն մեզ համոզել դէպ ի իւրեանց կողմը մի քանի տղայական պատճառներով, որոնց արմատը, ինչպէս երևումէ, մի անլուսաւոր անձնասիրութիւն է. միանգամ լսումենք թէ Տաճկաստանի Հայոց բարբառը մայրաքաղաքի բարբառ է. երկրորդ, առաւել մեծ բազմութիւնը ազգի խօսումէ այդ բարբառով, և երրորդ, վաճառական Հայեր Թիֆլիզից ու Հայաստանի կողմերից գալով Կոստանդնուպօլիս և մնալով այն տեղ ուսանումէին տեղական բարբառը։ Հարցանումենք այդ պարոններից. ինչ մայրաքաղաք է Կոստանդնուպօլիսը Հայոց համար.

դորան գիտենք մեք որպէս Օսմանեան Սուլթանի Թագաւորանիստ, բայց ոչ որպէս Հայոց մայրաքաղաք, թէև Հայոց բազմութիւնը հասանէր այն տեղ 300000ի: Երկրորդ, մի՛թէ մի բարբառի գեղեցկութիւն պիտոյ է նորանով հաստատելի, որ այդ բարբառով խօսումէր մի բազմաթիւ ընկերութիւն, մանաւանդ եթէ այդ բարբառի գեղեցկութիւնը վկայումէր ոչ ոք այլ, բայց ի այն հասարակութենից որ խօսումէր դորանով. ասել է, թէ ինչ հասարակութիւն սիրեց ու հաւանեցաւ իւր բարբառին, պիտի իրաւունք ունենայ պահանջելու, որ և միւսերը սիրեն ու հաւանին նորան: Չէ· այդպէս չէ: Եթէ կամին մեր սիրելի հայրենակիցքը Տաճկաստանի մէջ մի փոքր տեղիք տալ առողջ բանականութեանը և լսել մեզ, ապա կարող ենք, միտ դնելով աշխարհի վերայ եղած փորձերին որ ուսուցանումէ մեզ ազգերի պատմութիւնը, այսքան ասել, թէ մի ազգային որ և իցէ բարբառ այն ժամանակը միայն կարող է յաղթող հանդիսանալ միւսերի վերայ և հետևողներ գտանել իւր. համար, երբ որ նա այնպիսի ականաւոր վաստակներ դուրս է հանած, որ ազգը ցանկալով մասնակից լինել դոցա, ստիպված էր ուսանել այդ բարբառը և իւրացուցանել որպէս լուսաւորութեան աղբիւր: Բայց մինչև այդպիսի ականաւոր գործեր չկային մի ազգային բարբառի մէջ, մինչև սա ոչինչ բարոյական և իմացական մտքով չէ ապացուցել իւր իրաւունքը լինելու ազգի ընդհանուր գրաւոր լեզուն, լոկ վայր ի վերոյ խօսքերով ոչ մի մտածող Հայ չէ կարող համոզվիլ, թէպէտ հայկական ամբոխը սովոր է ամենայն խօսքի ու կարծիքի տեղիք տալ, որովհետև չէ սովորել քննել ու ճանաչել իւր մտածութեան իրաւունքը: Մեք ընդդէմ չենք Տաճկաստանի Հայոց բարբառին, եթէ դա յարմար գործիք է երևում հայ հեղինակի ձեռքում Տաճկաստանի մէջ· թող նա մշակէ և գեղեցկացնէ այդ բարբառը· մեք ևս ժամանակով օգուտ կը քաղենք այդ բարբառից, երբ որ դա հասել էր իւր կատարելութեանը· բայց ինչ իրաւունք տալիս ենք Տաճկաստանի Հայերին, նոյն իրաւունքը, արդարութեան օրէնքով, պահանջումենք նոցանից· այսինքն, որ նոքա համեստաբար մտածեն և թոյլ տան մեզ, Հայաստանի և Ռուսաստանի Հայերիս ինքնուրոյն կերպով մշակել և կատարելագործել մեր կողմերի բարբառը· որ, եթէ կամենայինք խօսել դորա պատուականութեան վերայ, ամենևին այլ ներքին և հաստատուն պատճառներ ունի իւր համար, քան թէ Տաճկաստանի բարբառը: Ու ինչ վնաս կայ, մի ծաղիկի տեղ, երկու ծաղիկ ունենալ ազգի մէջ· և մի՛ թէ արժան էր ազգասէր մարդուն ցանկանալ, որ, եթէ մի տեսակ ծաղիկ գոյանումէր Տաճկաստանի Հայերի մէջ, չը գոյանար մի այլ տեսակ ծաղիկ Ռուսաստանի Հայերի մէջ: Չէ· Աստուծոյ տնտեսութիւնը

այդպէս չէ․ Նորա իմաստուն սահմանողութեամբ կանաչումն մի և նոյն հողի վերայ պէսպէս ծաղիկներ ու բոյսեր, որոնց ամէն մինը ունի իւր առանձին գեղեցկութիւնը և խորհուրդը․ մինը միւսին խափանարար չէ, այլ մանաւանդ թէ ցուցանումէ արարչական հրաշքների՝ բազմօրինակութիւնը բնութեան մէջ։ Եւ եթէ արդարև չը կայ աշխարհիս վերայ մի մարդ, որի երեսի կերպարանքը ամենևին հաւասար լինէր միւսին, ապա ո՞ր խելացին կարող էր պահանջել, որ երկու առանձին հայկական ընկերութիւնք, զանազան աշխարհներում, զանազան կենսական պայմանների տակ, չունենային և իւրեանց հոգու առանձին կերպարանքը, փոքր ի շատէ առանձին ձևաւորութիւնք իւրեանց լեզուների մէջ։ Մեր ցանկութիւնը և առ ի սրտէ ցանկութիւնը այս է․ թո՛ղ աճեն ու զօրանան այդ երկու ճիւղերը նոյնարմատ ծառի, թո՛ղ ծաղկին ու պտղաբերեն դոքա, այնուհետև կը պատուենք ամէն մինը, նայելով նորա պըտուղների պատուականութեանը, այնուհետև պարզ ու բնական կերպով կը վերջանայ խնդիրը այս կամ այն բարբառի նախամեծար արժանաւորութեան մասին։

Թէ ինչպէս մեր Հիւսիսափայլ օրագիրը պիտոյ է գործ կատարէ — մեր խօսքը այս տեղ լեզուի ձևերի վերայ է, — կարծեմ, աւելորդ էր երկարաբանել այս տեղ․ պատճառ, թէ բարեկամ և թէ թշնամի, որոնց յայտնի են մեր նոր հայերէն գրուածքը, բաց ու արձակ պիտոյ է տեսանէին և խոստովանէին որ մեր խօսակցութեան ձևը և հոգին ամենևին այլ է, քան թէ Տաճկաստանի Հայերի մէջ, որոնց պատկանումեն և Վենետիկեան, Փարիզեան և Վիեննական Հայերը։ Մեք լաւ գիտելով թէ ինչ է գրաւոր լեզուի խորհուրդը և թէ դա իբրև մի բազմամասնեայ դաստիարակութեան գործի, ինչպէս պարտական էր գործ կատարել մի ազգի համար, այլև մեր սիրտը վկայելով, որ գռեհիկ ժողովրդի վայրենացած լեզուով ամենևին անհնար էր ուսումն տալ ազգին, ընտրեցինք մի ընդհանուր ոճ խօսակցութեան, ինչքան կարելի էր, հեռի պահելով մեզ տեղական առանձին բարբառներից, հետևելով միայն այն առաւել ընտիր աշխարհաբառ հայախօսութեանը որ հայաբնակ քաղաքներումն Ռուսաստանի լսվումէ ընդհանրապէս։ Մեք ինչպէս հեղինակ և մշակագործող մեր այժմեան լեզուի, գործ ենք կատարել մինչև այժմ և կատարելու ենք այսուհետև, ոչ թէ խօսելով ամէն մի Հայի հետ նորա առանձին քաղաքի լեզուով, որ մի անկարելի գործ է և մի անօրինակ բան աշխարհի պատմութեան մէջ, որ և պիտոյ է շինէր մի լեզու կատարեալ աղցան, բաբելոնեան խառնակութիւն, այլ ընտրանքով, այսինքն այնպէս, որ ամենայն խելացի Հայ, ինչ քաղաքից ևս լինէր, կարդալով մեր գրուածը, ոչ թէ ասէր, սա իմ տեղական բար-

բառն է առանձնապէս, այլ թէ սա մեր Հայերի այժմեան բարբառն է ընդհանրապէս, գրաւոր մշակութեան տակ ընկած։ Ասել է. թէ ես ինչքան կարողացել եմ, հետեւել եմ բոլորին, ընդհանուրին, բայց ոչ մասնաւորին. աւելի պարզ ասեմ. ես միշտ աշխատել եմ իմ գրուածների մէջ խօսել ազգի հետ ոչ Թիֆլիզերէն, որ իմ հայրենի բարբառն է, ոչ Հաշտարխաներէն, ոչ Ղզլարցոց և ոչ ևս Երևանցոց պէս ամենևին, այլ այնպիսի ոճով որ չը լինելով դոցա մասնաւորապէս սեփական, պատկանումէր բոլորին ընդհանրապէս։ Եւ իմ կարծիքը այսպէս է, որ ոչ մինը յիշեալ բարբառներից չունի իւր մէջ առանձնապէս գեղեցիկ և ընտիր աշխարհաբառ հայախօսութիւնը, որ սահմանած չափով գտանվումէ միայն ամեն մի բարբառի մէջ. ուրեմն ոչ Երևանցին, ոչ Թիֆլիզցին, ոչ Հաշտարխանցին, ոչ Ղզլարցին և ոչ ևս Նախիջևանցին ու Ղրիմցին պատճառ ունին մտածելու որ, եթէ մեր գրուածների մէջ չեն տեսանում իւրեանց առանձին բարբառների մասնաւոր ձևերը, ուրեմն և մեր խօսածը չէ Հայոց ժողովրդի լեզու։ Բայց թէ հեղինակը, թող խօսէր դա որ և իցէ ժողովրդի լեզու, իբրև գրաւոր գործակատար մի լեզուի մէջ, ինչ պարտականութիւնք ունէր լցուցանելու, այդ բանը չը գիտէ Հայոց ոչ ժողովուրդը և ոչ նորա մի քանի վայր ի վերոյ կիսատ թերատ ուսումնականքը. բայց ինչ որ մեզ վերաբերումէ, խօսելով Ցունաց լեզուի մատենագրութեան վերայ, ասացինք, թող առաջնորդ լինի մեր բարեմիտ, խոհական ընթերցողներին։

Վերջապէս պիտոյ է մեզ այս տեղ մի տղայական կարծիքի ընդդէմ դուրս գալ, որ մի քանի Հայերի բերանից, այո և Պ. Ախվերդեանի վերոյիշեալ յառաջաբանի վերջումը լսումենք. այսինքն թէ մեր Հայերի այժմեան լեզուն մշակվելով ու կատարելագործվելով (բայց Ախվերդեանի կարծիքով, եթէ »Մշեցոց մշուշով պատած լեզուն որի մէջ պահված էին դեռ ևս գրոց լեզուի բուն նշանքը, այսինքն նախդիրքս զ. ի. յ, և նուաղական մասնիկներս իկ, եակ, ակ, ոյկ, քննվէր ու բացայայտ կացուցանվէր«), ապա պիտոյ է մի օր դառնայ մեր գրոց անաշ լեզուն։ Այդպիսի դատողութիւն մի հասարակ Հայի բերանից չէր զարմացնելու մեզ. բայց Ախվերդեանի բերանից, թուլացնումէ մեր ունեցած լաւ կարծիքը նորա ուսումնականութեան վերայ։ Մի՞ թէ այդ պատուելի պարոնը այնքան անփորձ է ազգերի պատմութեանը, որ կարող է մտածել թէ 19 երորդ դարու Հայը երբ և իցէ հասանելու էր իւր անցած գնացած հինգերորդ դարու գրաւոր լեզուին։ Բայց որն է, հարցանումենք, այն կախարդական կամուրջը որի վերայ կարող էր Հայոց ազգը անց կենալ ու հասանել այդ կորուսեալ դրախտի երանութեանը. եթէ այդ կամուրջի գերանները էին յիշեալ զ. ի. յ նախդիրքը, և

իկ, եակ, ակ, ոյկ մասնիկները, ապա վառված ու բորբոքված երևակայութեան երազ էր դա, գուցէ քաղցր, բայց անխորհուրդ երազ։ Եթէ Ֆրանսիացոց, Իտալացոց, և Սպանիացոց ազգերին ասէր մի մարդ մեր օրերումը այսպէս. Դուք կրթելով ու մշակելով ձեր լեզուն և ընդունելով մի քանի հոլովակերտ վերջաւորութիւնք և նախդիրք լատիներէնից, մի օր հասանելու էիք այն քաղցր ու գեղեցիկ և հոյակապ լատինաբանութեանը որ հնումը եղել է ձեր հայրենի ու գրաւոր լեզուն. դոքա թիկունքը շարժելով պիտոյ է ծիծաղէին մեր վերայ և յանդիմանէին մեզ իբրև տգէտ մարդիկ որ դեռ ևս չը գիտէին թէ ինչ ասել է հին լատինական լեզու և նոր հռոմէական բարբառք, և թէ քանի սար ու ձորեր այդ երկուքի մէջ ներս էին մտել, ոչ թէ անդունդքներով բաժանելով մինը միւսից, այլև ամենևին կերպարանափոխ անելով ազգային կեանքի պայմանները։ Պատմութիւնը ուրանալ, աշխարհի մէջ եղած իրողութիւնքը և նոցա ծանր ծանր հետևանքները որ միանգամ յառաջացել են և ներգործումեն այժմ, ոչինչ համարել, ջուրը ձգել, խելացի մարդու գործ չէ։ Բայց ի դորանից, շատ թոյլ է երևում Պ. Ախվերդեանի փիլիսոփայական լեզուագիտութիւնը։ Հոլով ասած բանը ոչինչ յարակցութիւն չունի զ, ի, յ նախդիրների հետ. հոլովի ըմբռնողութիւնը հիմնած է ճիշդ վերջաւորութենների վերայ, և այն հոլովքը որ Հայոց քերականութեան մէջ շինվումէին նախդիրներով, չեն հոլովք յատկապէս, այլ միայն նախդիրների խնդիրք. և այս խնդիրքը, խօսելով իսկապէս, ոչ թէ նախդրի համար էին դրած, այս կամ այն հոլովով, այլ որովհետև բայի նշանակութիւնը պահանջումէր այդ հոլովը որ կարող էր ամենևին պարզապէս և առանց նախդրի գործ ածվիլ։ Օրինակ. հին լեզուով. գնալ ի քաղաք. աշխարհիկ լեզուով, քաղաք գնալ. այս երկու օրինակների մէջ քաղաք բառը հայցական հոլով է. մինը նախդրով, միւսը աննախդիր. բայց տրամաբանօրէն ուղիղ, որովհետև ամենայն շարժողութիւն դէպ ի մի տեղ պահանջումէ Հայցական հոլով. ով որ տեղեակ է լատին, յոյն և ընդհանուր քերականութեան, նա կը հասկանայ մեր ասածը։ Դարձեալ, Հայոց լեզուի Հայցականը, ինչպէս ասումէ քերականութիւնը, շինվումէ զ ով, բայց և առանց զ ի. առաջինը ասվումէ որոշեալ Հայցական և երկրորդը անորոշ։ Սորանից ինչ պիտոյ է իմաստասիրել. ահա մեր կարծիքը. բուն հայցականը Հայոց ամենևին հաւասար է ուղղականին. և զ տառը ոչ թէ հոլովակերտ նախդիր է, այլ միայն լոկ սահմանողական յօդ, համեմատ Ֆրանսիականին le, la. կամ յունականին ὁ, ἡ, τὸ. այս պատճառով կարող է մի խօսք ունենալ իւր վերայ նախդիր ասած զ տառը, առանց լինելու հայցական. ուրեմն հայցականի հոլովակերտ նշանը չէ

ղ ։ Աւելորդ ենք համարում երկար խօսել մի քանի նուաղական մասնիկների վերայ, որ իբրև թէ մի առանձին քաղցրութիւն պիտի տային մեր լեզուին, եթէ միանգամ կենդանանային մեր աշխարհաբառումը Մշեցոց բարբառից ։ Մի՛ թէ այդ և դոյա նման մասնիկներ, որ մնացել են Մշեցոց լեզուի մէջ, չը կային և գրոց լեզուի մէջ. գրոց լեզուն որ ամենառատ աղբիւրի պէս դրած է ամենայն նոր հայկաբանի առաջև, մի՛ թէ բաւական չէր. և ով կարող է պատուիրել նոր Հայախօսին, որ նա տեղին ու հանգամանքին յարմար ներս չը բերէ լեզուի մէջ այդպէս և այլպէս վերջաւորած բառեր, որ պատկանում էին մաքուր գրոց լեզուին ։

Հայոց աշխարհաբառ լեզուն չէ այնքան հեռացել իւր սկզբնատպից. այսինքն այն հարուածքը, որ ժամանակը պատճառել է մեր հին գրաւոր լեզուին, չեն այնքան խոր և կործանողական, ինչպէս տեսանվում է Ռոմէական ասած բարբառների մէջ, համեմատութեամբ լատինականին ։ Հայոց այժմեան լեզուի յարակցութիւնքը հին գրոց լեզուի հետ համարեա թէ այնպէս են, ինչպէս նոր Յունականի յարակցութիւնքը հին Յունականի հետ. և այս տեղ, ինչպէս Հայերէնումը մնացել է լեզուի նիւթը բաւական անարատ և իւր հին հիմքի վերայ, հոլովների, հոլովմունքի և լծորդութենների փոքր ի շատէ հին ձևերով, որ ամենը ջարդուփշուր է եղած Ռոմէական բարբառների մէջ, թէպէտ եւրոպական հերոսաբար գործունեայ հոգին այդ աւերակների վերայ շինել ու բարձրացուցել է այնպիսի հրաշալի դպրութեան տաճարներ, որ ոչինչ բանով պակաս չէին հնաշէններից ։

Նւ մեր Հայոց գեղեցիկ աշխարհաբառ լեզուն պիտոյ է իւր փոքր ի շատէ անարատ դրութեան մէջ յառաջ գնայ, մի ոտքը պահելով միշտ հին նախնական հիմքի վերայ, օր աւուր լցուցանելով իւր պակասութիւնքը հին լեզուի ճոխ գանձարանից ։ Բայց այս բանը չէ պիտոյ կապէ հեղինակի ազատութիւնը և ծառայացնէ նորա հոգին ։ Հայոց նոր հայկաբանը, լինելով տեղեակ իւր լեզուի ճոխ գանձերին, տեղեակ և կենդանի ժողովրդական լեզուի բնաւորութեանը, պարտական է խելացի տնտեսութեամբ գործ դնել լեզուի ընդհանուր նիւթը, պահպանել հին լեզուից, ինչ բան կարելի էր պահպանել, փոխ առնուլ հնիցը ինչ որ պակաս էր նորին, և պիտանի կացուցանել, ինչ որ արդէն պատրաստ էր այժմեան լեզուի մէջ, հետևելով իւր ընտրողական ճաշակին ։ Նոր լեզուն կամաւ և գիտութեամբ ձգձգել և մօտեցնել հին գրոց լեզուին և այդպէս մեռուցանել կենդանի աշխարհաբառի ինքնաշարժ հոգին, ինչպէս տեսանվում է նոր յունական լեզուի մէջ, անպատշաճ է ամենևին. որովհետև այդպէս յառաջանալու էին խորթ և անսովոր ձևեր, որ չէին բղխում ազգի սրտի խորքից ։

Ամենայն ազգի մէջ եղել է հեղինակը մի արարիչ, գտանող ու յարմարող մարդ. նա եղել է լեզուի մշակող, բարեզարդող, գեղեցկացնող և կատարելագործող, նա եղել է շինող, բայց շինութեան նիւթը տուել է նորան ժողովրդի ընդհանուր լեզուն. Նոր լեզու ստեղծանել ոչ մի հեղինակ կարող չէ. բայց նորան կրթել, իմացականութեան և բարձր գաղափարների ազդեցութեան տակ մշակագործել ու վայելչացնել և տալ նորան այն մեծ խորհուրդը, որ նա կարողանայ մի բոլոր ազգի դաստիարակութեան և լուսաւորութեան ճանապարհ դառնալ, այդ կարող է նա։ Երբ որ մեր այժմեան աշխարհաբառ լեզուն մի 50 տարի (ի հարկէ բարեկարգւելով ազգային դաստիարակութեան եղանակը, զանազան ուսումնարաններ յառաջանալով, Հայոց լեզուն ուսման և գիտութեան լեզու դառնալով այդ ուսումնարանների մէջ) այս հիմքերի վերայ գործ կատարէր և յառաջ գնար, այնուհետև հին լեզուն, որ իւր հիւթը և ծուծը տուել էր նոր լեզուին, և այդպէս լցուցել էր իւր մայրական պարտականութիւնքը դէպ ի իւր մանուկը, այնուհետև թող մեռանի նա, կենդանի միայն իւր մանուկի կենդանութեամբ։ Այնուհետև ցաւալի չէր մօր մահը, այլ մանաւանդ թէ հարկաւոր ևս, ինչպէս բուսականի մահը, որ յառաջացնելով ստեղունք, ծաղիկներ և սերմեր, մեռանում ինքը, շատ արդիւնքներ գործելով ապագայումը։ Բէքոն փիլիսոփայի հետ ձայն ենք տալիս մեր ուսումնական եղբայրակիցներին, թէ »Ճշմարտութիւնը է ժամանակի որդին և ոչ թէ սորա կամ նորա ասածի ծառայ. և ամենայն ժամանակի համար ճշմարիտ է այն բանը որ հարկաւոր է նորան. և եթէ մի ժամանակի հարկաւորութիւն կորուսանում իւր պիտառական խորհուրդը միւսի համար, ապա դա է կեանքի նորոգութեան անփոփոխելի օրէնքը. և այս տեղ ամենևին անօգուտ էին ընդիմախօսութիւնք և դանդատանք։»

Այն հիմքերի վերայ, որոնց մասին մեր ճառի մէջ մինչև այժմ այնքան մանրամասնաբար խօսեցինք, պիտոյ է գործ կատարէ և Հիւսիսափայլ օրագրի հրատարակողը և նորա աշխատաւոր ընկերակիցքը։ Այդ օրագրի խորհուրդը պիտոյ է լինի հաստատել մեր ազգի մէջ մի հայկական գիտութիւն, որ չէ եղած մինչև այժմ. մի գրաւոր ճանապարհ խօսելու ազգի հետ նորա իմացական և բարոյական պիտոյքների վերայ. մի մատենագրական դպրոց ուր կարող է ամենայն փոքր ի շատէ բանիմաց Հայ ուսանել և ճանաչել մարդկութեան և աշխարհի որպիսութիւնքը սկսեալ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը. ծանօթանալ իւր ազգային պատմութեանը և ճանաչել իւր յատուկ անձը, իւր անցեալը, իւր ներկան, և սորանից գուշակել իւր ապագան։ Մեր օրագիրը պիտոյ է լինի մի եղբայրօրէն ուսուցիչ, դաստիարակիչ և առաջնորդող բարեկամ Հայոց ծնողների և մարդերի տան մէջ։

Այս պատճառով Հիւսիսափայլ օրագիրը կը բաժանվի չորս առանձին յօդուած, պարունակելով իւր մէջ ճառեր այսպիսի նիւթերի վերայ։

## ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ.

Սորա մէջ գրվելու են ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ուշադիր լինելով Հայաստանի և Ռուսաստանի աշխարհագրութեան ու Ստատիստիկային. այլև զանազան աշխարհների նկարագրութիւնք, նոցա բնական կերպարանութիւնքը և դոցանից յառաջացած հետևանքը ազգային քաղաքագործութեան մասին։ Տեղեկութիւնք աշխարհագրական յայտնագործութենների վերայ և հարցասիրութեան արժանի հատուածներ աշխարհի հինգ բաժինների մէջ ճանապարհորդած մարդերի գրուածներից։

## ԵՐԿՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

Սորա մէջ կը պարունակվին համաշխարհական պատմութեան վերայ ճառեր, ուշադիր լինելով Ռուսաց ազգի պատմութեանը։ Այս տեղ լինելու են յիշատակի արժանաւոր անցքերը համաշխարհական պատմութեան մէջ, վարքագրական պատկերացոյցք երևելի մարդերի թէ Եւրոպայի, թէ Ասիայի և թէ Ռուսաստանի մէջ յատկապէս։ Հայրենական ազգի պատմութիւնը, ինչքան որ Հայք կարողացել են գործ կատարել աշխարհի հրապարակումը, քաղաքական հանդէսի մէջ, պիտոյ է այս տեղ աւանդվի ազգին, ցոյց տայ Հայերին իւրեանց նախահարց արդիւնարարութիւնը և վնասաբերութիւնը ազգին, նոցա պարծանքը և ամօթը, որպէս ուսումն և խրատ յետագայ Հայերին։

## ԵՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

Սորա մէջ կը պարունակվին բնագիտական ճառեր, այսինքն խօսք և զրոյց այն օրէնքների վերայ որ ներգործումեն մարմինքն աշխարհի մէջ և այդ օրէնքների գործադրութիւնը ընկերական կեցութեան համար. ճառեր զանազան ֆիզիկական յայտնութենների վերայ, հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիոլոգիայի մասին։ Այս տեղ կը լինի նոյնպէս բանախօսութիւն տնկական կեանքի վերայ, գիտութեան արժանի բոյսերի մասին աշխարհի զանազան սահմաններումը, նոցա տնկարկութեան և ներգործութեան մասին հասարակաց որպիսութեան վերայ։ Բաց ի սորանից, նկարագրութիւն օգտակար գիւտերի և յայտնագործութենների թէ ճարտարութեան և թէ բնութեան մէջ։

## ՉՈՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ·

*Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր · այս տեղ գրվելու են առաւել պատուական մտածութիւնք և առաւել պատուական զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով · ընտիր ընտիր թարգմանած հատուածք հին հայկական լեզուից և եւրոպական մատենագրութենից · այլև քննողական ճառեր թէ նոր և թէ հին հայերէն հրատարակած գրքերի վերայ, փախչելով ամենայն վիճասիրութենից, անաչառապէս դատելով արժանաւորութիւնը ամենայն աշխատութեան որ բղխած էր հայկական հանճարից ։*

*Հրատարակող*

Ս· ՆԱԶԱՐԵԱՆՑ·

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

## ՇԷՅԽԸ ԵՒ ՆՈՐԱ ԴՈՒՍՏՐԸ.

Երուսաղէմի դարպասից դուրս եկած ահա, Դամասկոս երևելի և հին քաղաքի մէջ բնակումէր միանգամ մի արժանապատիւ Շէյխ[1]) որ իրաւացի պատճառով յայտնի էր որպէս իւր ժամանակի առաւել իմաստուն մարդերից մինը: Այն փոքրիկ տեղը, ուր բնակումէր նա, անուանումէր ինքը ագարակ. Նորա մի հատ ծառան ասումէր նորան պարզապէս, տուն. բայց ժողովուրդը ընդհանրապէս անուն էր տալիս նորան քէօշկ, այսինքն այգու մէջ շինած տուն: Եւ արդարև երևումէր, թէ այգին գլխաւոր մասն է նորա փոքրիկ կալուածի, որ ապրուստ էր հասուցանում Շէյխին: Նորան պիտոյ էր ասել մի այգի, որի մէջ կար մի տուն, քան թէ մի տուն այգու հետ միասին. պատճառ, երևումէր, որ ոչ թէ այգին հիմնարկված է տան համար, այլ տունը այգու համար: Թէպէտև շատ ու շատ մեծարումէինք Շէյխի իմաստութիւնը, այնուամենայնիւ պիտոյ է խոստովանել, թէ ժողովուրդը ոչ ամենևին սխալվումէր այս մասին: Բայց Ալլահը միայն կարող է գիտել ստոյգը այս աշխարհի խառնուինդոր և բազմավէճ բաների մէջ: Մեր աչքի առաջև — ինչ օգուտ էր մեզ թագուցանել այս բանը — ամենայն րոպէ երևումէ մի այլ բան, կապոյտ ու դեղին ու կանաչ, երբ որ մեզ պիտոյ էր որոշել միմեանցից իրաւը և անիրաւը, և մեր գլուխը սկսանումէ պտոյտ գալ, ինչպէս որ ամենայն բան մեր աչքի առաջև խառնաշփոթվումէ, այնպէս որ վերջումը չը գիտէ մարդ թէ դէպ ի ո՛ր կողմը դարձուցանէ իւր դէմքը:

Այսպէս, արժանապատիւ Շէյխը ապրումէր իւր այգու եկամուտքից, մշակագործելով նորան իւր սպասաւորի օգնականութեամբ. մի տարուկ կին հոգաբարձու էր նորա տնտեսութեանը և ծառայումէր նորան և նորա աղջկանը: Ինչպէս ասումէին, ոչ մի տեղ չը կար այնպէս հիւթալից, հասած և նրբակեղև դդումներ ու ձմերուկներ, ինչպէս այն դդումները և ձմերուկները որ ծեր Րիզանը — այսպէս էր ծառայի անունը — փոքրիկ այգուցը տանումէր դէպ ի փողոց վաճառելու. Նոյնպէս հռչակված էին նորա թուզերը, նուռները և այլն: Թէ այսպէս և թէ այնպէս, ստոյգ է այսքան, որ Րիզանի ձեռքից խլումէին ամենայն բան, երբ որ նա երևումէր վաճառանոցի մէջ, և թէ նա միւս

---

[1]) Շէյխ բառը Արաբացոց բառ է և նշանակումէ ծերունի. կրօնական մտքով, մահմետական վանքի առաջնորդ:

կողմից Շէյխին, իւր տիրոջը, արդարութեամբ հաշիւ ու համար էր տալիս և ամենափոքր արծաթի մասին որ ստացել էր, երբ որ իւր դատարկ կողովը ձեռքին տուն էր դարձած։ Բայց և վատ կը լինէր նորա բանը, եթէ այս կամ այն սխալանքը ներս մտած լինէր նորա հաշուատուութեան մէջ. պատճառ, Շէյխը շատ փորձառու էր բոլոր աշխարհի վրայ եղած բաների մէջ և քաջ տեղեակ էր բոլոր բնութեան կարգերին, Աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, Ալգեբրայի և Բանաստեղծութեան, այլև զանազան գաղտնածածուկ բաների, զոր օրինակ աստղահմայութեան, երկրադիւթութեան, Սանսկրիտեան լեզուին[1]) Քաբբալայի[2]), մեռելահարցութեան և այլն և այլն։ Թէ Շէյխը անչափ բանագէտ մարդ էր, կարելի էր իսկոյն իմանալ նորա դէմքից, որով նկատում էր նա մի մարդ, և այն պատկառելի արժանաւորութենից որ նա ցուցանում էր իւր բոլոր գնացքի մէջ։

Իմաստուն էր նա ամենայն որպիսութեան մէջ. այս բանը ոչ ոք չէր կարող ուրանալ. նա խօսում էր համարեա թէ առածներով (գեղեցիկ իմաստներով) միայն, և Մահմետի կուրանը և ընտիր հեղինակների գրուածքը գիտէր անգիր. այլև նորա կենցաղավարական փիլիսոփայութիւնը շատ խորամիտ և նոյնպէս շատ հաստատուն էր. այսինքն դա սահմանափակվում էր այս երեք յօդուածների մէջ որ արդարև արժանի են ոսկի տառերով գրվելու, այսինքն.

— 1. Խաղաղութիւնը առաւել պատուական պարգևն է այս աշխարհի մէջ։

— 2. Խաղաղութիւն գտանելու համար, պիտոյ է ճարել մի կատարեալ ազատութիւն։

— 3. Ազատ լինելու համար պիտոյ է նախապէս և ամենից յառաջ հրաժարվիլ մարդկային ազգի կիսամասնիցը, այսինքն կանանց ցեղից, որ Ալլահը ստեղծել է մի չար րոպէի մէջ, փորձանք ու կործանութիւն բերելու աշխարհի վրայ։

Այս երեք բանի մասին վտանգաւոր էր խօսք բանալ նորա հետ. ոչ մի առիւծ անապատի մէջ կարող չէր աւելի քաջութեամբ պաշտպանել իւր կորիւնքը (ձագերը) թշնամու երեսից, ինչպէս Շէյխը

---

1) Սանսկրիտեան կամ Դեվա Նեգարա, այսինքն աստուածեղէն, ասվում է սուրբ և գաղտնի լեզուն Հնդկաց Բրամինների, որով շարադրած են նոցա կրօնական գրեանքը Վեդամս կամ Վեդաս անունով, որ և կարդալու համարձակութիւն ունին Բրամինքը միայն։

2) Հրէաների անգիր աւանդութիւնքը, անգիր օրէնքը։ Աւելի սահմանաւոր մտքով նշանակում է Քաբբալան այն գաղտնի ուսումը որ խորհրդաբար մեկնում է Սուրբ գրքի զանազան տեղերը, բառերը տառերը և այլն։

պաշտպանումէր իւր երեք փիլիսոփայական հաւատամասունքը։ Բայց և նա ունէր մի քնքուշ, վիրաւորելի կողմ. այսինքն նա պահումէր երկրպագութիւն և խոովութիւն իւր յատուկ կենդանութեան խորքումը, ըստ որում հայր էր մի աղջկայ որի մասին չը կար հարմնախօսութիւն, թէև աղջիկը շատ գեղեցիկ էր։ Այս իրողութիւնը առիթ տուեց ինչ ինչ ցաւեցուցիչ ախ ու վախի, ինչ ինչ դժուարացուցիչ հոգսերի բարի Շէյխի սրտումը, երբ որ նա համբերութեամբ իւր երկար պատկառելի մօրուքը շողքորթումէր։ Օգնիր, ով Ալլահ. չը կայ ոչինչ փրկութիւն, եթէ ոչ քո մօտ, որ միայն ողորմած ես։

Մօտ դէպ ի երեկոյ, երբ որ մարդիկը հանդիպումէին միմեանց քաղաքադրան մօտ, որ խօսէին միմեանց հետ և ամենայն տեսակ դաշն ու պայման կապէին, կարելի էր համարեա թէ միշտ տեսանել Շէյխը նըստած դուրսումը իւր այգու առաջև։ Այն տեղ ունկնդրութիւն էր անում նա կամեցողներին և պատրաստ էր առատասիրտ կերպով մի բարի խորհուրդ աւելի տալ քան թէ պակաս։ Արդարև Շէյխի խորհրդատուութիւնքը բարեհամբաւած էին բոլոր Դամասկոսի մէջ, և դոցանով կարող էր նա մի շահաւէտ վաճառականութիւն անել, բայց դորանից ամենևին հեռի էր նա. ոչինչ բան չէր լինելու նորան այնքան ատելի, քան թէ օտարի հացը ուտել և օտարի արծաթը առնուլ իւր ձեռքը. նորա փոքրիկ այգին հասուցանումէր նորան հարկաւոր պտուղքը, և միւս այլ ինչ բանի կարօտ էր նա։

Երբ որ ժողովուրդը քաղաքից դուրս էր գնում, երեկոյի հովացուցիչ օդը արձակ դաշտումը վայելելու համար, կամ թէ երբ որ մարդիկ իւրեանց այգիներից Դամասկոսի գեղեցիկ շրջակայքումը յետ էին գալիս դէպ ի տուն, մի քանի րոպէ ուրախութեամբ մնումէին Շէյխի մօտ, և սկսանումէին նորա հետ մի խօսակցութիւն, կամենալով փոքր ինչ բան ուսանել նորա ճոխ փորձերից կեանքի մէջ, կամ թէ խնդրել նորանից, որ քաղցրացնէ իւրեանց սիրտը, պատմութիւն անելով օտար ազգերի և հեռաւոր աշխարհների մասին։ Այսինքն, նա ոչ թէ միայն հիմնապէս ուսումնասիրել էր մարդերի բարք ու վարքը, և կեանքը ընդհանրապէս, այլև իւր երիտասարդութեան օրերումը ճանապարհորդած էր շատ և արդիւնաւոր կերպով. Թող այս. խօսքը թափվումէր նորա բերանից աւելի քաղցր քան թէ Էմիղայի մեղրը և առատաբեր Շիրազի գինին։

Բայց չէ պիտոյ մոռանել, որպէս թէ հասակաւոր մարդիկ միայն շրջապատումէին նորան. ոչ. այլև պատանի մարդիկ ուրախութիւն էին գտանում այն բանի մէջ, որ այն փոքրիկ տան մօտակայքումը, Երուսաղէմի դարպասից դուրս, ժամանակ անցուցանէին. բայց սորա պատ-

ճառքը էին ոչ այնքան Շէյխի իմաստութեան խօսքերը, որ մօտ էին քարշում այն պատանիքը, ինչքան նորա աղջկայ երկու շողշողուն սեաւ աչքերը և մի ձեռքի պէս կերպարանք որ միջոց առ միջոց, քեօշկի վանդակապատի յետևումը, դուրս էին նայում դէպ ի ճանապարհը: Ամենեցուն յայտնի էր, որ Շէյխի տասն և հինգ տարեկան, Զարքա անունով միակ դուստրը այն առաւել գեղեցիկ աղջիկներից մինն էր, որ կային բոլոր փառաւոր Դամասկոսի մէջ: Եւ այսպէս մի ամենևին բնական բան էր, որ երիտասարդներից մինը յաճախ, առանձնապէս խօսք ու զրոյց ունէր պատուարժան Շէյխի հետ նորա աղջկայ մասին. և այնուհետև, երբ որ Շէյխը, գիշերը վերայ հասանելով, հեռացած էր դէպ ի իւր օթևանը, ձևաւորվումէին նորա խօսակցութիւնքը իւր գեղեցիկ աղջկայ հետ համարեա թէ այսպէս:

—«Աստուծոյ խաղաղութիւնը լինի քո հետ, իմ դուստր»:

—«Եւ ձեր հետ, իմ բարի հայր»:

—«Մեք ամենքեանքս Աստուծոյ ձեռքումն ենք, խօսքը յառաջ տարաւ Շէյխը, երբ որ ծանրութեամբ հանգստացաւ սօֆայի վերայ, ծալելով ոտքերը: Խալէդ, Ալա Էդդին բեն Շիվայի որդին, կոծել (ծեծել) է մեր դուռը և տեղեկութիւն է խնդրել տան պատանի օրիորդի մասին»:

—«Նարուճք է, իմ հայր»:

—«Նա մի բարեպաշտ մարդ է, ոչ շատ ծեր և ոչ պատանի, այլ իւր պատուական հասակի մէջ:

—«Գեղեցի՞կ է նա»:

—«Գեղեցիկ իսկապէս, չէ նա. չէ, գեղեցիկ չէ, իմ դուստր՝ բայց և ոչ տգեղատեսիլ: Նորա աչքերը կայծակնափայլ շամփուրներ են. նորա մօրուքը ծխացող գետ. նորա թուրբանը փայլէչապէս զարդարումէ նորա գլուխը, և նա իւր վերնազգեստը կրումէ իւր զօրաւոր, ազատ և հպարտ ուսերի վերայ»:

—«Ես չեմ սիրում կայծակնափայլ շամփուրներ, ասաց Զարքան, հովութիւն տալով իւր երեսին հովահարով»:

—«Նորան մեծարումեն ամենքեան»:

—«Այնքան ես փոքր սիրելի է ինձ մի պատկառելի մօրուք»:

—«Նա շատ ունևոր մարդ է և կարող է տալ իւր ամուսնուն աւելի քան թէ քսան աղախինք, եթէ կամենար»:

—«Ես կը լինէի քսան և միերորդ աղախինը, զանազանվելով միւսներից այն բանով միայն, որ առաջինն էի նոցա կարգումը, խօսեց Զարքան, մի նշանաւոր կերպարանք տալով իւր գեղեցիկ բերանին. նա բաց ձգեց հովահարը և ըմբռնեց իւր հողաթափներից մերկացած և

խաչանիշ ծալած ոտերը, որ փոխէ իւր դրութիւնը փափուկ բարձի վերայ։ Կարող էր խելքը թռչել մարդու գլխից, տեսանելով այս սիրուն փոքրիկ, զմայլեցուցիչ սպիտակ և հրաշալի ձևաւորված ոտերը․ եթէ այդ խելքը թռած չէր յառաջուց, տեսանելով այն հրաշալի, փոքրիկ ձեռները որ ըմբռնեցին ոտերը և ձեռներին պատկանեալ բազուկները։ Ալլահը թող կարողութիւն տայ մեզ պահպանել մեր մի պատառ խելքը։ Ասացի ես»։

— »Երբեմն պիտոյ է մեզ այս արժանաւոր հիւրին մեր դրան մօտ պատասխան տալ — խօսքը յառաջ տարաւ Շէյխը, ինչպէս բացայայտ երևումէր, սաստիկ տհաճութեամբ, թէպէտ ամենևին անխախտ պահելով իւր հոգու արժանաւոր հաւասարակշռութիւնը — թէ ոչ ոք տանը չէ, և թէ պիտոյ էր նորան մեր դրացու դուռը թակել«։

— »Իմ հայրս խօսումէ միշտ իմաստութեան խօսքեր․ թող այդպէս լինի, ինչպէս ասումէ նա։ Ես դեռ ևս շատ մանուկ եմ, շատ մանուկ, քան թէ կարող էի մտածել սիրու և ամուսնութեան վերայ․ ես դեռ ևս երեխայ եմ իմ հօր տան մէջ«։

Այս տեսակ խօսքերը որոնց պիտոյ է շատ անգամ համբերէր Շէյխը, երբէք քաղցր չէին նորան։ Նա սկսեց երկբայել, թէ երբ և իցէ կարող կը լինէր ազատվիլ իւր աղջկանից․ սա երևումէր, թէ ունի մի անյաղթելի ատելութիւն դէպ ի ամուսնական զուգաւորութիւնը, որովհետև արդէն բաւական շատ հարսնախօսք եկել էին ու չէին ընդունվել։ Եւ ինչքան որ Շէյխը այս խառնակիչ փոքրիկ աղջիկը ունէր իւր տան մէջ, կարող չէր յուսալ, թէ հասանելու է միանգամ այն կատարեալ խաղաղութեան օրերին որ երազի մէջ տեսանումէր նա միշտ, որ և նորա սրտի փափագն էր արթնութեան մէջ։ »Այն մարդը որ ունի իւր շրջակայքումը մի կնամարդ« — ասած էր նա յաճախ, և երբեմն մխիթարելով իւր ունկնդիրների սիրտը — »թող լինի կրկնապատիկ իմաստուն, այնու ամենայնիւ է և մնումէ կիսով չափ իմաստուն, որովհետև յիմարին օթևան է տալիս իւր մօտ։ Երբեմն, ինչպէս հասկանալի է, Շէյխը կարօտով փափագումէր լինել կատարեալ իմաստուն։ »Թէպէտ և դու, իմ զաւակ, երևէիր շատ սիրուն, շատ բարի և սիրարժան — աւելի քան թէ միանգամ ասած էր նա Ջարքային — այնու ամենայնիւ ինչպէս ևս դու շարժվէիր ու թեքվէիր, միշտ պիտի լինիս ու մնաս մի սիրուն կտոր յիմարութիւն․ արդարև, կրկնումեմ ես, մի կտոր յիմարութիւն, թէև ամենասիրուն կտորը որ աշխարհը միանգամ դուրս է երևեցուցել։ Վկայ է Քաաբայի [1]) սուրբ տաճարը, որ իմաստութիւնը

[1]) Այսպէս ասվումէ Մահմետի տաճարը Մէքքա քաղաքի մէջ Արաբիայումը․ դէպ ի այս կողմը, Մահմետականք սկսեալ իւրեանց ժամանակահաշվութեան երկրորդ տարուց որ

և յիմարութիւնը չէին կարող խաղաղութեամբ բնակել մի տան մէջ միասին։ Արդեօք Շէյխը ստուգապէ՞ս էր իմաստութիւնը, և Զարքան ստուգապէս յիմարութիւնը, ինչպէս որ ասումէր Հայրը, այդ չենք քննում այս տեղ. բայց անտարակոյս իրաւ էր Շէյխը այն բանի մէջ, որ կամենումէր, ինչքան կարելի է շուտով վզից ազատել Զարքան։

Մի երեկոյ, Շէյխը տուն եկաւ աւելի յետոյ քան թէ սովոր էր և շատ ցրուած կերպարանքով։ Մեքենաբար ասաց իւր սովորական ողջոյնը և հանգստացաւ սօֆայի վերայ ամենևին միայն և խորասոյզ եղաւ իւր մտածութեան մէջ։ Այս բանիս ամենևին հաւան չէր սիրուն Զարքան, որ իւր սովորութեան պէս սպասումէր իւր ծնողի վերադառնալուն քաղաքից, որ մի քանի նոր համբաւ լսէ նորա բերանից այն միջոցին, երբ պատրաստելու էր ինքը նորա երեկոյեան հացը. այս երեկոյիս մանաւանդ կամէր Զարքան լսել մի քանի բան իւր հօր իմաստութեանից և փորձառութենից։

Վերջապէս Շէյխը դարձուց իւր հայեացքը նորա վերայ և բացեց իւր բերանի փականքը։

—»Իմ դուստր« ասաց նա—կրկին անգամ մի պատանի մարդ կարօտից խոցուած սրտով թակել է մեր դուռը«։

—»Շատ լաւ է, հայր. թող ասէ նա իւր անունը և ցոյց տայ իւր երեսը«։

—»Ալլահը վկայ է, որ նա չունի տեղիք ոչ մինի և ոչ միւսի մասին ամաչելու. նորա դէմքը նման է լուսնին տասն և չորսերորդ գիշերում, ինչպէս ասումեն բանաստեղծքը. իմ աչքիս վերայ քուն չէ գալիս. պատճառ, իմ սիրտը զարկումէ անհանգստաբար. ես բարձրացնումեմ աչքերս դէպ ի լրացած լուսինը որ աղջամուղջ երկնքի վերայ շրջումէ և, կարծումես, թէ նայումէր իմ սիրելի աղջկայ երեսի վերայ։ Եւ իմ հոգին հառաչումէ. ախ, ինչպէս հրաշալի է այդ բանը«։

—»Բայց նորա անո՜ւնը, իմ հայր«։

—»Նա կրումէ մի լաւ անուն և մի հռչակաւոր ազգատոհմի զաւակ է. բարի անունը պատուական է քան թէ ոսկի, և մի ազնիւ ազգատոհմ ընտիր է քան թէ առաւել գեղեցիկ տունը։ Նա ասվումէ Իբրահիմ իբն Մուրվան, մի փառաւոր տոհմի Ամիր«։

—»Ով Ալլահ, հառաչեց Զարքան, յանկարծ շարժվելով սիրտը և աչքերը ցած ուղղելով դէպ ի գետին«։

—»Նա սիրուն է, և պատմումեն թէ բարեսիրտ, արդարագնաց և

---

ասվումէ հիջրէթ, դարձուցանումեն իւրեանց դէմքը, աղօթք առնելու միջոցին. այս քաբա տաճարը շատ մեծարական բան է Մահմետականի համար։

ազնուամիտ մարդ է, խօսքը յառաջ տարաւ Շէյխը։

—»Ես գիտեմ այդ, կակազեց Ջարքամ· ես տեսած եմ Նորան«։

—»Ո՛չ կին դու, ձայն արձակեց Շէյխը· Նորասիրութիւնը է քո ցեղի ժառանգութիւնը· միշտ քո աչքը նայումէ դէպ ի մեղքի խնձորը· իրաւ է ասում բանաստեղծը· կանայք վանդակապատի յետեւից տեսանումեն և իմանումեն աւելի բան, քան թէ տղամարդիկը արձակ փողոցի մէջ։ Այո՛, դրեցէք մի կնամարդ փակած կարասի մէջ կամ թէ մի ամենախոր գետնափորի մէջ, այնու ամենայնիւ կարող էր նա պատմել ձեզ այս և այն գործը, թէ ինչ բան բաց էր և ինչ բան փակ, և թէ ինչ անցքեր լինումէին փողոցների և ճանապարհների վերայ և դրացիների տների մէջ«։

—»Ալլահը տուել է մեզ աչքեր տեսանելու համար, համարձակվեցաւ Ջարքամ պատասխանել մեղմապէս—և լեզուն խօսելու համար։ Դորա մէջ կարող չէր ոչինչ չար բան լինել«։

—»Վկայ է Մահմետը· դուք կանայքդ խօսումէք, ինչպէս տնկած է ձեր խելքը· ուրեմն դու տեսել ես Նորան, աղջիկ, և հաւան ես Նորան«։

—»Հաւան է Նորան իմ Հայրը«։

—»Պատիր ինքդ· յիմարութիւնը չէ կարող ներս մտանել և օթեւան պատրաստել իւր համար իմաստունի մօտ։ Իբրահիմը բարի է, սիրուն և ազնիւ է, ունի անչափ հարստութիւն· բայց նա թեթեւամիտ է նոյնպէս, շատ թեթեւամիտ է, իմ դուստր։ Նա չափից դուրս շռայլ է և այն մեծ հարստութիւնքը որ Նորա նախնիքը թողել են Նորա համար, շուտով տալու է բոլոր չորս հողմերին«։

Թէև Շէյխը յօժար էր այս սիրուն կտոր յիմարութիւնը ամուսնացնել մի տղամարդի հետ և այդպէս ապահովել իւր աղջկայ դրութիւնը, բայց այս անգամս, երբ որ դիպուկ ժամանակը եկել էր, յառաջացան նորա մէջ մեծ երկբայութիւնք։ Ահա մի զայրացուցիչ բան։ Արդարև, Շէյխը կամենումէր իւր մատը պահել միշտ այս գործի մէջ· այլև պէտք է ասել, թէ այս առաջին անգամն էր, որ յանդուգն Ջարքամ յօժարութիւն ցոյց տուեց խածանել ծողակը (որոգայթը), բայց այժմ յատկապէս պիտոյ է այնպէս պատահէր, որ Շէյխը իւր աղջկայ առաջև դրած հրապոյրը (որսացող բանը) կրկին անգամ յետ քաշէր։

—»Ես կամենումեմ մտածել, իմ Հայր, պատասխանեց Ջարքամ· վերջապէս էգուց աւելի կը խօսենք այդ բանի վերայ· գիշերը կը ծնուցանէ մեր սրտումը բարի խորհուրդներ«։

—»Այո՛, այո՛, մտածումէր Շէյխը ինքը իւր մէջ—»եթէ մի կնա-

մարդ մտածումէ, ապա վերջապէս տալու է մի ստորասական [1]) պատասխանի․ այնուհետև ըմբռնված է թռչունը ծուղակի մէջ։ Ի՞նչ անեմ․ թո՛ղ նա գնայ իւր ճանապարհը։ Ամենայն բան երևի թէ Ալլահի կամքն է․ ոչ ոք կարող չէ իւր ճակատագրից ազատվիլ։

Շէյխի իմաստութիւնը արդարացաւ այժմ ևս․ Զարքան միւս առաւօտուն յայտնեց թէ պատրաստ է ինքը ընդունել սիրուն, ազնիւ բայց թեթևամիտ Ամիր Իբրահիմ իբն Մուրվանի հարսնախօսութիւնը։

Շէյխը ծիծաղեց իւր համար և կիսով չափ ընդ խաղ և կիսով չափ ծանրութեամբ ընդդիմացաւ ասելով։

— »Իմ զաւակ, այս մի մեծակշիռ բան է, մի շատ մեծակշիռ բան․ մի՞թէ յայտնի չէ քեզ բանաստեղծի խօսքը․ Շտապութեան շուտաբոյս ծառի պտուղը դառն զղջումն է։ Հեշտ էր ասել մի խօսք․ հեշտ էր մի գործ յանձն առնուլ․ բայց կային խօսքեր և գործեր որ նոյն ինքն Ալլահը չէ կարող յետ դարձուցանել․ նորա անունը թո՛ղ լինի յաւիտեան օրհնեալ։ Իբրահիմը մօտ է այն վտանգին, որ իւր անձը խորխորատի մէջ ձգէ․ լսի՛ր իմ աղջիկ․․․«

— »Ինչպէս դորա համար կամէի ես իմ վերջը զուգաւորել նորա վերջի հետ, ներս ձգեց խօսքը Զարքան, թշերը կարմրատակած և մի կիսածածուկ կրակ նորա դէպ ի ցած թողած հայեացքի մէջ։ Դորա համար իսկապէս․ ես կամիմ նորան ազատել իւր կորստից․ պատճառ, ես սիրումեմ նորան, իմ հայր։

Սիրու ընդդէմ կարող ես դու շատախօսել, մռմռաց Շէյխը իւր համար, և դու քո բոլոր խօսուածքով վերջապէս դուրս կը գաս յիմար։ Այս մի իմաստուն խօսք է․ ուրեմն թող Աստուած միայն օգնէ քեզ։

— »Ասա՛ Իբրահիմին, խօսքը յառաջ տարաւ Զարքան — որ ես նորա սեփականն եմ, թէ ապրիմ և թէ մեռանիմ․ բայց պարտական է նա ուղարկել ինձ գոնեայ 5000 ոսկի հարսնապարգև․ այս արծաթը կամիմ քեզ պահ տալ, ո՛վ իմ հայր«։

— »Ուրեմն թո՛ղ կատարվի Ալլահի կամքը, կրկնեց Շէյխը, սրտի խորքից յոգոց հանելով և այնուհետև թեթևացաւ նորա շունչը«։ Նա հագաւ իւր հողաթափները, որ անյապաղ որոնէ և գտանէ բաղդաւորված Իբրահիմը։

Միւս առաւօտուն մի մեծ բազմութիւն գեղեցիկ և փառահեղ ըզգեստաւորված ծառաների դուրս գնաց Երուսաղէմի դարպասից, ամենեքեան կրելով իւրեանց գլխի վերայ զուտ ոսկի անօթներ։ Իբրահիմն

---

[1]) Հա՛ ստորասական պատասխանի․ սորա հակառակն է բացասական, այսինքն չէ ստորասական պատասխանին։ Նմանապէս խօսքերս ստորասաբար և բացասաբար նշանակումեն այո և ոչ ասելով։

էր, որ այս պատուական ընծայքը ուղարկումէր իւր հարսին· ինչ հրաշալի բաներ էին սոքա· Թանգագին և փառաւոր կերպասներ, անուշահամ կերակուրք, հազուագիւտ քաղցրաւենիք, ազնիւ քարեր և ոսկեղէն զարդարանքներ գեղեցիկ արկղիկների մէջ և բազմօրինակ միւս այլ գեղեցիկ նիւթեր· բայց ի սոցանից մի հարսնապարգև 10,000 մանէթ ոսկի։ Իբրահիմի համար մի ամենևին մեծ բան չէր մի քսակ դինար աւելի կամ պակաս դնել։

Բայց և յիրաւի՝ կարելի չէր գտանել մի աւելի չքնաղ հարսն քան թէ Զարքան էր։ Երանի՛, տասն անգամ երանի՛ քեզ, ո՛վ Իբրահիմ, որի համար այս աշխարհումս արդէն պիտոյ է բացվէր դրախտի դուռը։ Նոյն իսկ Հուրիքը [1]) կարող չէին ցուցանել մի աւելի նուրբ հասակ, մի աւելի սպիտակ մորթ, մի աւելի բոլորակ բազուկ, աւելի վայելուչ ոտք քան թէ Զարքան ունէր։ Նորա ճակատը լուսափայլումէր որպէս ձիւնը Անտիլիբանոն սարի կատարի վերայ· Նորա աչքերը փայլատակումէին որպէս ամենապայծառ աստեղքը աղջամուղջ գիշերի մէջ· Նորա պարանոցը գեղեցիկ էր որպէս Հալեպի եղնաբունը, Նորա լանջքը լիք ու սպիտակ ինչպէս այն գոգաւոր ալիքը որ գալիս է և խորտակվումէ Սիդոնի ծովեզերեայքի վերայ։ Նորա հերքը էին ճոխ և փափուկ և փայլուն ինչպէս հեռաւոր Հնդկաստանի ամենապատուական քօղը· Նորա ձեռքերը նման էին փղոսկրեայ քանդակագործութեանը Սուլէյման բեն Դաւութ մարգարէի աթոռի վերայ· Նորա բերանը նման էր կոկոնից կիսով չափ դուրս արձակված կարօտակէզ վարդին Երիքովի հովիտումը· Նորա ժպիտը նմանումէր Դամասկոսի դրախտազարդ այգիների վերայ ծագող առաւօտեան արշալուսին· Նորա ձայնը հնչումէր որպէս Դաւութ Թագաւորի քնարը երեկոյեան արշալուսի միջոցին· Նորա ատամները զմայլեցուցիչ էին ինչպէս Պարսից ծովածոցի պատուական մարգարիտները։ Օրհնեա՛լ լինի Աստուած որ հրաշագործել է մի այսպիսի հրեշտակային ադամորդի, այսպէս ամենևին գեղեցիկ, ամենևին անարատ։

Ապա մի՞թէ զարմանալի բան էր, որ փեսան անհամբեր սրտով սպասումէր իւր հարսին։ Յառաջ քան թէ գալոց նորոգութիւնը լուսնի եղած էր, կապվեցաւ ամուսնական դաշնաւորութիւնը· Դամասկոսի կէս ժողովուրդը այս հարսանիքի միջոցին ոտքի վերայ էր· Նոյն քաղաքի գլխաւոր Կադին գրեց ամուսնութեան պայմանքը· կուսակալի պալատի առաւել երևելի պաշտօնակալքը ներկայ էին։

---

[1]) Այն միշտ կոյս աղջկունքը դրախտի, որ Մահմետը իւր Կուրանի մէջ խոստացել է որպէս վարձատրութիւն առաքինի Մահմետականներին։

Արդէն հասել էր այն րոպէն, որ հայրը պիտոյ է հրաժարական ողջոյն տար իւր աղջկան:

—«Իմ զաւակ, խօսեց Շէյխը իմաստուն մարդու սեփական խաղաղ և արժանաւոր հոգով· Թող մարգարէն լինի քեզ առաջնորդ քո բոլոր ելումուտքի վերայ: Քո հարսնաբաժինքը չէ ծանրաբեռնելու քեզ քո ճանապարհի վերայ դէպ ի քո պարոն ամուսնու տունը: Այն մի հատ բանը, որ ունիմ քեզ տալու, այս գեղեցիկ գիրքն է, որ պարունակում է իւր մէջ հռչակաւոր Աբու Լէյսի բոլոր բանաստեղծութիւնքը, առասպելքը և առածքը: Սա մի գանձ է, իմ զաւակ, մի անկշռելի գանձ նորա համար, որ գիտէ օգուտ քաղել նորանից· սա է մի անըսպառելի աղբիւր իմաստութեան և երջանկութեան· քո սեաւ օրերումը կարող ես դու քաղել նորանից յոյս, զօրութիւն և մխիթարութիւն, բայց միւս օրերումդ խրատ, խորհուրդ և բարի յորդորանք: Ահա վեր կալ դորան, իմ դուստր· Աստուած լինի քո հետ: Բայց դու կարող ես երբեմն գալ ինձ տեսութիւն· միայն խնայիր ինձ, հեռի պահելով ինձանից որևիցէ տնային երկպառակութիւններ: Այս պատճառով ահա գտած ես դու քեզ տղամարդ, որ նորա հետ կռիւ անես, ինչպէս կամենում է և կարօտ է սիրտդ· ես թող հեռի մնամ այդ բոլոր խռովութիւններից: Բայց մի գուցէ, որ դու ասես, թէ ես այլապէս էի վարվում քո հետ քան թէ մի բարի հայր, ապա տալիս եմ քեզ իշխանութիւն պահանջելու ինձանից բարի խորհուրդ, երբ որ դու մի տառապագին դրութեան մէջ էիր: Մի, երկու, երեք անգամ կամէի օգտակար լինել քեզ· այնուհետև պիտոյ է դու ինքդ քեզ օգնես, ինչպէս կարող ես: Ամենագթած Ալլահի և մարգարէի անունով· օրհնեալ լինի քո ելքը, իմ դուստր· չը մոռանաս այն գիրքը»:

Այս խօսքերով Շէյխը դուրս թողեց գրկից ու տանից իւր Զարքա դուստրը և նորա քամակից ամուր փակեց դուռը:

Ինչպէս ազատ ու հեշտ շունչ էր քարշում նա այժմ, երբ որ վերջապէս տեսաւ իւր անձը միայն: Ցիմարութիւնը հալածված էր տանից· պարզ և յստակ իմաստութիւնը յետ էր մնացել· այժմ էր նա վերջապէս կատարեալ իմաստուն, կրկնապատիկ ազատ, կրկնապատիկ պատուարժան· այժմ կարող էր նա համարձակապէս նայել ամեն մարդու երեսի, առանց սրտումը յետ քարշվելու կամ թէ մի թուլութիւն զգալու:

Այս միջոցին Զարքան որպէս բացարձակ իշխանուհի տեղափոխված էր դէպ ի երիտասարդ Ամիրի օթևանը, որպէս մի հրաշք նոյն իսկ հըպարտ Դամասկոսի մէջ, և հանգստացել էր փափագով ու կարօտով սիրող Ամիրի գրկախառնութեան մէջ: Զարքան շատ երջանիկ էր· ով կարող

է բառեր գտանել, սիրու քաղցր զգօսանքները թարգմանելու համար. ժամանակը անց էր կենում նորա համար որպէս մի բաղդաւոր երազ։

Ամիր Իբրահիմ իբն Մուրվանը արդարև մի բարի և վեհանձն մարդ և անչափ հարուստ էր. նա ունէր բազմաթիւ ապարանքներ և ագարակներ, անհամար ծառայք և ամենապատուական գեղեցիկ ձիանքը, որ կարող էր ցուցանել շրջակայ անապատը։ Բաց ի սոցանից Ամիր Իբրահիմի հայրը թողել էր նորան մեծամեծ գանձեր. ոսկի, արծաթ, ազնիւ քարեր, յստակ դրամ և տեսակ տեսակ անկշռելի թանգագին բաներ. սոքա օրէ օր յաւելանումէին, բայց ցաւելի է ասել, որ նոքա, այսինքն ոսկին ու արծաթը նուազումէին։

Բայց Իբրահիմը նոյնքան ևս թեթևամիտ էր, ինչքան որ բարի, վեհանձն և հարուստ էր. նա բարեգործ էր, մեծամիտ և անասելի կերպով շռայլ. նա ոչինչ էր համարում արծաթը, եթէ դորանով իւր կամ միւսերի համար կարող էր պատրաստել մի րոպէական ուրախութիւն։ Այս պատճառով անկարելի էր, որ նորա բաղդաւորութիւնը չը հետևէր վերջապէս այն ճանապարհին, ինչ ճանապարհով անցանումէ ամենայն հողեղէն բան աշխարհումս։

Այս բանիս շատ լաւ վերահասու եղաւ Զարքան, երբ որ արդէն սիրու արբեցուցիչ զգօսանքը Իբրահիմի հետ այնքան չափաւորված էին, որ կարող էր նա փոքր ի շատէ հաշիւ ու համար տալ իւրեան, թէ ինչ պայմաններով Ալլահի կամքը այդպէս է սահմանել ու որոշել։ Այժմ միտք բերեց նա և այն նպատակը, որ իւր սէրը դրել էր իւր աչքի առաջև, այսինքն իւր սիրելի ամուսինը փրկել կորստի յորձանքից (ջրապըտոյտքից)։ Այնուհետև սկսեց նա քաղցր, բայց ազդու առաջարկութիւնք անել իւր տղամարդին. սա ուշը դարձուց իւր վերայ, խոստացաւ, որ զգաստանայ իւր արարքի վերայ և փոխէ իւր մինչև այժմ ունեցած ապրելու կերպը. բայց բանը մնաց միայն բարի դիտաւորութենների վերայ, առանց գործով կատարվելու։ Իբրահիմը չկարողացաւ ազատել իւր անձը այն սխալ նախակարծիքից, թէ իւր հարստութիւնը կարող էր միանգամ վերջանալ. թող այս բանը. այնքան թեթևամիտ էր նա, որ կարող էր հանգստացնել իւր սիրտը նոյնպէս անհիմն ու անհաստատ նկատողութեններով։ Եթէ պատահելու էր արդարև, որ պակասէր նորա արծաթը, միթէ, մտածումէր իւր մէջ, կարող չէ նա օգտակար կացուցանել իւր շնորհքը. միթէ չունէր նա երկուսը ևս, հարուստ և մեծատուն բարեկամներ. միթէ չունէր նա մի բաղդաւոր աստղ կուսակալի պալատումը իւր հայրենական Դամասկոսի մէջ։ Այսպէս մտածելով, չը դժուարացաւ Իբրահիմը նոր ի նորոյ թոյլ տալ, որ դուրս վազէ իւր հարստութեան աղբիւրը։

*Այսպիսի մարդերի աչքը կուրացուցել է Իբլիսը․ ոչինչ դեղ կարող չէ բժշկել նորանց բաց ի այն թանգագին կենսական բաժակից որ կարող է միայն ստացվիլ մեծ զրկանքով և ամենամեծ տառապանքով, այսինքն է դառն փորձը։*

*Ի վերայ այսր ամենայնի, Զարքան տեսաւ, որ իւր բոլոր աշխատանքը անօգուտ մնացին իւր ամուսնու անչափելի թեթևամտութեան պատճառով․ այնուհետև փախաւ նորա երջանկութիւնը, թէպէտ նորա սէրը իւր սրտի մէջ ստացել էր տասնապատիկ աւելի ամրութիւն։ Ուրեմն շատ հարկաւոր էր այժմ, որ Զարքան դիմէր իւր հօր մօտ, խնդրելու նորա խորհուրդը և մխիթարութիւն հանելու նորա խորին իմաստութեան աղբիւրից։ Միթէ ծերունի Շէյխը խոստացած չէր, երեք անգամ իւր իմաստուն խորհրդովը օգնել իւր աղջկան, երբ որ սա լինելու էր նեղութեան մէջ։ Միթէ այս խոստումը, առանց յիշելու Աբու Լէյսի բանաստեղծութիւնքը, որոնց մէջ ոչինչ գտանվում չէր որ կարելի էր գործ դնել Զարքայի այժմեան յաւելի դրութեան մէջ․ միթէ այդ խոստումը չէր այն մի հատիկ հարսնաբաժինքը որ իւր հայրը տուել էր նորան։ Այս պատճառով ահա, դիմեց Զարքան իւր ծնողի մօտ, որ այս բաժինքի առաջին մասը ստանայ։*

*—»Աստուծոյ խաղաղութիւնը լինի քո հետ, իմ դուստր․ ոտքդ բարի լինի իմ սեամիս վերայ»․ այսպիսի յառաջընթաց խօսքերով ողջունեց Շէյխը իւր աղջիկը և աւելի պատուարժան և ինքնաբաւական կերպով, քան թէ երբ և իցէ յառաջուց եղած էր։ »Կարծեմ որ դու գալիս ես միայն, որ իմաց տաս ինձ, թէ դու երջանիկ ես, և առ ի սրտէ ցանկանումես, որ քո հայրը անխռով վայելէ իւր խաղաղութեան բոլոր երջանկութիւնը, և թէ դու շտապումես և կամիս իսկոյն միւսանգամ հրաժարվիլ ինձանից»։*

*—»Իմ հայր, պատասխանեց Զարքան վստահութեամբ— »ես դիմումեմ քո մօտ իմ տրտմութեան մէջ և կամենումեմ հանգիստ գտանել քո իմաստութեան մեղմ և սրտաշէն խօսքերի մէջ»։*

*—»Ով կին, դու մարմնացեալ յիմարութիւն, ձայն արձակեց բարկացած Շէյխը․ ինչ բան ունի քո հետ իմաստութիւնը։ Տես ահա, իմ մօրուքս ճերմակել է․ ես փափագումեմ գնալ այն տեղ, ուր իմ հարքը ժողոված են, մշտնջենաւոր ուրախաւէտ խաղաղութիւն վայելելու համար։ Ես իմաստութեան օթոցը (խալիչէն) պարզել եմ իմ առաջև և նստած եմ այս տեղ իմ առանձնութեան մէջ և փոքր ի շատէ ճաշակումեմ արդէն այն խաղաղութեան բաժակից որ պատրաստած է արդարների համար։ Այժմ եկել է յիմարութիւնը և զարկումէ ոտքով իմ դրան առաջև, ծոցումը դրած խռովութեան շարժարանքը․*

կէն մարդ ու խառնակութիւն երկու բան են, մի կտորից բաղկացած․ գնա, կորիր, չէյթան—դու եկել ես աղմկելով կռծելու իմ դուռը։ Իրաւ է բանաստեղծի ասածը․ փակի՛ր բոլոր դռները և ամրացրու քո բոլոր լուսամուտքը ամենայն զգուշութեամբ, բայց եթէ այնպէս էր սահմանված, ապա խռովութիւնը ի վերայ այդր ամենայնի ճանապարհ կը գտանէ դէպ ի քեզ․․․և միւս այլ բան ասած կայ․ Չէ պիտոյ քեզ բերանդ պարզել, մինչև մոլորեցուցիչ ըմպելին շօշափեր քո շրթունքը։ Այս աշխարհումս ոչինչ բան աւելի ստոյգ չէ, քան թէ մահը։ Երդումն եմ ուտում մարգարէի մօրուքով, պիտոյ է յիմարութիւնը արդէն շօշափած ու վարակած լինի քեզ, ըստ որում գործ եմ դնում ես այսքան անօգուտ խօսքեր—բանը յառաջ տարաւ Հէյխը, մուշտակի մազերը երկու մատերի միջից սահեցնելով—»ինչ կամիս այս տեղ, իմ դուստր։ Առաւել կարճ ճանապարհը է միշտ և առաւել ապահով ճանապարհը դէպ ի նպատակ»։

Զարքան համառօտ բացայայտեց նորան իւր դրութիւնը և խնդրեց նորանից խորհուրդ։

—»Խորհուրդս կը ստանաս դու․ բայց յետոյ աշխատի՛ր նորան օգտակար կացուցանել քո համար, պատասխանեց Հէյխը․ հանի՛ր ականջիդ բամբակը, որ իմաստութեան ձայնը զուր չը լինի հնչեցած»։

—»Յառաջ քան թէ մօրուքս սկսեց ոլորվիլ, ես մի ունայնասէր տղայ էի, ինչպէս ադամորդիների մեծ մասը։ Արագավազ երիվարը և վայրենի անապատը աւելի սիրելի էին ինձ քան թէ առաւել ախորժ մեղմացուցիչ ըմպելին, իմաստութեան արձակ ու հով սրահի մէջ։ Ես դեռ ևս ուսած չէի իմ ձին վազեցնել հրապարակումը, երբ որ իմ հայրը բաշխեց ինձ մի մանուկ ձի շատ ազնիւ արիւնից։ Ո՛վ այնքան երջանիկ էր, ինչքան պատանի յիմարը․ սա երևումէր ինքը իւր աչքին մի այլ Ռուստամ Զալ [1]։ Բայց այս փառքը փոքր մնաց, որ հասուցանէր ինձ մի տրտում վերջի․ առաջին անգամը, երբ որ ես հեծայ իմ մանուկ ձիու վերայ, սա առաւ սանձը ատամների մէջ և փախաւ։ Այն րոպէին թանգ բան էր իմ համար մի բարի խորհուրդ, ինչպէս այժմ քեզ, իմ դուստր։ Բայց շուտով զգաստացայ ես, պինդ ամրացուցի մարմինս թամբի վերայ, ասպանդակներովը ճնշեցի գլուխը առած երիվարի կողերը և սկսեցի գեղարդիս կոթովը օրինաւոր ջարդել նորան։ Փոխանակ զուր և անօգուտ աշխատելու սանձահարել նորան, սորա հակառակ ստիպեցի նորան զօրացնել իւր կատաղի վազընկէցութիւնը։

---

[1]) Պարսկաստանի հռչակաւոր քաջ տղամարդը, որի մասին շատ զարմանալի պատմութիւնք լինումեն Պարսից բանաստեղծ Ֆերդաուսիու տաղերի մէջ։

Շէյթանը հանդարտեց և ունէր պատճառ հանդարտելու։ Նոյն րոպէին, երբ որ նա կարծումէր թէ խլել է իմ ձեռքից բոլոր իշխանութիւնս իւր վերայ, ես հասկացուցի նորան, որ նոյն րոպէին յատկապէս աւելի պիտի հնազանդէր իմ իշխանութեանը քան թէ յառաջուց։ Այս տարակուսելի դրութեան մէջ, այն անասունը շուտով վաստակեցաւ իւր խաղից, շուտով մեղմեց իւր վազքը և կրկին ստորադրեց իւր անձը սանձի տակ։ Եւ սորանից յետոյ, նա երբէք գլուխ առած չէ ինձանից։ Այս էր առաջին յայտնութիւնը երկնային իմաստութեան որ շարժվեցաւ իմ մէջ․ արդարև, սա մի շատ աւելի բան չէր, եթէ ոչ մի կոպիտ բնական ազդեցութիւն․ բայց հանճարը դուրս փայլեց նորա մէջ և ակնարկութիւն արեց, օրհնեալ լինի մարգարէն, դէպ ի այն աւելի մեծակշիռ և աւելի գեղեցիկ ժամանակը որ գալոց էր իմ կեանքի մէջ։ Ահա քեզ իմ պատմութիւնը․ եթէ դա չէ կարող լուսաւորել խաւարը քո հոգու մէջ; ապա ոչինչ բան բոլոր աշխարհումը չէ կարող օգնել քեզ։ Գնա այժմ, իմ դուստր և չը գաս միւսանգամ շուտով․ Ալլահը քո հետ«։

Սկսեալ այս ժամից մի մեծ փոփոխութիւն յառաջացաւ Զարքայի սրտի ու վարքի մէջ։ Փոխանակ ընդդիմանալու իւր տղամարդի վատնողութեանը, շատ շուտով սովորեց նորան և մինչև այն աստիճան սիրեց այդ շռայլութիւնը, որ ապա գերազանց գտանվեցաւ իւր տիրոջից և վարժապետից։ Նա իւր մասնաւոր գործերի մէջ բաշխումէր սորան և նորան ահագին արծաթ և այսպէս բոլոր ոսկին հալվեցաւ նորա ձեռքի տակ։ Ինչքան որ ստանումէր նա, այնքան ևս աւելի կարօտ էր։ Այնուհետև դադարեց Իբրահիմը նոյնպէս, որպէս Շէյխի վազող ձին և յանկարծ յառաջացաւ մի զկայառութիւն (դադար) այս անօգուտ վատնողութեան մէջ։ Այժմ Իբրահիմի կարգն էր, խրատներ տալ իւր կնոջը։ Զարքան գութը շարժվելով ընդունեց իւր ամուսնու մեղմ յանդիմանութիւնքը․ և երկուքը վերջապէս միաբանվեցան, ամեն մինը իւր կողմից, ժուժկալութեամբ և խելացի տնտեսութեամբ կառավարել իւրեանց ապագայ կեանքը։

Բայց այս իմաստուն տնտեսութիւնը երկար չը տևեց․ Իբրահիմը նոր ի նորոյ ցոյց տուեց շռայլութիւն, և Զարքան ճշդութեամբ հետևեց նորա օրինակին․ յառաջացան նոր տարակուսանք, նոր պայմանադրութիւնք ամուսինների մէջ, նոր խորհուրդք, թէ ինչպէս պիտոյ էր չափաւորել իւրեանց ծախքը։ Բայց մի փոքր յետոյ կրկին վատացաւ բանը և դարձաւ այնպէս, ինչպէս յառաջուց։ Վերջումը թող տուեցին նոքա, որ ամենայն բան ընթանայ, ինչպէս կամէր, և այսպէս կարճ միջոցում վերջացաւ նոցա բարեկեցութիւնը։ Գանձերը սպառ-

ված էին, կալուածները հետ զհետէ վաճառված, մի չնչին գնով։ Այժմ անագան (յուշ) էր փոփոխել իւրեանց կեանքի ընթացքը․ յայտնի էր ահա, որ պիտոյ է տնաքանդ լինին նոքա։ Կալուածներից յետոյ վաճառվեցան ձիանքը, ծառայքը և տան թանգագին անօթները։ Վերջապէս օտար մարդերի ձեռք անցաւ և հայրենական ապարանքը քաղաքի մէջ․ և երկու աղնիւ ամուսինքը, Ամիրը և նորա գեղեցիկ կինը, մի օթևան ունենալու համար, ստիպվեցան տեղափոխ լինել մի թշուառ փոքրիկ խրճիթի մէջ որ կար այն փառաւոր ապարանքի հանդէպ, ուր ապրել էին նոքա իւրեանց փառքի ու մեծութեան օրերումը, որ և այն միջոցին դատարկ էր բնակութենից։

Այն տեղ ահա նստած էին մարդ ու կին և փիլիսոփայութիւն էին անում։ Նոցա անբաղդութեան պատահարը այնպէս յանկարծ հասել էր նոցա գլխին, որ նոքա և ժամանակ ունեցած չէին իւրեանց թշուառութիւնը հասկանալու, թող թէ զօտևորվելու համբերութեամբ։ Այժմ հասկացան, բայց համբերութեամբ տանել իւրեանց ցաւին, այդ հեռի էր դեռ ևս։ Թեթևամիտ երիտասարդի ոտք ու ձեռքը մանաւանդ կապվեցան ու կաշկանդվեցան․ նորա գոյութիւնը համարեա թէ քայքայված էր և նա իւր թշուառութեան մէջ չը գիտէր ոչ ելքի և ոչ մուտքի ճանապարհ։ Վերջումը, նորա կինը քաղցր յորդորանքներով այնքան հոգի տուեց նորան, որ նա գնաց դէպ ի քաղաք, այն շատ օգտաբուղխ աղբիւրներից մի քանիքը բանալու համար, որոնցով ինքը պարծեցած էր իւր բարեկեցութեան օրերումը, որպէս թէ դոքա պատրաստ էին իւր համար։ Մի՞թէ կուսակալը ողորմած չէր նորա վերայ․ մի՞թէ յարգելի չէր նա պալատումը․ մի՞թէ չունէր նա շատ և կարող բարեկամներ․ թող այդ․ մի՞թէ չը կային նորա մէջ շնորհներ և յաջողակութիւններ որոնցից առանց դժուարութեան կարելի էր ոսկի դինարներ հատանել։

Ահ ու դողի մէջ սպասումէր կինը իւր ամուսնու դարձին դէպ ի տուն․ վերջապէս եկաւ նա․ բայց սիրտը կոտրած, ամօթապարտ, յուսահատ, մէջքը գետնին զարկած։ Նա չը համարձակվեցաւ երևել իւր կնոջ աչքին։ Մի քանի ջերմ արտասուք թափվեցան նորա թշերի վերայից․ նորա սիրտը կուրծքի մէջ կամենումէր պատառվիլ և նա ցանկանումէր, որ գետինը ոտքի տակին փուլ գայ, նորան կլանելու համար։

Կուսակալի մօտից մերժված էր նա․ պալատականքը խղճեցած էին նորան և արհամարհանքով աչք էին ածել նորա վերայ․ նորա բազմաթիւ բարեկամները պատահմամբ չէին տանը, և ոչ մի մարդ չը կարողացաւ օգուտ քաղել նորա կարծեցած շնորհներից․ ինչ այլ ևս մնումէր նորան, բաց ի մահուց։

Իբրահիմը ինքը իւրեանից հրաժարված էր․ նա զգումէր, որ առանց փրկութեան կորած է, և առանց ընդդիմութեան անձնատուր եղաւ իւր չար և անողորմ բաղդին։ Առանց կերակուր և ըմպելի ընդունելու, անքուն և անհանգիստ, առանց մի բառ խօսելու, անցուց նա գալոց օրը մի թմրած, ցաւալից դրութեան մէջ, սօֆայի վերայ տարածված ինչպէս սովոր էր, գլուխը ծածկած և նստած մի փոքր լուսամուտի մօտ, աչքը ուղղեցուցած դէպ ի հայրենական օթևանը, իւր յաւիտեան կորուսած դրախտը։ Հաղիւ թէ կարելի է մի աւելի դառն ցաւ մտածել քան թէ այն ցաւն էր, որից յաղթահարվեցաւ նա։ Զարքայի քաղցր սիրախառն ձայնը ևս կարող չէր դուրս հանել նորան այս յուսակտուր դրութենից որ մօտ էր խելացնորութեան։

Միւս օրին Զարքան դիմեց դէպ ի Քեօշկը, Երուսալեմի դարպասից դուրս, որ տեսութիւն առնէ իւր հօրը։ Նա պատմեց նորան համառօտապէս, թէ Իբրահիմի թեթևամտութեամբը ինչ դրութեան էր հասել ինքը։

Վկայ է մարգարէի մօրուքը․ զարմանալի բաներ են դոքա, որ դու պատմումես ինձ — ձայն արձակեց Շէյխը։ «Մի՞թէ տուած չէի քեզ իմ իմաստուն խորհուրդը․ բայց ես հասկանումեմ․ ինչ օգուտ իմաստութիւնը յիմարութեան ձեռքումը․ դա մի անձրև է, որ անապատումը շոգիանումէ։ Այո՛, այժմ եկել ես դու ստանալու իմ միւս խորհուրդը․ Ալլահը մի՛ արասցէ, որ ես խլեմ քեզանից քո իրաւունքը։ Քո փեսայի պարգևը, 10,000 մանէթ ամբողջապէս, գործ են դրված մի լաւ գեղեցիկ ագարակի վերայ, որով կարող ես դու ապրել ոչ թէ միայն պատշաճապէս, այլև որպէս մեծատուն։ Գնա կադիու մօտ և պահանջի՛ր որ լուծանէ քո ամուսնութիւնը։ Օրէնքը տալիս է քեզ պաշտպանութիւն այնպիսի տղամարդից որ խելագարի պէս ոչնչացուցել է իւր յատուկ և իւր ընտանիքի բոլոր բաղդաւորութիւնը․ թող դորան, այդ յիմարին, գնալ ուր և կամի։ Ես խօսեցի, այժմ բարեաւ մնաս»։

Զարքան յետ եկաւ դէպ ի իւր թշուառութեան օթևանը․ նա գտաւ Իբրահիմը մի և նոյն դրութեան մէջ, ինչպէս թողել էր նորան։

—«Իմ սիրելի Իբրահիմ․ այսուհետև պիտոյ է փոխվի մեր կեանքի գնացքը, ասաց նա մօտենալով նորան և սիրողապէս փաթաթվելով նորա վզին։ — Դու պարտական ես պահպանել քո անձը աւելի բաղդաւոր գալոց օրերի համար․ կենդանութեան կորստի հետ կորած է ամենայն բան։ Այս կենդանութեան հողի միջից, թող լինի դա այնքան վատ որչափ և կամէր, այնու ամենայնիւ կարող է կանաչել դեռ ևս մի յոյսի ծիլ․ բայց օդի մէջ կարող չէ ոչինչ ծլել և կանաչել։ Արի՛, իմ սիրելի, օրը երեկոյացել է ահա․ դու դեռ ևս ոչինչ կերած չես․ հան-

գստացիր քո դիվանի վերայ, ես կամիմ վառել քո լապտերը· ապա մի քանի րոպէ կը հեռանամ քեզանից, քո համար մի զօրացուցիչ կերակուր պատրաստելու։ Արի՛, արի՛· բարի է մի փոքր զուարթութիւն· Ալլահը կենդանի է միշտ»։

Ջարքան վառեց լապտերը և թողեց Իբրահիմը իւր կամքին։ Այնուհետև նստած էր նա դիվանի վերայ և անդարձ աչքով նայումէր սեղանի վերայ դրած լապտերի լուսափայլ բոցին, ինչպէս յառաջուց նըստած պատուհանի մօտ, նայումէր իւր կորուսած ապարանքի վերայ։ Նորա առաջև դրած էր մի բաց արած գիրք· սա էր Աբու Լէյսի բանաստեղծութիւնքը և առասպելները, որոնցից կարդացած էր Ջարքան իւր հեռանալուց յառաջ։ Գրքի մէջ դրած նշանը ցուցանումէր, թէ մինչև որ տեղ էր հասուցել Ջարքան իւր ընթերցանութիւնը։

Իբրահիմի աչքերը խոնարհեցան դէպ ի ցած և ընկան այն գրքի վերայ· բայց ոչ մի բան կամ մտածութիւն չը ջերմացրեց նորա հոգու սառնութիւնը։ Սակայն, առ փոքր փոքր սկսեց նորա երևակայութիւնը խաղալ գրքի շողշողուն և արուեստական տառերի հետ և ամփոփել նորա բոլոր ուշադրութիւնը։ Ահա դորա բովանդակութիւնը· »Ամենագթած Ալլահի անունով· Նորան փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից»։

»Պատմութիւն է լինում այսպէս· Բամլահ քաղաքումը կենումէր միանգամ մի պատուարժան Շէյխ, բոլոր Ասորեստանի մէջ հռչակված իւր իմաստութեան և հրաշալի գործերի պատճառով։ Նորա մօտ եկաւ միանգամ հեռաւոր տեղից մի մարդ վիրաւոր, ծանրացած սրտով, և մեծ վհատութեան մէջ բերան բացեց, խօսելով այսպէս։

»Ո՛վ Շէյխ, դու, որ ունիս իմաստունների քարը, քո մօտ դիմել եմ ես իմ վատաբաղդութեան մէջ, որ աղաչեմ քեզ, փրկել իմ անձը ինձանից։ Ես կրումեմ իմ սրտումը երեք դև, որոնց հետ միշտ պատերազմումեմ ես առանց յաղթելու նոցա, որ և այժմ կամենումեն ինձ ողորմելի կերպով պատառել։ Առաջինն է բարկութիւնը; երկրորդը ագահութիւնը, երրորդը պատուամոլութիւնը»։

—»Աներկիւղ դուրս թափիր քո բոլոր սիրտը, ով իմ որդի, — ասաց Շէյխը, աղաչաւորի ճակատը շօշափելով իւր մատովը«։

—»Ինչպէս դու հրամայումես« — պատասխանեց օտարականը, սըրտի խորքից յոգոց հանելով, երբ որ ժողովել էր իւր միտքը, և ուշը դարձուցել էր իւր վերայ։ Ապա սկսեց նա այսպէս· Ես չարագործութենների մէջ ծերացած ու սխտակեցած եմ· ո՛հ, մինչև ո՛ր աստիճան կարող են ախտերը մոլորեցնել մարդս։ Բարկութիւնը էր առաջինը այն դևերի որ քնած էին իմ սրտի մէջ և զարթեցան իմ մէջ։ Ես իմ մանկութեան օրերումը ստացայ բարեկամներ, բայց չը կարողացայ պահ-

պանել նորանց· ես ստացայ ծառայք, բայց չարաչար վարվեցայ նոցա հետ։ Ցառաջ քան թէ բուսել էր մօրուքը կզակիս, ես ատելի ու գարշելի դարձայ ամենայն մարդու աչքի»։

»Բայց իմ բարկացկոտութիւնը էր միայն յառաջընթացը այն միւս անձոռնի գաղամների, որ օթեան էին գտել իմ գոյութեան մէջ։ Այնուհետև երևեցաւ իմ մէջ և ագահութիւնը և պարզեց իւր յափշտակող ճանկերը դէպ ի բոլոր աշխարհ։ Ինձ պիտոյ էր հնազանդել գոբան և կեղեքել դէպ ի իմ կողմը ամենայն բան, որ հասանելի էր ինձ։ Շատը փոքր էր ինձ, առաւելը բաւական չէր· բոլորը միայն կարող էր հերիքացնել այս Խպլիսի որդու սիրտը։ Ես կողոպտեցի այրիքը և որբերը և անէծք անէծքի վերայ կուտակեցի իմ թշուառ գլխին»։

»Բայց դեռ ևս մնումէր ծայրագոյն դևը, այսինքն պատուամոլութիւնը։ Թէպէտև ատելի, գարշելի և անիծեալ էի ես բոլոր մարդերի աչքին, թէ լաւերի և թէ վատերի, այնու ամենայնիւ կամենումէի պատուելի լինել աշխարհի մէջ։ Պատուի և կարողութեան փայլուն նշանները էին, որ կուրացուցին ինձ· ինչ կ՚արժէր, թող արժէր, պէտք էր ինձ հասանել ծայրագոյն պատուին այս աշխարհի աչքումը· պէտք էր ինձ կառավարել, բռնութիւն գործել, պէտք էր ինձ բոլոր աշխարհը հողի մէջ ոտքիս տակ տեսանել։ Եւ այս նպատակիս հասանելու համար, ջերմեռանդապէս օգնական եղան միւս դևերը իւրեանց վարժապետին։ Ես թոյլ տուեցի բարկութեանս փայլատակել, ես հոգացի կաշառք տալ դատաւորներին և մարդ կործանել· ով կարող էր ընդդիմանալ ինձ»։

»Ես չէի կարող տանել դիմադարձութեան — օտարականը յառաջ տարաւ խօսքը սարսափելով· ես ոչ միանգամ մխեցի ձեռներս արիւնի մէջ, ճանապարհ բանալու իմ առաջև· ես խաղումէի մարդկային կեանքի հետ, ինչպէս միւսերը քուէներով։ Մեռանողների աղաղակը դեռ ևս հնչումէ իմ ականջի մէջ թէ գիշերով և թէ ցերեկով· տառապեալների արտասուքը կարմրացած ածուխների պէս վառվումեն իմ հոգու վերայ· ողորմած Աստուած, ինձ չը կայ այլ ևս փրկութիւն· ես դատապարտածների ընկերն եմ«։

»Ո՛հ, խօսքը աւելի յառաջ տարաւ օտարականը, ձեռքերը կցելով և ահ ու դողի քրտինքը թափվելով նորա ճակատից — ա՛րդեօք կարող էի դարձուցանել իմ անցած կեանքը և նոր ի նորոյ ապրել, միայն թէ լինէի ես այնպէս մտածող, որպէս այժմ· այնուհետև պիտոյ է ամենայն բան փոխվէր և բարւոքանար»։

Օտարականը վերջացրեց խօսքը· ջաղջախված և դողդողալով կանգնած էր նա Շէյխի առաջև, որպէս թէ ահա ստացել էր իւր մշտընջենաւոր դատակնիքը և նորա տանջանքները։

—»Իմ որդի, ասաց նորան Շէյխը, միւսանգամ իւր մատի ծայրովը շօշափելով նորա ճակատը· Աստուած գթած է· թող լինի քեզ, ինչպէս կամէիր դու· քո ցանկութիւնը կատարված է· պատճառ, այն կեանքը որ դու նկարագրեցիր ինձ որպէս թէ անցուցած էիր չարագործութենների մէջ, մի լոկ կախարդական երևոյթ է, որից պիտոյ էր քեզ ուսանել, թէ ո՛ւր կարող էին առնուլ և տանել քեզ քո սրտի մէջ բունաւորված չար ախտերը, եթէ դու կանուխ չը յաղթէիր նոցա։ Գնա դէպ ի խաղաղութիւն, իմ որդի, և օրհնի՛ր Ալլահի մարդասիրութիւնը և ողորմասրտութիւնը»։

—»Այ՛յ ինձ· երանի՛ թէ և իմ խեղադարութիւնս եղած լինէր մի լոկ երազ, թոթովեց Իբրահիմը, երբ որ վերջացուցել էր այս պատմութիւնը, աչքերից հեղեղի պէս թափվելով արտասուքը և կցելով ձեռները։— »Ողորմած Ալլահ և դու փառաւորեալ մարգարէ, թող և ես կարողանայի իմ կեանքս նոր ի նորոյ սկսանել։ Երդումն ուտեմ մօրս գերեզմանովը, ամենայն սուրբ բանով որ կայ երկնքումը և երկրի վերայ, թէ այսուհետև պիտի այլապէս, ամենևի՛ն այլապէս լինի իմ կեանքի ընթացքը«։

Այս միջոցին Զարքան ներս էր մտած առանց Իբրահիմի նկատելուն, և սիրտը խորքից շարժուած, վկայ էր եղած իւր սիրելի ամուսնու արտասուալից զղջմանը։ Այն ձեռքը, որով նա ամանը պատրաստած կերակրով դրեց նորա առաջև սեղանի վերայ, դողումէր զգալի կերպով, և այն ձայնը որով խօսեց նա, թոյլ և գրեթէ երկիւղալից էր, թէպէտ քաղցր և սիրախառն։

»Ալլահը մե՛ծ է, Ալլահը գթա՛ծ է, և մարգարէն նորա հաճոյական սպասաւորն է, ասաց նա մեղմ և կակուղ ձայնով— »Մշտնջենաւորի առաջև ոչինչ բան անկարելի չէ· մխիթարվի՛ր, իմ բարեկամ, գուցէ դեռ ես բոլորը միւսանգամ կը բարւոքանայ· ո՛ գիտէ, գուցէ թէ քո աղօթքը եղել է մի բարի ժամու մէջ և լսելի է գտանվել։ Կե՛ր այժմ և զօրացի՛ր· տղամարդ կացիր, որ քո հաւատարիմ կենակիցը այսուհետև կարողանայ բաղդաւոր զգալ իւր անձը որպէս քո կին«։

Զօրաւոր, սաստիկ համեմային կերակրի հոտը հրապուրեց երիտասարդի ճաշակը· յանկարծ զգաց նա իւր մէջ մի սաստիկ սովածութիւն։ Մի անսովոր ախորժակով կերաւ նա և լիացաւ, և իւր սրտումը օրհնումէր իւր ամուսինը նորա քաղցր հոգաբարձութեան համար։

Երբ որ Իբրահիմը միւս առաւօտուն բացեց աչքերը, կարծումէր թէ երազի մէջ է և կրկին փակեց աչքերը։ Յետոյ միւսանգամ բացեց աչքերը և հիացած նայեց դէպ ի ամենայն կողմ։ Նա վեր բարձրացրեց ձեռները, նկատեց նորանց և շօշափեց մինը միւսով· նա ձեռք ձգեց

այն մետաքսեայ օթոցին, որ ծածկած էր նորա վերայ, այն բարձին որի վերայ հանգստացած էր նա։ Վերջապէս նա տարաւ ձեռքը երեսի վերայով, վերևից դէպ ի ցած և ցածից դէպ ի վեր։ Արդարև վկայ է մարգարէի գերեզմանը, որ ամենը երևումէր մի ստոյգ իրողութիւն. այս պատճառով հոգի ստացաւ նա և շուտով վեր կացաւ իւր մահճից։ Ոչ. ով Աստուած, երազ չէ այս։ Նոյն մահճի մէջ հանգստացած էր նորա կողքին իւր գեղեցիկ պատանի կինը քաղցր քնով։

Բայց մի ստոյգ իրողութիւն կարող չէր լինել, թէ նա քնից զարթեցած է իւր հին ննջարանի մէջ իւր հայրենական ապարանքումը, իւր սովորական, շատ փառաւոր և զեղխ մահճումը։ Եթէ Աստուծոյ մատը չէ այս բանումը, ապա պիտոյ է Իբլիսը, իշխանը խաւարի, լինէր դորա պատճառը. և այս բոլոր իրողութիւնը երևումէր նորան մի լոկ աչքակապութիւն։

Այս պատճառով իսկոյն վեր թռաւ նա տեղից և մտեցաւ մի վանդակապատ լուսամուտի, որ դուրս էր նայում դէպ ի փողոցը։ Անհասկանալի բան... սա մի և նոյն փողոցն է, ուր նորա ապարանքը գտանւումէր, և ուղիղ նորա դէմուդէմ այն խախուտ խրճիթը, որի մէջ նա իւր խորին թշուառութեան միջոցին պատսպարան էր գտել։ Արդեօք դեռ ևս կենո՞ւմէր նա այն տեղ և հանգստացած կամ քնած էր այն խրճիթի մէջ, Ալլահին պիտոյ է լինէր գիտելի։ Արդեօք է՞ր նա նոյն ինքն, կամ թէ մի այլ մարդ, արթո՞ւն էր, թէ երազի մէջ, կենո՞ւմէր այս տեղ ապարանքի մէջ, թէ այն տեղ, այն հին և խախուտ խրճիթի մէջ։

Սկսեց պտոյտ գալ նորա աչքի առաջև։ Հիացած, տարուբերվելով երկիւղի և յոյսի մէջ յետ քարշվեցաւ և հանգստացաւ իւր մահճի վերայ, որ ժողովէ միտքը և խաղաղ հոգով աւելի ուշադիր կշռէ այս անհասկանալի իրողութիւնը։

Յանուհետև յանկարծ լուսաւորվեցաւ Իբրահիմի միտքը. իսկոյն մտաբերեց այն առակը որ անցեալ երեկոյին կարդացած էր նա։ Արդեօք գուցէ թէ երևակայել էր նա, թէ պիտոյ է հանդիպի նորան այս զարհուրելի անցքը, որի վերջը լինելու էր կորուստ և ամենևին անաւերութիւն։ Գուցէ թէ այս բոլորը էր մի հրաշալի տեսիլք, որով երկնային տեսչութիւնը ողորմելով կամեցած էր զգուշացնել նորան, կամ թէ, որ աւելի հաւանական էր, մի լոկ զգաստացուցիչ երազ։

—»Այո՛ մի երազ, պատասխանեց մի ձայն նորա կիսաբարբառ խօսքին։ — » Մի լոկ երազ, կրկնեց մի քաղցր ձայն մեղմապէս հնչելով նորա կողքից»։

Նա զարհուրեց. նորա կինն էր որ կանգնած էր նորա մօտ. այժմ սորա կարգն էր արտասուք թափելու. բայց այս արտասուքը չէին ցա-

ւի արտասուք, այլ մի խորին և խաղաղ ուրախութեան արտասուք։ Նա մօտեցաւ քարացած Իբրահիմին, իւր սպիտակ բազուկը փաթաթեց նորա վզին, դրեց գլուխը նորա լանջքի (կուրծքի) վերայ և յառաջ տարաւ իւր խօսքը մեղմապէս։

—»Որդարև, երկնային տեսչութեան ողորմութիւնը շնորհել է քեզ նոր ի նորոյ սկսանել քո կեանքը, երբ որ արդէն ճոխացած էիր դու թանգագին փորձով։ Քո բոլոր հարստութիւնը չէ գնացել դէպ ի գերեզման· քեզ մնացել է դեռ ևս բաւական շատ, որ կարող էիր վարել ոչ թէ միայն անկարօտ, այլև վայելուչ կեանք, ինչպէս արժանաւոր էր քո աստիճանին և քո ազնիւ նախահարցը։ Դու կարող ես, միայն թէ կամենայիր։ Ով Իբրահիմ, ես սիրումէի քեզ վաղուց արդէն, յառաջ քան թէ դու կոծել էիր իմ դուռը։ Ես մտքիս մէջ դրեցի, որ քեզ փրկեմ ակնյայտնի կորստից։ Սէրը, այս պարգևը ողորմած Ալլահի կարող է յանձն առնուլ ամենայն բան։ Բայց փոքր էր մնացել, որ ես կորուսանէի իմ ճանապարհը։ Ինձ պիտոյ էր խնդրել իմ հօր, իմաստուն Շէյխի խորհուրդը· բայց նորա մէջ երևումէր ինձ ծածկած մի կիսաչափ իմաստութիւն· ես համարձակվեցայ յաւելայնել դորա վերայ իմ յատուկ յիմարութիւնը··· քեզ փրկելու համար, ով թանգագին տէր ու ամուսին։

Դու վաստնումէիր խելութեամբ, բայց ես դուրսից միայն երևումէի վատնող· դու ցրվումէիր հողմերին քո բոլոր ունեցածը, բայց ես զգուշութեամբ ժողովումէի բոլորը և կուտակումէի գանձեր գանձերի վերայ։ Երբ որ դու վերջապէս մի չնչին գնով ձեռքից թողեցիր քո ագարակները, քո այգիքը և քո հայրենական ապարանքը· ես ունէի հնարք համարեա թէ բոլորը յետ ստանալու։ Այս բոլորը այժմ քո սեփականն է, և ես նոյնպէս։ Սիրտը շարժված, լեզուն կապված Իբրահիմը փաթաթվեցաւ իւր հաւատարիմ ամուսնու վզին, Այն խորին գութը, այն քնքուշ գրկախառնութիւնը, որ, ինչպէս երևումէր, վերջ չունէր, աւելի բարբառող գտանվեցան քան թէ բոլոր աշխարհի խոստմունքը և ուխտքը։

Երբ որ Զարքան մի քանի ժամանակից յետոյ կրկին այցելութիւն արեց իւր հօրը, հայրը դեռ ևս չը լսած նորա երեխայական ողջոյնը, ձայն արձակեց դէպ ի նա· վկայ է մարգարէի հոգին, որ լաւ չէր պարտական մնալ քեզ, իմ դուստր։ Կարծեմ, որ դու եկել ես խնդրելու երրորդ խորհուրդը, քո հարսնաբաժինքի վերջին մնացորդը։ Ուրեմն ստացիր նորան և հանգարտիր· այնուհետև կը լրանայ մեր հաշիւը։ Պահանջելու և ստանալու գիւտը պիտոյ է Շէյթանից յառաջացած լինի։

—»Ո՛չ իմ հայր, պատասխանեց Զարքան ժպտելով քաղցրապէս։ »Ես եկել եմ միայն շնորհակալ լինելու քո առաջին տուած խորհրդի համար. սա այնպէս արդիւնաւոր եղաւ, որ հարկաւոր չէր ինձ գործ դնել երկրորդ խորհուրդը, և կարող եմ այժմ բաշխել քեզ երրորդը»։

—»Աշխարհը զարմանալի մեծ է, խօսեց Շէյխը, ծանրութեամբ շողոքորթելով իւր երկար մօրուքը։ Ճշմարիտ է և մնալու է միշտ — օրհնեալ լինի մարգարէն — թէ իմաստութիւնն է միայն, որ կառավարումէ այս զարմանալի աշխարհը։

(Lesefrüchte vom Felde der neuesten Literatur.)

---

# ԲՆԱԽՕՍԱԿԱՆՔ

## ԹԷ Ի՛ՆՉՊԷՍ Է ՄԱՐԴԸ։

Մարդը երևեցաւ երկրի վերայ, երբ որ սորա կերպարանքը լրացած էր առ հասարակ. թէպէտև մասնաւորապէս պիտոյ է դեռ ևս յետոյ լինէին դորա վերայ փոփոխութիւնք տարերքի զօրութեամբ, այնու ամենայնիւ չէր կարելի համեմատել դորանց այն բնական անցքերի հետ, որոնցով երկիրը առաջին ժամանակներումը շատ անգամ ամենևին կերպարանափոխ է եղած։ Կոպիտ բնութեան բռնութիւնը սանձահարված էր արդէն, երկրի պտղաբերութիւնը միշտ նորանոր տունկեր և շնչաւորներ գոյացնելով, սկսեց սպառվիլ և եզրափակվեցաւ մարդու արարչագործութեամբը։ Իմացականութեան թագաւորութիւնը պիտոյ է սկսանէր։ Թէպէտ մարդս չէ միաւորում իւր մէջ շնչաւորների բոլոր կատարելութիւնքը. շատ անասուններ նորանից գերազանց են զգայարանների յաջողակութեամբ, անդամների ուժով և երկարակեցութեամբ. այլև պիտոյ է մեզ խոստովանել, որ քանի մի անասունների մէջ դրած կան զօրութիւնք, որ անքննելի են մեր համար։ Ի՛նչպէս մեծ է այն շնչաւորների թիւը որ եղանակի փոփոխութիւնքը անշուշտ գիտեն յառաջուց և հետևելով այդ բանին առնումեն իւրեանց անտեսութիւնը,

կամ թէ այն շնչաւորների բազմութիւնը որ որոնումեն իւրեանց ճանապարհը և գիտեն իւրեանց կերակուրը ձեռք բերել, թէպէտ պակաս էին նոցա տեսութիւն, լսելիք և հոտոտելիք: Նոյն բանը կարելի է ասել նոցա ճարտարութեան մասին: Եւ այս տեղ զուրկ է մարդս մի քանի բաներից, որ տուած են անասուններին. բայց դոցա փոխարէն ունի մարդս աւելի պատուական շնորհներ: Արդարև անասունքը իւրեանց ճարտարապետական ձգտողութեններով շինումեն, զոր օրինակ մեղուն իւր բջիջը, սարդը (գործարարը) իւր ոստայնը, ջրշունը իւր բունը: Ոչ մի մարդ չունի այդպիսի ծննդական յաջողակութիւնք. ամենայն բան, ինչ որ նա կարող է, պիտոյ էր նորան ուսանել վարժութեամբ: Ի վերայ այդր ամենայնի ոչ մի մտածող մարդ չէ նախանձելու անասունի այդպիսի նախապատւութենների վերայ, որ միանգամ տուած լինելով նոցա և գործ դրվելով միշտ, արդէն հազարաւոր տարիներից յետոյ մնացել են մի և նոյն, առանց մի քայլափոխ յառաջ գնալու. և այդ կարգին պիտոյ է անասունը հնազանդի ստրկապէս:

Մարդու կատարելութիւնը պիտոյ է որոնել մի այլ բանի մէջ, այսինքն այն գեղեցիկ զուգապատշաճութեան մէջ, ուր բոլոր զօրութիւնքը համահաւաքվումեն մի աւելի մեծախորհուրդ միութիւն կազմելու համար:

Մարդուն միայն սեփական են մանաւանդ երեք յատկացուցիչ նը-շաններ, որոնց չէ մասնակից ոչ մի անասուն. ուղիղ գնացք, բանականութիւն և լեզու: Թէ ուղիղ գնացքը յատուկ է մարդուն, այդ բանը անհերքելի հաստատվումէ, եթէ համեմատենք անասունի ոսկրաշէնքը մարդու ոսկրաշէնքի հետ: Մարդս միայն է երկուձեռանի, մինչ անասունքը կամ չորքոտանի, կամ թէ չորքձեռանի են, զոր օրինակ կապիկները: Մարդու ձեռքի շէնքը նորանով է զանազանվում ոտքից, որ բթամատը հանդիպակաց է միւս չորս մատներին, և այդպէս ձեռքը լինումէ կարող ամրապէս ըմբռնել առարկայքը: Ոտքի վերայի բթամատը չունի այդպիսի հանդիպակաց դրութիւն դէպ ի միւսերը. բայց դորա փոխարէն, ոտքի յետևումը կայ մի առանձին ոսկր, կրունկի ոսկրը, որ մանաւանդ թէ հնարաւորումէ ամուր և ուղիղ գնացքը: Սորանով, բոլոր անդամները ստանումեն մի առանձին յարաբերութիւն դէպ ի ողնաշարը: Այսպէս կարող էր գլուխը հաւասարապէս դէպ ի ամենայն կողմ կերպարանագործվիլ, մինչ անասունի գլխի մէջ ծնօտքը դուրս են ցցուած դէպ ի յառաջ, և այդպէս նեղանումէ տարածութիւնը ուղեղի ընդունելու համար: Մարդուս գլխի մէջ բոլորակվումէ գագաթը որպէս մի գեղեցիկ ձուաձև, բերանը յետ է քարշվում աւելի կըզակի և ճակատի առաջևից, և այդպէս պատրաստվումէ տարածութիւն,

երեսի և ուղեղի համար։ Նոյն իսկ ուղեղը, որ մի քանի անասունների մէջ առաւել մեծ է, մարդուս մէջ կերպարանված է իւր բոլոր մասներովը աւելի նուրբ։ Արարիչը, բոլոր շնչաւորների մէջ, մարդուն միայն շնորհելով մի վերհամբարձ մարմին, բարձրացուցել է նորան և հոգեղինապէս, այլև բոլոր, դէպ ի ցած խոնարհված շնչաւոր արարածներից ևս առաւել մեծարել է նորան բանականութեամբ և լեզուով։

Եթէ մեք անասունների մէջ տեսակ տեսակ հոգեղէն ընդունակութիւնք ցանուցիր նկատումենք, զոր օրինակ ճարտարապետական ձգտողութիւնք, ծննդական խորամանկութիւն, վստահութիւն և յաջողութիւն որ ուսուցանումէ նոցա գործ դնել իւրեանց բնատուր զէնքը, հապա մարդուս մէջ բոլոր ընդունակութիւնքը յեղափոխվելով դարձել են այն վերնագոյն կարողութիւնը որ է ճանաչողութիւն և ներգործութիւն։ Ուրախութեան և ցաւի զգացմունքը որոնց ընդունակ է անասունը զանազան աստիճանակարգով, որ և առաջնորդելով նորան, ստիպումեն որ նա թողու ընտելացնել և վարժել նորան, այլև մի տեսակ յօժարութեամբ սովորումէ մարդուն, այդ զգացմունքը ազնուանալով մարդու մէջ լինումեն իմացական և զգայական շարժառիթք։ Այդպէս մարդը կարողանումէ գիտակից լինել իւր անձին (ճանաչել իւր անձը) և գուշակել մի աւելի վերին աշխարհ. և որովհետև այս երկու բանը կարելի է միայն իւր սրտի ներքին բարբառովը իմանալ, այդ պատճառով լեզուն տուել է այդ կարողութեանը խորհրդաւոր անուանս իմացականութիւն (բանականութիւն)։

Մարդու առանձին գերազանցութեններին անասունների կարգից պատկանումէ և լեզուն. սորանով ոչ թէ դրած էր նա շնչաւորների գլխածայրումը, այլ դէմուդէմ հակառակ նոցա։ Մինչ անասունը իւր զգացմունքը կարող է իւր ազգակից անասուններին հասկանալի կացուցանել անյօդաւոր աղաղակով և ձայներով միայն, մարդս կարող է բացայայտել իւր բոլոր մտածութենների կարգերը պարզ ու պայծառ բառերով որոնց հնչիւնը վկայումէ արդէն նորա ներքին կենդանութեան մասին։ Այս յօդաւոր և մի որոշեալ մարդկային հասարակութեան միայն հասկանալի լեզուն է մարդուս սեփականութիւնը միայն, և այս մտքով անմիջապէս աստուածեղէն պարգև է։

Այս նախապատվութիւնքը, ուղղորդ գնացքը, բանականութիւնը և լեզուն են, որոնցով մարդկային ազգը կերպաւորումէ մի ամբողջութիւն երկրագնդի արարածների մէջ։ Թող Սենեգալիայի սեաւ մարդերի մարմնի գոյնը բաւական զգալի կերպով զանազանվէր հիւսիսային Եւրոպացու սպիտակ մորթից, այնու ամենայնիւ հերիք էր միանգամ

նայել երկուքի վերայ, և իսկոյն պիտոյ է ասէինք, թէ նոքա բաղկացնումեն մի ազգ։

Եթէ անցանենք դէպ ի զանազան տեսակ մարդերի քննութիւնը, ապա հարկ է ասել թէ բնախօսքը կէս մի նայելով մորթի գունին որոշել են սպիտակ, ձիթապտղագոյն, թուխ պղնձագոյն, թուխ սևագոյն և սևաւ մարդիկ· և կէս մի նայելով նոցա գլխի մազերին, բաժանել են կոկահեր և գանգրահեր ազգեր, այլև միտ դնելով նոցա հասակի մեծութեանը կամ փոքրութեանը, մեծամարմին կամ փոքրամարմին ժողովուրդք։ Այս հիմքերի վերայ, մարդիկը բաժանվումեն երեք ցեղք, այսինքն Կովկասեան, Մոնգոլեան և Եթովպական կամ Սևաւ մարդիկ· սոցա միջոցումը (մէջ տեղումը) դրած են այլ ևս երկու երկրորդական ցեղեր, Մալայեանը և Ամերիկայինը, այնպէս որ բոլոր ցեղերը միասին տեսանվումեն այսպէս։

1) Եթովպական·
2) Մալայական·
3) Մոնգոլեան·
4) Ամերիկային·
5) Կովկասեան·

Եթէ համեմատենք մարդու դէմքը կաթնակեր անասունների բոլորովին լրագործված դէմքի հետ, ապա կը տեսանենք որ մարդու բերանը չէ աւելի շատ դուրս ցցված, այլ ունի մի պատշաճաւոր զուգակշիռ ճակատի և կզակի հետ· որով նոյնպէս գագաթնափոսը բարձրանումէ և բոլորակվումէ հաւասարապէս։ Շատ նուազ է այս զուգակշիռը սևաւ մարդերի մէջ կամ Եթովպական ցեղումը, ըստ որում այս տեղ երկոքին ծնօտքը բաւական ձգված են դէպ ի յառաջ· խոշոր, դուրս պրծած շրթունք ծածկումեն նորանց և մեծ մեծ ատամներ մինը դէպ ի միւս հակված ամրացած են նոցա մէջ։ Ճակատը թէպէտ մեծապէս կամարակապ է, բայց կարճ է և վերևումը իսկոյն յետ է քարշվում· քիթը տափակ է, ցածից լայնանալով։ Եթէ յաւելացնենք սորա վերայ գլխի բրդոտ մազը, թաւշանման սևաւ մորթը, ապա ունինք մեր առաջև սևաւ մարդու կամ թէ Եթովպացու պատկերը, ինչպէս նա սկսեալ առաւել հին ժամանակներից մինչև այժմ գտանվումէ բոլոր Աֆրիկայի մէջ, դուրս հանելով հիւսիսային մասը· բայց այս ցեղական ծանօթարար նշանքը աւելի կատարելապէս երևումեն այն սևաւ մարդերի վերայ որ բնակումեն Երկու—Գվինէայի, Սենեգալ և Գամբիա գետերի եզերքումը։

Աւելի գեղեցիկ կերպարանվումեն այս զուգակշիռքը Մոնգոլեան ցեղի մարդերի վերայ, որ գտանումենք մեք գրեթէ բոլոր Ասիայի մէջ

և Եւրոպայի և Ասիայի առաւել հիւսիսային մասներումը։ Այս ցեղից յառաջացած ազգերի դէմքը ձևակերպված է աւելի դէպ ի լայնութիւնը, թշերի ոսկրները սաստիկ դուրս են երևում, բերանը և կզակը յետ են քարշված, աչքերը նեղ բացուած։ Սորանով երեսը ստանումէ մի տափակ տեսութիւն, մազերը կոկ են, մորթի գոյնը դեղին կամ թէ դեղնագոյն թուխ։

Եւս աւելի գեղեցիկ և շատ կատարեալ կազմած է Կովկասեան ցեղի մարդերի գլուխը։ Այս տեղ բերանը յետ է քարշվում ճակատի և կզակի առաջևից, ձևաւորված է աւելի դէպ ի երկայնութիւնը քան թէ դէպ ի լայնութիւն, ճակատը բարձր է և գեղեցկապէս կամարակապ։ Սորա վերայ յաւելացրու մորթի սպիտակութիւնը, մի կոկ, ճոխ, տեսակ տեսակ գունաւորված մազ, որ երբէք չէ բրդոտվում։ Այս է այն ցեղի նկարագիրը, որ բնակումէ արևմտեան Ասիայի, հիւսիսային Աֆրիկայի և բոլոր Եւրոպայի մէջ, դուրս հանելով Եւրոպայի մի քանի հիւսիսային մասները։ Եթէ այս մարդերի ցեղին տուած են անուն Կովկասեան, դորանով կամին միայն հասկացնել, թէ Կովկասի շրջակայքումը պիտոյ էր որոնել այս ցեղի սկզբնական բնակարանը, որպէս և այժմեան բնակիչքը այս գաւառի, այլև հիւսիսային Աֆրիկայի Մաւրիտանացիքը, Ասիայի մէջ Տաճիկքը, Պարսիկքը և Արաբացիք պատկանումեն այս ցեղին։

Մալայների, յետնակողմեան Հնդկաստանի, Հնդկական և խաղաղ ծովի որպէս և Նոր-Հոլլանդիայի բնակիչների մէջ մի փոքր մեղմացած են սեաւ մարդու երեսի ձևակերպութիւնքը· վերին մասը երեսի աւելի լայն է և առանց դուրս պրծած թշերի ոսկրների· մորթի գոյնը սևագոյն թուխ, մազերի բոյսը խիտ, հերքը կակուղ, ոլորուն և սեաւ։ Ամերիկային ցեղի երեսը թէպէտ և լայն է, բայց ոչ տափակ, ինչպէս Մոնղոլեան ցեղինը։ Աչքերը խոր դրած են կարճ ճակատի տակ, և թշերը նկատելի են։ Մորթի գոյնը պղնձի պէս կարմիր է կամ թէ դարիչինի պէս թուխ· մազերը կոկ են, սև և փոքր ինչ ցանցառ։ Հիւսիսային և հարաւային Ամերիկայի բնակիչքը սկսեալ Հուդսոնսբայից մինչև Մագելլանի ջրափողոցը յարմարվումեն այս նկարագրութեանը։

Զանազան կողմից ընդունած են, թէ մարդերի մարմնաւոր և հոգեղէն զանազանութիւնքը յառաջացած էին աշխարհի կլիմայից և բնութենից, և շատ հաւանական են տեսած, թէ Աֆրիկայի տօթագին արևը պիտոյ է սևացնէր մարդու մարմինը, և թէ մի մեղմ, տաք եղանակ պիտոյ է ձեռնտու լինէր մարդու մարմնաւոր և հոգեղէն բնութեան ամենագեղեցկապէս կերպարանագործութեանը, մինչ սորա հակառակ սառնասառոյց ցուրտը հիւսիսի խափանարար էր մարդու աճելուն և զօ-

րանալուն։ Բայց փորձերը որ գոնեայ երեք հարիւր տարի արդէն արած են, չեն հաստատում վերոյիշեալ կարծիքը. Եւրոպացին սեաւ Աֆրիկացու նման բնակելով Ամերիկայի մէջ, չէ հաւասարուել այս աշխարհի բնիկ մարդերին, այլ մինչև այժմ ևս, թէպէտ մի քանի փոփոխութիւնք նորա բնութեան և կեցութեան եղանակի մէջ յառաջացած էին կլիմայի ազդեցութեամբը, կրում է իւր վերայ իւր մայր աշխարհի կնիքը, մինչ Ամերիկայի բնիկ մարդերի մէջ, թէև սոքա ապրումէին զանազան կլիմաների մէջ, սկսեալ Հուդսոնեայից մինչև Մագելլանի ջրափողոցը տեսանումենք միայն միատեսակ ցեղի պատկանեալ մարդիկ։ Այս իրողութեան հիմքը դրած է սկզբնական յառաջագայութեան, կամ թէ ծագման մէջ։

Եթէ նկատենք այժմ մարդու մարմինը, քննելով նորա գլխաւոր մասունքը, դա բաղկանում է գլխից, միջնամասնից և անդամներից։ Գլուխը դարձեալ բաժանվում է գագաթն և երես. միջնամասը բաղկանում է փորից, կուրծքից և վզից, վերին անդամները վերնաբազուկից, ստորաբազուկից և ձեռքից, ներքին անդամները վերին և ստորին բարձքերից, և ոտքից։ Վիզը ցուցանում է գլխի կապակցութիւնը միջնամասի հետ, և բաց ի ողնաշարից և գլխի շարժողութեան համար սահմանած մկնակներից պարունակում է իւր մէջ աւելի մեծ արիւնեղէն անօթքը, որ արիւնը տանումեն դէպ ի գլուխը և յետ են բերում այն տեղից, այլև շնչափողը և կերակրափողը։ Կուրծքի փոսը բաժանվում է փորի փոսից խառորնակ մորթովը (դիաֆրագմայովը) որ ներքին կողերի մօտ, մարմնի մէջ պարզված մի մկնակ է։ Կուրծքի փոսի մէջ դրած են շնչափողի հետ դէպ ի վեր կապակից թոքերը և սիրտը. դոցա միջից անցանում է նոյնպէս կերակրափողը, և դոցա յարակից է, քամակից, ողնաշարը (կռնակի յօդերը) ողնաուղեղի հետ միասին։ Փորի խորութեան մէջ դրած են շատ գործարաններ, որ բոլորեքեան պատկանումեն կեանքի արարիչ գործողութեանը։ Իսկոյն վերևումը, խառորնակ մորթի տակ, աւելի դէպ ի աջ կողմը գտանվում է լեարդը լեղի կրող պարկի հետ միասին, դէպ ի ձախ, աւելի փոքր փայծեաղը. լերդի տակ, փորի լորձունքի մնանքը, և դէպ ի վեր, կերակրափողի հետ կապակից եղած ստամոքը որ դէպ ի ցած գնալով զուգախառնվում է աղիքների հետ, որ իւրեանց բազմօրինակ ոլորներովը լցուցանումեն փորի խորութեան առաւել մեծ մասը։ Այս ոլորները դէպ ի առաջնակողմը ծածկվումեն փորի վերայ կախած ցանցից. դէպ ի յետնակողմը, ողնաշարի երկու կողմումը դրած են երիկամունքը, որ ցածումը դէպ ի յառաջ ամփոփված միզապարկի հետ կապակից են։ Բոլոր մարմնի մակերևոյթը պատած է մորթով, որ ներսից համարեա թէ ամենայն տեղ դրած է շատ կամ

փոքր ճարպալից խորանաւոր տափակակոյտների վերայ, բայց դէպ ի դուրս ծածկած է մի շատ բարակ, թափանցիկ, անարիւն և անզգայ վերնամորթից: Նոյն իսկ մորթը որ ասւում է կաշեմորթ, ցուցանում է մի թեքուն ամուր պատեան, որ մարմնի քանի մի տեղերումը աւելի պինդ է քան թէ միւսերումը և ծածկած է մի նուրբ, մորթի և վերնամորթի մէջ տեղումը դրած մաղասային նիւթով, որից յառաջանում է մարդուս կամ թէ յարակից մասերի գոյնը: Մորթը չէ միայն ծածկոց, այլ և զգայութեան գործարան (զգայարան), և արտաշնչող ու դուրս ձգող, բայց և դարձեալ ընդունող ու ներս ծծող, և այս պատճառով մի շատ խորհրդաւոր գործակատար մարդու մարմնի առողջութեան համար: Այնպէս, շատ բժշկական դեղեր կարող են միայն ներս տրորելով դուրսի մորթի վերայից, ներգործել մարմնի վերայ: Մի փոքր զանազան ձևաւորութեամբ բաժանվում են ողնաշարի յօդերը Վզի, Կուրծքի և Փորի ողնայօդեր: Եօթն հատ աւելի վերինքը են վզի յօդերը և սոցա առաջինը, որի վերայ հաստատված է գլուխը, ասւում է Ատլաս [1]), այսինքն գլուխը կրող: Կուրծքի տասերկու ողնայօդերի վերայ ամրացած են տասերկու զոյգ կողեր· եօթն զոյգ դէպ ի դուրս թեքվելով միանում են կուրծքի ոսկրի հետ· երեքը կապակցվում են նորա հետ, նոցա առաջև դրած զոյգ կողերի միջնորդութեամբ միայն, բայց երկու հատը ամենեւին չեն կապակից նորա հետ: Կողերի ոսկրները առած միասին, կերպաւորում են կուրծքի արկղը, որի մէջ մարդու մարմնի երկու շատ խորհըրդաւոր գործարանքը, այսինքն սիրտը և թոքերը, կողերի ձեռնտուութեամբ ամրապահեստ ամփոփված են: Անդամները, բազուկը և ձեռքը ունին ոսկրաշէնքի վերայ ըստ բաւականին համաձայն կազմութիւն; և այդպիսի մասներ դարձեալ հանդիպում են նոցա մէջ, փոքր ինչ փոփոխութեամբ միայն: Վերին անդամների կարգումը, միջնամարմնի վերայ, պէտք է հաշուել վզի մօտ, առաջնակողմից, կողի վերայ դրած նեղ և ամուր փականաձև ոսկրը (os claviculare) որ մի ծայրովը հագցրած է կուրծքի ոսկրի մէջ, միւս ծայրովը ուսի թիակի մէջ և վերևից փակում է միջնամարմինը: Ուսի տախտակի մէջ գնդատեսակ ծայրով հագցրած է վերնաբազուկի ոսկրը որի հետ դարձեալ կապակից են ստորին բազուկի երկու ոսկրները, Շառաւիղը և Կանգունը: Ութ հատ փոք-

[1]) Ատլասը, միտ դնելով յունական առասպելին, էր աստուածների աչքումը ատելի եղած հսկայ Յապետի որդին, որ իւր հօր հետ և միւս հսկաների հետ միասին, Դիոսի ձեռքով կործանվեցաւ տարտարոսի մէջ, և նոյն միջոցին բոլոր երկնքի ծանրութիւնը դրվեցաւ նորա ուսերի վերայ: Այս պատճառով, ինչպէս հաւանական է, երկրացոյցների և ծովացոյցների հաւաքածուին տուած են անունս Ատլաս: Եւ Անդամազննութեան մէջ ասւում է վզի առաջին ողնայօդը Ատլաս, որպէս թէ կրող գլխի:

րիկ ոսկրներ կերպաւորումեն դէպ ի ամենայն կողմ շարժական արմատը ձեռքի, որի վերայ ամրացած է 19 ոսկրից բաղկացած ձեռքը։ Այսպէս, ամենայն բազուկի, ձեռքի հետ միասին, պատկանումեն 34 զանազան ոսկրներ։ Ոտքի ձևակերպութիւնը բաւական նման է ձեռքի ձևակերպութեանը։ Ինչպէս բազուկները ուսերի թիակներով կապակցութիւն ունի միջնամարմնի հետ, նոյնպէս ոտերը Տաշտի (փոքրափորի) ոսկրներովը։ Նոցա մէջ ձևաւորված ամանների մէջ ներս է մտանում մի բոլորակ յօդաւոր գլխով վերին բարձքի ոսկրը, որի հետ ծնկի յօդովը կապած է ստորին բարձքը բաղկանալով սրունքի և ոլոքների ոսկրից։ Այս երկուքի մէջ դրած է, յօդերով ամրացած, ծնկի գլուխը որ մի հաստ և բոլորշի ոսկր է։ Ոտքի արմատը, որի հետ ստորին բարձքը կապակից է յօդերով, բաղկանումէ եօթն հատ ոսկրից, որոնց մեծութիւնը և ձևը զանազան է։ Ոտքը, ինչպէս որ ձեռքը կերպաւորվումէ 19 ոսկրից, այնպէս որ ստորին անդամների ամեն մինը բաղկանումէ 32 ոսկրից։

Գլուխը որ վերևից նստած է առաջին, պարանոցին պատկանած ողնայօղի, կամ Ատլասի վերայ, բաժանվումէ երեսք ու գագաթն. գագաթը բաղկացնումէ վերին և յետին մասը գլխի, երեսը դորա ստորին և առաջևի մասը։ Ոսկրեղէն փոսը, որի մէջ դրած է ուղեղը, բաղկացնումեն ութ հատ Կարեր ասած կապակցութեամբ միմեանց հետ զուգաւորված ոսկրներ· միւս 14 հատ ոսկրներ կերպաւորումեն երեսը և ասվումեն երեսի ոսկրներ։ Եւ որովհետև ամեն մի ականջի մէջ գտանվումեն այլևս երեք փոքրիկ ոսկրներ, իսկ երկոքին ծնօտների մէջ 32 ատամներ, ուրեմն բոլոր գլուխը բաղկանումէ 60 հատ ոսկրից, բայց բոլոր մարմինը 246 ոսկրից։

Ոսկրները առաւել մօտից շրջապատած են Մուսկուլներով (մկնակներով)· սոքա բաղկանումեն բարակ թելերից, որ կապոց կապոց յօրինուած, ունին կարողութիւն ընդարձակվելու և կծկվելու։ Սովորաբար ցուցանումէ մկնակը մի մարմին որ մէջ տեղումը հաստ է և երկու ծայրերումը վերջաւորվումէ բարակ լարերով· այդ մարմինը փակած է մի առանձին մորթի մէջ և բաժանված է խիտ մօտակայ միւս մկնակներից։ Մկնակների բարակ մասունքը շատ ջիլ են, ասվումեն Լարեր և Ջգարանք, և միշտ միաւորված են ոսկրների հետ։ Մկնակների կապակցութիւնը ոսկրների հետ լինումէ այսպէս, որ միշտ երկու երկու ոսկրների մէջ ամրացած է մի մկնակ։ Ամեն մի մկնակ ունի մի որոշեալ շարժողութիւն· այդու ամենայնիւ կայ շարժողութիւն որին գործակից են շատ մկնակներ ի միասին։ Այն մկնակը որ թեքումէ մի անդամ, մէջ տեղումը ստուարանալով և այդպէս կարճանալով, ասվումէ Թեքող, իսկ այն որ վերացնումէ շարժողութիւնը և կրկին անդամ պար-

զում է անդամը, ասւում է պարզող: Եթէ մի մկնակ միջից կտրած է, այնուհետև նորան սեփական եղած շարժողութիւնը անդամի հետ, չէ կարող այլևս յառաջանալ: Այս մկնակները որ, նոցանով յառաջացած շարժողութիւնների պատճառով, միշտ զոյգ զոյգ պիտոյ է ներկայ լինին, շատ բազմաթիւ են. մարդուս մէջ հաշււում են 238 զոյգ մկնակներ: Հասարակ կեցութեան մէջ այդ մկնակները ասւում են Մ ի ս: Հապա, թէպէտև մկնակները շարժողութեան գործիք են, այնու ամենայնիւ կարող չէին ոչ մի անդամ շարժեցնել, մինչև կապակից չէին ջիղերի հետ:

Ջիղերը երևում են երբեմն մի սպիտակ, պանրատեսակ ուղեղային գոյութիւն որ քանի մի տեղերում աւելի առատ յայտնւում է և բաց ի դորանից շրջապատած է մի մոխրագոյն նիւթով, բայց երբեմն որպէս թելեր կամ լարեր, որ ըստ մեծի մասին ցանցատեսակ կապակցած են: Ջիղային նիւթի գլխաւոր բնակարանը է Ուղեղը որ փակած է ամուր գագաթնային ոսկրների մէջ, այլև սոցա տակին պաշտպանւում է կոշտ ուղեղաթաղանթով: Ուղեղը կիսաբոլորակ է և մի խոր հատուածով բաժանւում է երկու կիսաչափ: Ուղեղի մակերևոյթը, բազմաթիւ անկանոն, միջընթաց ծալերի պատճառով, շատ խորտաբորտ է, այնպէս որ նորա վերայ գտանւում են շատ և փոքրիկ ուռոյցներ և բարձրութիւնք, որ ասւում են ուղեղի ոլորներ: Ուղեղի այն մասը, որ բռնում է գագաթի միւս վերին մասը, ասւում է Մ ե ծ ուղեղ և մի խորութեամբ բաժանած է փոքրիկ ուղեղից որ գտանւում է գլխի յետնակողմումը: Գլխի ուղեղը քամակի ուղեղով որ դրած է ողնաշարի խորութեան մէջ, երկայնվելով յառաջ է գնում, և այս տեղից դէպ ի ամենայն կողմ արձակւում են սպիտակ թելերի կերպարանքով ջիղերը բոլոր մարմնի մէջ, այնպէս որ դորանում չը կայ մի տարածութիւն, ուր չը լինէին ջիղեր: Սոքա են բոլոր կենդանութեան, բոլոր գրգռականութեան, բոլոր զգայութեան և բոլոր շարժողութեան աղբիւրը: Ջիղերը միայն հաղորդակցում են զգայարանները ուղեղի հետ և սորանով հոգու հետ: Այս պատճառով, եթէ մի զգայարանի ջիղ, զոր օրինակ աչքի ջիղը վնասված կամ խանգարված է, դորա անհրաժարելի հետևանքը է կուրութիւն: Ջիղերի վնասահարութիւնքը թէ առանձին անդամների, թէ գլխի և քամակի ուղեղի, և թէ բոլոր մարմնի համար անչափ վնասակար է: Զոր օրինակ, եթէ քամակի ուղեղը այն տեղումը, ուր նա դուրս է գալիս գագաթից, այսինքն ծոծրակի վերայ, կտրւում է միջից, այնուհետև անշնչացած խորտակւում է և ամենահսկայ և առաւել յաղթանդամ մարմինը ևս, որպէս թէ զարկված էր կայծակից: Այսպէս ահա, հին ազգերը իւրեանց պատերազմական փիլերը, եթէ սոքա

սանձակոտոր լինելով և կատաղելով ընկնումէին իւրեանց յատուկ զօրականների մէջ, սպանումէին միանգամ զարկելով, այսինքն ներս կոխելով երկաթի քերիչը ծոծրակի մէջ։

Այժմ խօսենք փոքր ինչ մարդու միւս երեք տեսակ գործարանների վերայ, այսինքն է Մարսողութեան, արիւնի Շրջանադարձութեան և Շնչառութեան գործարանների մասին։

Կերակուրների մանրացնելը սկսանվումէ արդէն բերանի մէջ, ուր նոքա կէս մի կտրատվումեն և կէս մի խորտակվումեն։ Լեզուն այս կողմ ու այն կողմ է ձգում կերակուրը, բերանի մէջ, և պատշաճապէս բերումէ նորան ատամների տակ, և նոյն միջոցին ծամած կերակուրը խառնումէ լորձունքի հետ, որ դուրս էին թորած լորձունաւոր մասներից։ Կերակուրը բերանից կերակրափողովը հասանումէ փորին։ Սա մի մաշկեղէն պարկ է, ձևաւորված որսորդի մաղախի պէս և խոտորնակի դրած փորափոսի մէջ միջնաձորթի (դիաֆրագմայի) տակից, առաջուստ ծածկած լերդովը։ Նորա վերին ձախակողմունը, այն տեղ ուր կոկորդը բացվումէ դէպ ի փորը և կերպաւորումէ փորի բերանը, աւելի լայն է նա քան թէ ստորին ձախակողմունը, ուր կերակուրը փոխադրվումէ տասներկու մատնաչափ երկայն աղիքի մէջ, ուր և գտանվումէ Դռնապան ասած բացուածը։ Կերակուրը փորի մէջ և փորի հիւթովը յեղափոխուելով խիւս, տեղափոխվումէ աղիքների մէջ։ Տասներկու մատնաչափ երկայնութեամբ աղիքի մէջ իսկոյն դուրս գալով հիւթը փորալորձունքի մասների և մաղձապարկի միջից, միաւորվումէ կերակրի խիւսի հետ։ Մաղձապարկի հիւթը արտաթորումէ Լեարդից և պահպանվումէ նորա մէջ։ Մաղձը խառնվելով կերակրի հետ, աւարտվումէ մարսողութեան գործողութիւնը։ Բայց կերակրի խիւսը բաղկանումէ երկու մասնից, ամուր և հեղանուտ նիւթից։ Ամուրը անյարմար լինելով ընդունվելու մարմնի մէջ, հեռացվումէ դարձեալ· սորա հակառակ, հեղանուտ մասը պարունակումէ իւր մէջ բոլոր, մարմնի համար, գործածելի նիւթքը որ կային կերակրի մէջ, որ և այնուհետև լուծված էին և ասվումեն Կաթնահիւթ։ Տասներկու մատնաչափ աղիքի միջից հասանումէ կաթնահիւթը Բարակ աղիքին, որ ունելով իւր մէջ մի մեծ բազմութիւն ծծողական երակների, ընդունումէ բոլոր սննդական հիւթքը, մինչ միւս բովանդակութիւնը աղիքների որպէս կղկղանք անցանելով Հաստ և Կորաձև աղիքից վերջապէս հասանումէ յետոյքի աղիքին։ Այն կաթնահիւթից, որ ծծողական երակները ընդունած էին իւրեանց մէջ, երբ որ նա յեղափոխվումէր արիւն, կերպաւորվումեն և նորոգվումեն բոլոր մասները մարդկային մարմնի։

Արիւնի շրջանադարձութեան գործարանքը ասվումեն Անօթներ,

և բաղկանումեն Զարկերակներից և Արիւներակներից որ ասվումեն նոյնպէս Արտերիայք և Վէնայք։ Նոյն իսկ արիւնը է մի կարմրաներկ հեղանիւթ և բաղկանումէ ջրից, արիւնեղէն գնդակներից, թելանիւթից, ձուի սպիտակուցից, աղանիւթերից և ճարպից։ Կենտրոնը (միջնավայրը) ուստի յառաջանումէ ամենայն արիւնաշարժութիւն, է Սիրտը։ Սա մի դատարկ մկնակ է, որ ունի կարողութիւն կծկվելու և արձակվելու։ Սա բաժանված է երկու մասն, որ ասվումեն սրտի սենեակներ որոնցից ամեն մինը բաղկանումէ դարձեալ Նախասենեկից և Գլխաւոր սենեկից։ Սիրտը որպէս արիւնի շրջանադարձութեան կենտրոն կատարումէ երկու գործողութիւնք. մին որ սննդարար արիւնը ուղարկումէ դէպ ի մարմնի ամենայն տեղերը և սոցանից ստանումէ դարձեալ մուգ կարմիր արիւն, և երկրորդ, այս մուգ կարմիր արիւնը մղումէ թոքերի մէջ, ուր դա հաղորդվելով օդի թթուանիւթի հետ, ստանումէ բաց կարմիր գոյն։ Առաջին գործողութիւնը յատկանումէ որպէս Մեծ շրջանադարձութիւն, երկրորդը որպէս փոքրիկ։ Այսինքն, երբ որ բաց կարմիր արիւնը դուրս է գալիս սրտի ձախակողմեան սենեկից, այնուհետև Աօրտա ասած երակով և նորա ճիւղերով տարածվումէ դէպ ի ամենայն կողմը մարմնի մէջ, և ամենանուրբ ճիւղահիւսերից որ ասվումեն Մազեղէն հիւսուածք փոխադրվումէ արիւնեղէն երակների մէջ, որ վերջապէս, բացվումեն մի հատ փողովակով դէպ ի աջակողմեան Սրտասենեակը, ուստի արիւնը անցանումէ գլխաւոր սենեկի մէջ, որ այս տեղից սկսանէ փոքրիկ շրջանադարձութիւնը թոքերի միջով, թթուանիւթը ընդունելու ներս շնչած օդի միջից, արիւնը հովացնելու և արիւնի միջից հեռացնելու բոլոր ածխային թթվութիւնը։ Այնուհետև արիւնի բաղմութիւնը թոքերի արիւնեղէն երակների միջով թափվումէ ձախակողմեան Նախասենեակը և սորա միջով հասանումէ գլխաւոր սենեկին, որ նոր ի նորոյ սկսանէ իւր շրջանադարձութիւնը բոլոր մարմնի մէջ։

Որպէս շնչառութեան գործարանք յատկացնումենք Թոքերը և նոյա հետ կապակից փողովակները որ ունին մուտք ու ելք դէպ ի թոքերը և դոցանից դուրս։ Նոյն իսկ թոքերը բաղկանումեն երեք փողովակաձև անցքերի ճիւղաւորութեններից, որպիսիք են շնչափողը, թոքերի զարկերակը կամ թէ թոքերի արիւնեղէն երակը, որ յիշատակվեցան վերևումը փոքրիկ շրջանադարձութեան վերայ խօսելու ժամանակին։ Թոքերը մի մեծ գործարան են, որ դրած է կուրծքի երկու կողմումը և բաժանվումէ երկու թևեր, որոնց ձախակողմեանը բաղկանումէ երկու, աջակողմեանը երեք բլթակներից։ Թոքերի խորհուրդը այն է, որ թոքերի պարկերակովը նոցա մէջ ներս մտած մուգ գունով արիւնը հաղորդակցութիւն ստանայ օդի հետ, և մաշուած օդը, մա-

նաւանդ թէ մարմնի մէջ գոյացած ածխային թթվութիւնը դուրս արձակվի, որպէս և խօսելու համար կարևոր օդը ստացվի: Որպէս շնչառութեան և շնչարձակութեան ճանապարհ սպասաւորումէ օդափողը (շնչափողը), որ պարանոցի մէջ սկսանելով կոկորդի գլխից, բաղկանումէ գրեթէ 20 հատ աճառային օղերից և պարանոցի միջովը ցած իջանելով դէպ ի կուրծքը, բաժանվումէ երկու ճիւղ դէպ ի թոքերի երկու թևերը: Թոքերի անդադար գործականութեամբ միայն հասուցանվումէ մարմնին հարկաւոր եղած օդը, որ ներս շնչելուց յառաջ բաղկանումէ 23 մաս թթուանիւթից և 77 մաս խեղդանիւթից (Ազօտից) և ածխային թթվութեան հետքերից. բայց դուրս շնչելուց յետոյ բաղկանումէ միայն $17^{3}/_{10}$ մաս թթուանիւթից, 76 մաս խեղդանիւթից և $6^{5}/_{10}$ մաս ածխային թթվութենից:

Մարդու երկարակեցութիւնը շատ զանազան է. բայց 80 տարի հասակը համարվումէ արդէն խոր ծերութիւն: Ի վերայ այդր ամենայնի հին և նոր ժամանակներում, երկրի զանազան աշխարհների մէջ մի մի մարդիկ հասած են աւելի խոր ծերութեան և մեք կարող ենք ցոյց տալ ոմանք անձինք, որ ապրած էին 120 մինչև 180 տարի:

(Der illustrirte Jugendfreund, herausg. von Louis Thomas. II Th. Leipzig, 1853.)

# ԿՐԻՏԻԿԱ․

## ՀԱՆԴԷՍ ՆՈՐ ՀԱՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ,

### ԳՈՐԾ ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱԶԱՐԵԱՆՑ․ Ա․ ՀԱՏՈՐ, ՄՈՍԿՎԱ, 1857։

—

Մեր «Մինին խօսք, միւսին հարս» անունով այժմուս տպի տակ եղած գործի յառաջաբանութեան մէջ, ուր խօսք է լինում բաւական երկար հին և նոր հայկական բարբառի վերայ, ասած ենք, «թէ շատ «չէ անցանելու, որ ժողովուրդը աչքը այս և այն կողմը ձգածի պէս «պիտոյ է տեսանէ նոր մատենագրութեան պատկանած մի գիրք եւայլն»։

Այս րոպէիս մեր սիրտը լցուած է մի հոգեպայծառ ուրախութեամբ, որ ասածներիս ճշմարտութեան նշանները սկսումեն իրագործվիլ։ Բուն այս պատճառը հարկադիր է լինում մեզ բարձրացնել մեր ձայնը և արձակ համարձակ քարոզել մեր շատ սիրելի եղբայրակիցներին, թէ ահա, մեր նոր մատենագրութիւնը խլելով մի հնացած ու վաստակած ծերունու ձեռքից դորա կարգից դուրս երկարատև քաղաքական իրաւունքը, որպէս ժամանակի հարազատ որդի, յառաջ է խաղում մեծ մեծ քայլերով և տանումէ իւր հետ միասին և մեր ընթերցող ազգը։

Մեր խօսքը գերապատիւ Նազարեանցի «Հանդէս Նոր Հայախօսութեան» անունով աշխատութեան առաջին հատորի վերայ է, որ անցեալ 1857 թ․ Մոսկվայի մէջ տպվեցաւ և որի երկրորդ հատորը շատ շուտով հրատարակվելու է նոյնպէս ազգի մէջ։ Մեք, մեր կողմից, ընթերցասիրելով այդ գործի առաջին հատորը, արժան ենք համարում մասնակից անել ընթերցող ազգը այն տպաւորութեանը, որ գործել էր մեր վերայ այն գիրքը․ մի խօսքով հրապարակաւ յայտնել մեր կարծիքը այդ աշխատութեան մասին։

Բայց յառաջ, քան թէ ծանօթացուցել էինք ժողովուրդը այդ պատուական աշխատութեանը, պատշաճ ենք համարում փոքր ինչ խօսել մեր ազգի հետ, թէ ինչ է Կրիտիկա ասած բանը ընդհանրապէս, և թէ ի՛նչ ծանր պարտականութիւն կար մի մարդու վերայ, որ կամէր կատարել Կրիտիկոսի (ուսումնական դատաւորի) պարտականութիւն, ամենևին ազատ պահելով իւր անձը կանխակալ սովորութեններից և կարծիքներից։

Թէ ինչ պատճառով տալիս ենք մեր յօդուածին մի այսպիսի յառաջաբան, պատուելի ընթերցողքը կ՚իմանան, սկզբից մինչև վերջը կարդալով այս յօդուածը։

Մեր ազգի մէջ մի սխալ կարծիք է տարածված, թէ կրիտիկային վատ բան է, թէ նա մարդ է խայտառակում, թէ նա հեղինակի պակասութիւնները երեսին զարկելով ծիծաղում նորա վերայ և ցոյց է տալիս հասարակութեանը մի այսպիսի հեղինակի տգիտութիւնը որ և իցէ բանի մէջ։ Այս կարծիքով մոլորված են մինչև անգամ և շատերը այն հայազգի սխոլաստիկ (դպրոցական) ուսումնականներից, որոնք մի երկու բառ ուսանելով ծուռ ու սխալ միմեանց մօտ շարել, համարումէին իւրեանց անձը Խորենացի ու Եղիշէ։

Մեր այսպէս խօսածը առանց հիմքի չէ։ 1853 թուակ. մի հայ սխոլաստիկ Թիֆլիզ քաղաքից ուղարկել էր իւր մոսկվայի համախոհ սխոլաստիկին [1]), որպէս կրիտիկա մի Թիֆլիզաբնակ գաղթական.... պարոնի գործի վերայ, այն խորհրդով, որ մոսկվացի հայ սխոլաստիկը այդ բանը արտագրել տայ աշակերտներին, և ցրուէ ազգի մէջ այդ անձոռնի փիլիսոփայութեան օրինակները, որպէս զի դորանով խայտառակվի այն պարոնի գործը։

Մոսկվացի հայ սխոլաստիկը, մի առանձին հաճութեամբ կատարեց այդ յանձնարարութիւնը և դեռ ևս մեղադրելով Թիֆլիզեցի հայ սխոլաստիկին, թէ սա շտապել է այդ բանը գրելու. մի ասա որ մոսկվացի հայ սխոլաստիկը, ինքը ևս պատրաստել էր մի այդպիսի ծակ մարգարէութիւն։ Սա հանդիպողին ցոյց էր տալիս այդ անհամ, տգեղ, անհեթեթ, թոյլ և ամենայած գործը. պատահեցաւ ինձ ևս ընթեռնուլ. որի բովանդակութիւնը այս էր, թէ այս ինչ պարոն Թիֆլիզում չինել է մի գիրք, որ 1840 քանի թուականներին տպուել է Մոսկվայում. այս գրքի մէջ գտել է այդ Թիֆլիզեցի հայ սխոլաստիկը սխալներ [2]), և թէ դորա հեղինակը պախարակելի էր, ըստ որում յառաջ փակեղ է կրել, իսկ այժմ բոլորշի գլխարկ, կամ երբեմն լայն վարտիկ է հագել և այժմ նեղ. և այլ այսպիսի ցնդաբանութիւնք։

Այժմ հարցանումենք. մեղաւո՞ր է մեր ժողովուրդը, եթէ մեր պատ-

---

[1]) Պարկեշտութիւնը թոյլ չէ տալիս մեզ յայտնել այս տեղ այս սխոլաստիկների անունները և տարակոյս չունինք, որ այդ պարոնները ինքեանք, իւրեանց գործից կը ճանաչեն այս տեղ իւրեանց անձը և գուցէ կը հրաժարվին ապագայումը այդպիսի երեխայական գործերից։

[2]) Մոսկվացի հայ սխոլաստիկը ևս խօսումէր ամենայն տեղ այս սխալների վերայ, և պարծենումէր, թէ այս ինչ պարոնի աշխատութեան մէջ այսքան սխալ գտայ։ Նա թըվով էր խօսում, բայց ես մոռացել եմ թիւը։

ունելի սխալատիկները հասկացրել են նորան, թէ կրիտիկայն բամբասանք է կամ նախատինք (пасквиль)· գրել են մի այսպիսի յիմար բան և ասել են ժողովրդին, թէ ահա այս է կրիտիկայն· մի՛ թէ կարելի՞ է դատապարտել մի մարդ, եթէ սորան, որ իւր օրումն չէր տեսած ոչ սիրամարգ և ոչ արագիլ, չարամիտ մարդիկ ցոյց տալով մի արագիլ, հաւատացրած լինէին նորան, թէ այս է ահա սիրամարգը· այսպիսի վատաբաղդ դիպուածում մեք չենք դատապարտում այն մարդը, որ իւր խղճմտանքը ուրիշի խղճմտանքի վերայ դնելով խաբուել էր իւր տգիտութեամբը, որովհետև նորա հաւատը դէպ ի միւսը, չարաչար գործ էր դրել իւր ընկերը: Ի հարկէ եթէ մի կենդանաբանի ցոյց տաս մի սիրամարգ ու արագիլ, թէև սա թաքցնէ իւր կարմիր կտուցն ու ոտքերը, այնու ամենայնիւ այն բնագէտը իսկոյն կը որոշէ միմեանցից այդ երկու թռչունքը և կ՛ասէ. այս սիրամարգ է և այն, արագիլ:

Այսպէս ահա մեր ժողովուրդը իւր Կօրիֆէյ ճանաչված սխալատիկների շնորհքով մեղաւոր է Կրիտիկայի առաջև, որովհետև սխալ կարծիք ունի նորա վերայ, թէպէտ նա մի սուրբ բան է:

Այո՛, կրիտիկայն մի սուրբ և անկողմնապահ դատաստան է, մի այնպիսի դատաստան, որի առաջև մի և նոյն են, բարեկամ և թշնամի, որ և մի անաչառ դատաւորի նման քննումէ մի գործի արժանաւորութիւն և պակասութիւն: Նա վերահասու է լինում գործին ամենայն հիմնաւորութեամբ, տեղեկանումէ նորա խորհրդին, և վճռումէ, թէ ի՞նչ չափով ու սահմանով կատարել էր հեղինակը իւր պարտականութիւնը:

Այսպիսի խելացի և բազմակողմնի վերահասութիւն առնելուց յետոյ, տալիս է կրիտիկայն իւր արդարացի հարկը մի այդպիսի աշխատութեան, միտ դնելով դորա որպիսութեանը միայն, և ուղիղ պահելով արդարութեան կշիռը դէպ ի՛ որ և իցէ հեղինակ, թէ բարեկամ և թէ թշնամի· այո՛ նա գիտէ պատուել և թշնամու արժանաւորութիւնը:

Ի՞նչ հարկաւոր է կրիտիկա· ամենայն մարդ կարդալով մի շարադրութիւն, արդէն կը հասկանայ բանի զօրութիւնը, մանաւանդ որ կրիտիկայն չը տարածելով մի ընդհանուր տպաւորութիւն բոլոր ընթերցողների հոգու վերայ, ազատ է թողում նորանց, որ իւրաքանչիւրքը անձամբ անձին կարդալով, զգան զանազան տպաւորութիւն, իւրեանց ճաշակին և հասկացողութեանը համեմատ:

Այդպէս չէ· ո՛չ ամենայն ընթերցող մարդ ազգի մէջ ունի այնքան գիտութիւն, հասկացողութիւն, որ կարողանայ դատաւոր լինել· շատ բան, որ մի հեղինակ գիտութեամբ թէ անգիտութեամբ դէպ ի չարն է գործ դրել, որ շատ հեշտ կարող էր հալած իւղի տեղ ընդունվիլ, բա-

ըեխիղճ կրիտիկոսը քննելով բացայայտ է կացուցանում և ցոյց է տալիս այդ Թերութիւնքը, բացումէ ընթերցող հասարակութեան աչքը և դարձուցանելով նորա ուշադրութիւնը այս Թերութեանների վերայ, իսկոյն փակումէ մոլորութեան ճանապարհը։ Մի և նոյն կերպով շատ մեծամեծ արդիւնք, որ շատ անգամ չունէին իւրեանց վերայ փայլուն զարդարանք, անյայտ են մնում հասարակութեանը, որ միշտ որոնումէ զանազան նորութիւնք և առ հասարակ այնպիսի բաներ, որ զգալի ազդեցութիւն կարող էին գործել ընթերցողների վերայ։ Հասարակութիւնը շատ անգամ ձևերի քամակից վազելով, հագուստ և զարդարանք որոնելով, իւր հոգու բոլոր կարողութիւնքը լարելով, որ գտանէ և տեսանէ հրաշալի, ազդու, և այլ սոցա նման ուղեղ գրգռող բաներ, սառնասիրտ է մնում դէպ ի գործի գլխաւոր արժանաւորութիւնը, որ ճշմարտապէս ասելով, շատ անգամ յայտնվումէ մարդկեղէն աշխարհի մէջ պարկեշտ կերպարանքով և այս պատճառով ևս չէ ընկնում ընթերցողների ուշադրութեան տակ։

Այսպիսի դիպուածներում է ահա կրիտիկայի հանդէսը, այս տեղ երևումէ նա իւր մեծ վայելչութեան մէջ. նա ցոյց է տալիս բացերև կերպով այն արժանաւորութիւնքը պարկեշտ հագուստի տակ, որ անտես էին մնացած ընթերցողներից, և ցոյց տալով այս արժանաւորութիւնքը, զարթուցանումէ ընթերցողների հոգին, գրգռումէ և ջերմացնումէ նոցա սիրտը դէպ ի այդ գործի ընդունելութիւնը. երկրորդ, արժանապէս գնահատելով այդ գործը, բարոյապէս սրբումէ աշխատողի ճակատի քրտինքը և քաջալերութիւն է տալիս նորան յառաջ խաղալ այդ ազնիւ ասպարիզի մէջ։

Այնպէս բարեմտաբար մատնացոյց առնելով աշխատութեան մէջ գտնված պակասութիւնքը կամ անհիմն կարծիքները, լինումէ զգուշացուցիչ առաջնորդ հասարակութեան համար և նոյն ժամանակին առիթ է տալիս հեղինակին ուղղելու և կատարելութիւն տալու իւր գործին, որով անտարակոյս օգտակար է լինում և՛ հասարակութեանը և՛ հեղինակին։

Առողջ բանականութիւնը ցանկանալով մարդկային ազգի օրէ օր աւելի յառաջադիմութեանը, խորհրդով ցոյց է տալիս Թերութիւնները մի աշխատութեան, քան լոկ նորան, պախարակելու համար միայն հանդէս հանել մի հեղինակի պակասութիւնք. այդ կը լինէր մի չար, սևահոգի մարդու գործ և անարժան էր ասվելու կրիտիկա, որ մի սուրբ և զգուշալի պաշտօնակատարութիւն է, ճշմարտութիւնը գիտութեան մէջ յառաջ տանելու համար։

Խօսելով ընդհանրապէս կրիտիկայի վերայ, այս ևս պիտի ասել

թէ նա մի չափ է, մի նշանացոյց է, մի այնպիսի կշիռ, որով խսկ և իսկ հասկացվում որ և իցէ ազգի լուսաւորութեան աստիճանը, ուրեմն իւրաքանչիւր ազգի կրիտիկա յայտնում մեզ նոյն ազգի տեսութեան և հայեացքի պարզութիւնը կամ պղտորութիւնը: Եւ այժմեան լուսաւորեալ ազգերի մէջ այնքան ծաղկած է կրիտիկայն, որ համարձակ կարելի է ասել, թէ այդ բանը դարձած է մի մեծ ճիւղ մատենադրութեան և այն, շատ օգտակար ճիւղ:

Քանի՜ քանի ճշմարտութիւնք հանդէս է բերում կրիտիկայն. որքան անտես արած իրողութիւնք, որ մի հեղինակ խորհրդով կամ պատահմամբ զանց էր արել. և արդեօք այսպիսի իրողութիւնների հանդէս գալը կրիտիկայի ձեռքով ազդեցութիւն ունէ՞ր, կամ թէ որքան ազդեցութիւն ունէր նոյն իսկ քննութեան տակ ընկած առարկայի յառաջադիմութեան վերայ, այդ ապացուցանում ամենօրեայ փորձը:

Շատ անգամ մի այսպիսի իրողութիւն բոլորովին փոխում բանի ընթացքը. այլ ուղղութիւն է տալիս գործին, որով, որպէս մի կախարդական ուժով, մերկացնում գործի շապիկը և տալիս է նորան այլ կերպարանք, երբեմն այնքան տարբեր առաջին կերպարանքից, որ հեղինակը, գործի արարիչը, ստեղծողը դժուարանում ճանաչել իւր գործը, իւր մտքի և աշխատութեան զաւակը. . . :

Մի ազգի մատենագրութեան մէջ երևում նորա հոգին, նորա հայեացքը, նորա ընկերական կեանքը. բայց կրիտիկայի մէջ երևում այս բոլորի չափը և աստիճանը, սորա գործն է սահմանել և գնահատել նորանց:

Այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրութիւն. պատճառ, մատենագրութիւն առանց կրիտիկայի, մի և նոյն է, ինչպէս մարմին առանց հոգու. իսկ այն ազգը, որ չունի մատենագրութիւն, ասել է թէ չունի և բանականութիւն, որովհետև մատենագրութիւնը այլ բան չէ, եթէ ոչ բանականութեան արձանագրութիւն: Մատենագրութիւնը մի յիշատակարան է, մի պահարան, ուր ամփոփվում են մարդկային բանականութեան վաստակքը, մարդկային հոգու բղխուածքը. և կարելի՞ է թոյլ տալ, որ մի ազգ մատենագրութիւն չունենալով, համարձակվի մտածել թէ ինքը ևս լուսաւոր ազգերի կարգումն էր աշխարհի երեսին, կամ թէ նորա գոյութիւնը մի խորհուրդ ունէր, համեմատելով ընդհանուր մարդկութեան հետ:

Մեր սիրտը արիւնով է լցվում այս ճշմարտութիւնքը ասելու ժամանակ, որովհետև մի չար բաղդով այս րոպէիս այն տեղ ենք հասած, որ չենք կարող առանց մեր խղճմտանքը արատաւորելու ասել, թէ մեր ազգը ունի մատենագրութիւն: Ինչպէս թէ չունի մատենագրութիւն.

Վիեննացին այն տեղ, իւր կարծեցեալ իրաւասութիւնը Հայերի վերայ հաստատելու համար, բարձրաձայն գոռումէ, «չը վախնանք, չը վախնանք, աչքերս մատենագրութեան վերայ դարձնելու», որպէս թէ կար մատենագրութիւն և այն շատ, ծաղկած, Մխիթարեանց շնորհքով [1]:

Այդ Վիեննացու քարոզած մատենագրութիւնը դանակով կտրած բաժանած է ժողովրդից. դա ազգի հոգու բղխուածքը չէ, այլ մի գիմնկաւորված անձնաւորութիւն. իսկ այն մատենագրութիւնը, որ անքակտելի կապված չէ մի ազգի հոգու հետ, այն մատենագրութիւնը, որի մէջ իբրև հայելու մէջ չէ երևում ազգի կեանքը, նորա և ամենանուրբ գծագրութիւնքը. այդպիսի մի մատենագրութիւն, թող ներեն մեզ այսպէս ասել ճշմարտութիւնը, նման է ճեզվիթների կրօնաւորութեանը. . . . այդպիսի մատենագրութիւնը այնքան դաստիարակիչ կը լինի ազգին, որքան մի խորթ մայր օտարի զաւակներին:

Արդեօք մեր կողմից յանցանք չէ՞ր այսպէս ձայն տալ մեր հին մատենագրութեան վերայ. այս խնդիրը վճռելու համար կրկնումենք սոքանից յառաջ ասածներս, թէ մատենագրութիւնը բանականութեան պահարանն է. եթէ Հայոց ազգի անդամքը իւրեանց բանականութեան բղխուածքը կարող են մասնաւորել միմեանց այն լեզուով, որով յառաջ է գնացել մինչև այժմ մեր աշխարհական մատենագրութիւնը, ապա մեք դատապարտութեան արժանի ենք. իսկ եթէ դորա հակառակ, ժողովրդին անմօտենալի է այդ պահարանը, եթէ նա չունի բանալիք այդ փակած պահարանի համար և չէ կարող հասկանալ թէ ինչպէս էր իւրեանից յառաջ ազգի բանականութիւնը, եթէ նա մի հոգևոր շինութիւն չէ կարող ստանալ նորանից, ինչ յանցանք է ասել, թէ մատենագրութիւնը դանակով կտրած բաժանած է ժողովրդի կեանքից, ուրեմն ինչ յանցանք է ասել, թէ ժողովուրդը չունի մատենագրութիւն, որի մէջ երևէր նորա կեանքը, նորա երեսի և ամենանուրբ գծագրութիւնքը. ինչ յանցանք է ձայն տալ մեր հեղինակներին, թէ պիտոյ էր հրաժարվելով հնախօս հայկաբանի ունայն փառասիրութենից, աշխատել կենդանի ժողովրդի կենդանի բարբառը մշակելու, որով անտարակոյս յառաջ կ'երթար մեր ազգի լուսաւորութիւնը, և թէ վերջ ի վերջոյ պիտոյ էր հասկանալ, թէ մատենագիր հեղինակը գործ ունի ոչ թէ մեռած գնացածների հետ, այլ այժմեան կենդանի ազգի հետ, որի կեանքի պայմանները լինելով ամենևին այլայլված ու փոփոխված, ուրեմն

[1]) Հիւսիսափայլի հետևեալ համարների մէջ կը հրատարակենք մեր հայեացքը Մխիթարեանց, վերայ կը քննենք նոցա գործունէութիւնը և սորա շարժառիթքը. յետոյ ցոյց կը տանք այդ միաբանութեան յարաբերութիւնը դէպ ի մեր ազգը:

և զորա յայտարար ձևերը, որոնց մինը և առաւել գլխաւորը լեզուն է, որ պիտի յարմարվի կեանքի որպիսութեանը:

Ամեն մարդ գիտէ, որ Լուդովիկոս տասն և չորսերրորդի օրերում գործածական զգեստները և հագուստները այժմ ոչ ոք չէ կրում, ըստ որում հնացած ու անպատշաճ էր երևում. ինչ ենք ասում Լուդովիկոս տասն և չորսերրորդի օրերում. տարուց տարի նորաձևութիւնը հարկադրումէ մեզ բաց ձգել այն զգեստը, որ մի, երկու տարի յառաջ հագած էինք, և պատրաստել տալ մեր համար այնպիսի զգեստ, որ առ հասարակ կրումէին մեր ժամանակակիցքը. եթէ նիւթական զգեստը այսպէս, ապա ինչ զարմանք, որ և մտքի զգեստը, որ լեզուն է, այդքան դարաւոր ժամանակների մէջ պիտոյ է փոփոխված լինի. լեզուն ենք ասում, որ մի կենդանի, հոսանուտ բան լինելով, համարեա թէ ամենայն րոպէ փոփոխութեան և նորոգութեան տակ է:

Մեր խղճմտանքը մաքուր է. և մեք հետևելով մեր խղճի ու բանականութեան առողջ թելադրութեանը, պարտականութիւն ենք համարում մեր վերայ հրապարակով քարոզել, թէ նոր ահա բացվումէ կենդանի ժողովրդի կենդանի բարբառի արշալոյսը:

Այժմ ծանօթացնենք մեր ազգը գերապատիւ Նազարեանցի Նոր հայախօսութեան հանդէսի հետ, որի առաջին հատորը, ինչպէս վերևումը ասացինք, բաւական վաղուց արդէն դուրս եկած լինելով, երկրորդը ևս այս օրերումս դուրս կը գայ, մեր ժողովրդական աղքատին բայց հարազատ և բուն մատենագրութիւնը ճոխացնելու համար:

Առաջին հատորը, որի վերայ է այժմ մեր խօսքը, ազգի փոքր ի շատէ գրագէտ բազմութեան և զարգացած մանուկների համար, է մի ընտիր, պատուական գիրք ընթերցանութեան: Նորա միջի յօդուածքը բազմօրինակ և զանազան նիւթերի վերայ լինելով, տարակոյս չը կայ, որ ամենայն ընթերցող կարող էր քաղել նոցանից օգտաւէտ ուսումն և քաղցր, ազնիւ զբօսանք: Այդ խորհրդով տպած Եւրոպական գրքերից ոչ մինի մէջ չեն գտանվում այդպէս մի տեղ ամփոփված այդքան ընտիր և գեղեցիկ նիւթեր ընթերցանութեան համար, որքան այդ գրքի մէջ. պատճառ, աշխատասէր և բազմահմուտ հեղինակը ամենայն տեսակ եւրոպական ծաղիկներից, ճաշակագէտ մեղուի նման, հաւաքել է իւր գրքի մէջ առաւել ընտիր, առաւել պատուական հիւթերը:

Եւ Հայոց մանուկը, կամ թող ասել Հայոց ազգը, ինչ գրքի մէջ կարող էր տեսանել մի այդպիսի տեսակ տեսակ վայելքներով ճոխապէս զարդարած հոգևոր սեղան. քանի՜ քանի իմաստունների հանճարեղ, զօրաւոր, քաջասիրտ ասացուածք և խօսք. համեմաւոր զուարճութիւնք, սրամիտ, ազատօրէն և իմաստալից խօսուածք. քանի՜ զուարճալի զը-

րոյցներ, յիշատակի արժանի փոքրիկ պատմութիւնք, բարք ու վարք պատկերացնող կարճ պատմութիւնք, ապա զանազան խորհրդաւոր բանահիւսութիւնք, որ պարունակումեն իւրեանց մէջ ամենայն տեսակ իմաստալից և գրաւիչ և դաստիարակիչ նիւթեր, նմանախօսական խրատներ, զգուշացուցիչ և ահաւոր այլաբանական ակնարկութիւններ, զոր օրինակ բնութեան խրատը, սերմի հատիկները, կրոկոդիլոսը, Բրամինների ձորը, անապատ կղզին, կրկնապատիկ երդումը իւր անձը ուղղելու մասին, Թշուառական մարդու տարեմուտքը և այլն և այլն։

Սոցանով հերիքացել չէ հեղինակը. նա յանձն է առել Հայոց խելացի մանուկներին և ազգին պատմել մտաւորութեան արժանի գիտելիքը, որ պատկանումեն արդէն ուսումնական հանդէսին. այսինքն, աշխարհի կազմածի, երկրի բերքերի, շնչական, տնկական, և հանքական դասակարգերի մասին. այլև յիշեալ գրքի մէջ գտանումենք մեք բաւական երկար ու պարունակ թեթև ոճով գրած ճառեր այն բանի վերայ, թէ ինչ է մարդը, եթէ քննումենք նորա մարմնի կազմածը, փոքր ի շատէ հոգեբանական տեղեկութիւնք. վերջապէս մի բաւական մանրամասն ճառ բնութեան և նորա մէջ եղած երևոյթների վերայ. յետոյ բարոյական առածք, սկզբնական հիմունք, բարոյական խրատք և նկատողութիւնք։

Այդ մեծ աշխատութեան և բանագէտ գործակատարութեան վաստակը վերջաւորվումէ երկու գեղեցիկ ճառով, որոնց մինը է Սոկրատէսի վարքը և միւսը Քրիստափոր Կոլոմբոս, կամ յայտնագործութիւն Ամերիկայի. ճառեր, որ գրած էին բաւական վերին և ուսումնական ոճով. և ո՛ր փոքր ի շատէ հասկացող ու զգացող Հայը կարող էր առանց հոգիանալու և ջերմանալու և սիրտը շարժվելու կարդալ Ամերիկայի յայտնագործութեան նախերգանքը և վերջաբանը։

Գիտենք, Եւրոպայի կրիտիկոսքը սովորութիւն ունին մի գործի արժանաւորութիւն ապացոյցներով հաստատելու համար, զանազան հատուածներ դուրս գրել դորանից և դնել կրիտիկայի մէջ. բայց մեք հերիքանումենք ասելով, թող բանիմաց Հայերը ձեռք առնուն գերապատիւ Նազարեանցի գիրքը, և իսկոյն համաձայնելով հաստատելու են մեր փոքր ի շատէ ասածները։

Այժմ Հայոց մանուկը Ռուսաստանի մէջ կարող է առնուլ իւր ձեռքը մի գիրք և հոգեպէս զուարճանալ. և գերապատիւ հեղինակը, շատ յաջողութեամբ հասած լինելով իւր նպատակին, կարող է մխիթարվիլ, որ իւր աշխատութիւնը, իւր տարիներով չարչարանքի վաստակը դարձած է այս րոպէիս մի յաւիտենական գեղեցիկ արձան, որով պիտոյ է անմահանայ նորա միշտ գեղեցիկ անունը։

Լեզուն, որով գրուած է այդ գիրքը առաւել ճոխ է, առաւել հարուստ և առաւել մօտ կենդանի ժողովրդի բարբառին քան թէ հեղինակի այլ գրուածքը մինչև այսօր; և այս լեզուի օր ըստ օրէ աւելի մեծ քայլերով յառաջ գնալը բացայայտ է արդէն, եթէ համեմատենք մի մեանց հետ նոյն մատենագրի »Առաջին Հոգեղէն կերակուրը Հայոց երեխաների համար», «Վարդապետարանը Կրօնի», և այժմեան Նոր Հայախօսութեան հանդէսը։ Այո՛, ցանկանումենք առաւել ժողովրդացած տեսանել նորա լեզուն. պատճառ, տեղ տեղ աւելի մօտ է հին լեզուին քան թէ ժողովրդական բարբառին։ Բայց այս տեղ բառերը չեն միայն դժուարացուցիչքը, այլև մտքերը և հեղինակի անձնաւորութիւնը. չէ կարելի պահանջել, որ ամենայն մարդ մի կերպ խօսի, կամ թէ վերին կամ գեղեցիկ մտքեր բացատրվլին խաժամուժ ամբոխի անկապ ու կցկտուր լեզուի ձևերովը։

Ամենայն որ և իցէ լուսաւորեալ ազգերի մէջ, չը նայելով, որ մատենագրութիւնը ժողովրդական է, այնու ամենայնիւ հեղինակի գրածը, աւելի բարձր է, աւելի գերազանց է, քան թէ այն լեզուն, որ ժողովուրդը խօսումէր հասարակ կեցութեան մէջ։

Չէ. լինինք խելացի մեր պահանջողութենների մէջ. չը պահանջենք հեղինակից մի անկարելի բան. թող որ նա այնքան մեծ աշխատութիւն յանձն առած ու գլուխ բերած, այնքան յստակ և գեղեցիկ ոճով խօսելով իւր գրքի մէջ, այնու ամենայնիւ, այնքան համեստ է և բարեհոգի, որ չը կամի երբէք համարել իւր խօսելու ոճը »ամեն տեղ զուտ ոսկի, այլ հոգով չափ պատրաստ էր ուսանել իւրեանից լաւ խօսողներից», միայն թէ օր մի յառաջ, եթէ կան, հանդէս ելանէին այդ աւելի գեղեցիկ հայախօսքը, մեր ամեններիս մխիթարութեան ու դաստիարակութեան համար։

Ու հասարակ մեծ շնորհակալութեան արժանի բան է, որ գերապատիւ հեղինակը, իւր բազմապարունակ գրքի մէջ, այդքան հանդէս է բացել ժողովրդական լեզուին. իսկ թէ երբեմն ոչ հայաբար, այլ եւրոպէաբար բացատրել է իւր միտքը, դորա պատճառը կարծումենք այն, որ Հայոց ազգի ժողովրդական լեզուն մի անմշակ և անմարդացած լեզու լինելով չունի դեռ ևս այն բոլոր ձևերը, այն լօգիկաբար կապակից պարբերութիւնքը, որոնցով հարազատօրէն կարելի էր ամենայն եւրոպական գաղափար թափել հայերէնի մէջ։

Այո՛, կարծումենք, և այն հաստատապէս, որ մեր դարու հայ մարդը շատ և շատ բաների մասին գաղափարք չունենալով իւր մէջ, ի հարկէ չունի և դոցա յայտարար բառերը և ձևերը. և այդ պատճառով եթէ նա լսումէ անծանօթ գաղափարներ Հայոց աշխարհաբառ լեզուով և

եւրոպական լօգիկայի ազդեցութեան տակ լուսաբանած, սկզբունքը իհարկէ պիտոյ է նորան օտար թուէին դուրս, որովհետեւ Հայը ոչ գաղափարներին է տեղեակ եւ ոչ եւս ձեւերին. այսինքն դեռ եւս չը գիտէ նա խօսել, ուրեմն եւ չը գիտէ մտածել: Բայց այդ բանի մէջ մեղաւոր է միայն ազգի անկրթութիւնը, եւ ոչ հեղինակը, որ արդարեւ ունենալով իւր մէջ գաղափարներ, ունի դոցա համար եւ ձեւեր, առած նոյն իսկ ազգային լեզուի աղբիւրից եւ ոչ Թուրքից ու Թաթարից, ինչպէս ըստ մեծի մասին ժողովրդի բարբառն է:

Մեր յոյսը հաստատ է, որ այսպիսի հեղինակի գրչի տակ մեր ժողովրդական լեզուն կը ստանայ առաւել քաղաքացութիւն եւ օր ըստ օրէ կը մօտենայ իւր նպատակին — գեղեցիկ եւ ընտիր գործիք դառնալու ժողովրդի դաստիարակութեան համար:

Խաբուած չե՛նք, որ ազգը սիրով կ'ընդունէ այսպիսի մի գիրք, որ ընծայել է հեղինակը իւր ազգի զաւակների դաստիարակութեանը, որ եւ պիտոյ է շատ ձեռնտու լինէր դորան:

Մեք մեր կողմից, որպէս ազգի օգտին ճշմարտապէս ցանկացող, անպատմելի ուրախ ենք, որ ժողովրդական լեզուն ձեռք ու ոտք է ըստացել եւ մեր նոր մատենագրութեան աղքատիկ գանձարանի մէջ երեւումէ մտաւորական եւ կենսական շարժողութիւն:

Մեր առ ի սրտէ երախտագիտական շնորհակալութիւնը թող հաճի ընդունել գերապատիւ հեղինակը, որին հոգով չափ ցանկանումենք կարողութիւն եւ յաջողութիւն ապագայ աշխատութիւնների մէջ:

Քաղցր պարտականութիւն կը համարենք մեզ Հիւսիսափայլի գալոց ամսատետրակներից մինի մէջ խօսել այս պատուական աշխատութեան երկրորդ աւելի ճոխ հատորի վերայ, որ այս օրերումը դուրս է եկած տպագրական մամուլի տակից:

Մ. Նալբանդեանց:

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, համառակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս Въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*». Въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца, կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

---

Печатать позволяется. С. Петербургъ, Декабря 14-го, 1858 года.

*Цензоръ И. Лажечниковъ.*